

ՌԻԿԱՏ




# ԱՐԱՐԱՏԻ

Թիվ 3 (9), ապրիլ - մայիս, 2006 թ.



Քարահունց


**Ռադիոֆիզիկայի գիտահետազոտական  
ինստիտուտի (Երևան) Արագածի գիտական  
կենտրոն: Կարդացեք էջ 18 - 20 - ում:**



Գիտնականները քաղաքական գործիչներ չեն, որ ճաշեր ասեն, հանրությանը ճանաչելի դարձնեն իրենց անձնու անունը: Առհասարակ, ես դա չեմ սիրում: Գիտնական եմ, աշխատում եմ հայրենիքիս համար:

Իմ կյանքի կեսդարյա գիտական մի շարք ուղղություններում գերազանցել եմ համաշխարհային մակարդակը: Վերջին մի քանի տարիների ընթացքում այնպիսի նորարարություններ եմ արել, որ անգամ Ամերիկյան, Եվրոպայան, Ռուսաստանը չունեն: Միայն փոքրիկ Հայաստանն ունի. մենք՝ Ռադիոֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտը, աշխարհում մեծ համբավ ունենք. բազմաթիվ երկրներից մարդիկ են գալիս, որ տեսնեն մեր ռադիոաստղադիտական հզոր ու հսկա անտենան:

Պարիս Յերունի



## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Խմբագրական	էջ 1	
Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրների շուրջ...	էջ 2	Հայկ Դեմոյան
Էներգետիկ անվտանգությունը՝ պետական անվտանգության հիմք	էջ 3	Սարգիս Պարսամյան
Թուրքիան՝ էներգետիկ հանգույցի կենտրոնում	էջ 4-5	Արտակ Շաքարյան
Որտե՞ղ է Կովկասը և ովքե՞ր են հայերը	էջ 6	Հովհաննես Մելքոնյան
Հիմի՞ էլ լռենք հայեր, հիմի՞ էլ	էջ 7	Գրիգոր Ջանիկյան
Նեմեսիսը հարություն էր առել...	էջ 9	Հակոբ Մանջյան
Նրա հոգում փոթորկվում էր հայրենիքի սերը...	էջ 10	Լուսինե Թովուլյան
Վերծինե Սվազյանի «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» թուրքերեն	էջ 11	
«Մեծ ծրագիր 2006»-ը տապալվեց	էջ 12	Ժիրայր Քոչարյան
Գրողի պատգամն ու պատվիրանը	էջ 14	Գ. Ջ.
Թեոդիկի եղեռնապատումը. 2	էջ 15	Արթուր Անդրանիկյան
Հայաստանն ազգային գաղափարախոսություն չունի	էջ 16-17	Վիկտորյա Բուռնազյան
Գիտնական եմ ու աշխատում եմ հայրենիքիս համար	էջ 18-20	
Ամենաթանկ ժառանգությունը ազգային դաստիարակությունն ու ոգին են...	էջ 20-21	Նվարդ Բոդյան
Հայրենիքից չպետք է սպասել, հայրենիքին պետք է տալ	էջ 22	Նանե Սևան
Հայ առաքելական եկեղեցին որպես հայ ինքնության կրոնահոգեբանական ամրոց	էջ 23-24	Թամարա Վարդանյան
Ունենալ հայկական ծագում դեռ չի նշանակում լինել հայ	էջ 25	
Եկեղեցիների փոխհարաբերությունները	էջ 26	Վ. Գրիգորյան
Օքրո Օքրոյան. Աստված սեր է	էջ 27	
Արմենականություն և Հայք	էջ 28	Վարդան Նիկողոսյան
Բալենի	էջ 31	Հայկ Խաչատրյան
Նուբար Փաշա. Հուշատետր	էջ 32	Արշակ Գաբրիելյան
«Հաղթանակի ցուցահանդես»՝ Սասունցի Դավթի էպոսի թեմաներով	էջ 33	
Պիրիճեկ	էջ 34	Ջենմա Բաղդադյան
Վերադարձ Արևմտյան Հայաստան	էջ 35	Դիանա Մակինյան
Սէյրանի արցունքը Վանայ լճի ջուրերին ասելի դառն էր ու աղի	էջ 36	Հովիկ Մկրտչյան

Լրատվական գործունեություն իրականացնող «Ուխտ Արարատի» ՍՊԸ, հասցեն Կասյան 6/19, վկայական N-03A 069706, տրված 12.10.2005թ.

Տպաքանակը՝ 1000  
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

Համարի թողարկման պատասխանատու՝ Տիգրան Փաշաբեզյան

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» տպարանում, ստորագրվել է տպագրության՝ 07.05.2006

Խմբագրության հասցեն՝ 375010, Երևան, Ազաթանգեղոսի 7բ Հեռ. (37410) 52-51-90

Official periodical of "Oukht Ararat" LTD

EDITORIAL BOARD  
Responsible of the issue:  
Tigran Pashabezyan

Address: 375010, Yerevan, Agatangeghos 7b  
Tel. (37410) 52-51-90  
E-mail: oukhtaradi@yahoo.com

Գինը՝ 300 դրամ

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:

Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:



## ԽԱՆՔԱԳՐԱԿԱՆ

# ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՄ

Խնդիրը ատոմային ռուճր ունենալ-չունենալու մեջ է: Իրանյան ճգնաժամը գալիս է 1918-21թթ., երբ Ռուսական կայսրությունից անջատված Կովկասյան տարածքի մի մասը Անգլիան անվանակոչեց Ադրբեջան: Ռուսաստանից անկախացած երկրներն ու ժողովուրդները, ըստ եվրոգերտերությունների և բուլղարիայի Ռուսաստանի միացյալ ծրագրի, մեկ նոր ընդհանուր պետություն ստեղծելու համար պետք է միավորեին Թուրքիան, Իրաքի և Իրանի հյուսիսային շրջանները, Կրաստանը, Ադրբեջանն ու Հայաստանը:

Խանգարեց հայությունը՝ Արևելյան Հայաստանը: Քանզի Արևմտյան Հայաստանում դեռևս ընթացքի մեջ գտնվող ցեղասպանությունը չկարողացան տեղափոխել Արևելյան Հայաստան. որքան էլ բուլղարները օգնեցին Թուրքիային: Սարդարապատին հաջորդող Հայոց ինքնապաշտպանության երկու տարիների քառակողմ պատերազմը կասեցրեց ցեղասպանությունը Արևելյան Հայաստանում ավարտին հասցնելու եվրոպոլիտիկայի թուրք-բուլղարական ծրագիրը: Կիրառության դրվեց հայությանը խաբելու՝ խորհրդայնացման միջոցով Հայաստանը ծնկի բերելու տարբերակը: 1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական պայմանագրով Արևելյան Հայաստանը բռնազավթվեց ու մասնատվեց՝ իրական պայմաններ ստեղծվեցին ընդհանուր պետության կազմում Հայաստանը լուծարելու համար: Հաղթական և անկախ Ձանգեզուրը խոչընդոտեց: Խնդրի իրագործումը հետաձգվեց ևս 6-7 ամսով:

Դավադրությունը պետք է իրագործվեր Կարսի պայմանագիրը կնքելուց հետո՝ 1922-23թթ.: Ծրագրի առժամանակ դանդաղումը եղավ փրկարար: Խորհրդային Ռուսաստանում դեպքերի զարգացումը, ի տարբերություն Տրոցկի-Լենինի ծրագրի, հանգեցրին Խորհրդային Միություն ստեղծելուն: Այն արդեն չէր համապատասխանում արևմտյան գերտերությունների ծրագրերին:

Ասում են, թե իբր բուլղարական Ռուսաստանը դեռ թույլ էր, ուստի, ստիպված էր հանուն համաշխարհային հեղափոխության զոհաբերել հայությունն ու Հայաստանը: Սակայն, ամենևին էլ թուլության մասին չի խոսում 1921թ. փետրվարի 26-ի Ռուս-պարսկական պայմանագիրը, որտեղ ի տարբերություն մարտի 16-ի Ռուս-թուրքական «պարտվողական» պայմանագրի, Ռուսաստանը ագրեսիվ դերում էր: Ռուսաստանը իրեն սպառնացող վտանգի պարագայում իրավունք ուներ առանց տեղյակ պահելու զորքեր մտցնել Պարսկաստան: Ի դեպ, Պարսկաստանում գտնվող ցարական Ռուսաստանի զորքերը, ի տարբերություն Թուրքիայում (Արևմտյան Հայաստանում) գտնվող զորքերի, ոչ միայն 1917թ. չլուծարվեցին և դուրս չբերվեցին, այլև հետագայում վերանվանվեցին Խորհրդային Ադրբեջանի զորամիավորումներ և մնացին Պարսկաստանի հյուսիսային շրջաններում մինչև 1922թ.:

Եվրոմիության ընդհանուր քաղաքականությունը այս տարածաշրջանում փորձում է իրագործել և ավարտին հասցնել 1921թ. կիսատ մնացած ծրագիրը, այն է՝ ա) ընդհանուր պետության ստեղծումը, բ) Հայաստան պետության լուծարումը, և գ) հայության բռնի հայրենագրումը: Ամեն ինչ նույնն է: Փոխվել են միայն անունները, քաղաքական տերմինները: Եթե հնում կոչվում էր եվրասիական կամ Կովկասյան երկրների ֆեդերացիա, հիմա՝ Կովկասյան ընդհանուր տուն, ընդհանուր պետություն: Վերջերս էլ եվրոմիության հարևան երկրներ՝ հաջորդ փուլում Սևծովյան ընդհանուր պետության վերածվելու միտումով: Նախկին ֆեդերացիա հստակ ձևակերպումը փոխարինվել է ինտեգրացիա (ամբողջության վերականգնում) տերմինով: Հարց է, թե այդ ե՞րբ է Հայաստանը Թուրքիայի, Ադրբեջա-

նի ու Վրաստանի հետ եղել մեկ ամբողջական, որ հիմա էլ եվրոմիությունը ուզում է այն վերականգնել:

Հարկ է չմոռանալ, որ եվրոմիության աշխարհաքաղաքական համառության արդյունք էր 1-ին և 2-րդ աշխարհամարտերը՝ իրենց համամարդկային-գանգվածային ողբերգություններով ու աննախադեպ կործանումներով: Համաշխարհային տիրապետման արևմտյան չրադարող մոլուցքը ներկայումս մտել է խիստ ագրեսիվ և անկանխատեսելի փուլ: ԽՍՀՄ-ի դեկավարելի ինքնափուլում գործընթացը վստահություն և ոգևորություն է առաջացրել եվրոկոմիսարների շրջանում և ստեղծել այն համոզումը, թե հնարավոր է կովկասյան ծրագրի իրագործման երրորդ փորձը հաջողությամբ պսակել: Ակնկալվող կայծակնային հաջողությանը սակայն խանգարեցին Չեչնիան, Աբխազիան, Հյուսիսային Օսիան և Հայկական Արցախը: Ամբողջ Կովկասով մեկ զինաթափված հայությունը ոչ միայն չպարտվեց, այլև՝ հաղթեց: Չօգնեցին անգամ բնական և արհեստական աղետները՝ շրջափակումը, երկրաշարժը, մուրը, ցուրտը...

Ներկայումս իրերի դրությունը, գլխավոր հարվածի ուղղությունը, հայությանն ու ՀՀ-ին և ԼՂՀ-ին սպառնացող առաջիկա վտանգները հասկանալու և ճիշտ կողմնորոշվելու համար, պատմաքաղաքական այս լուսի տակ է, որ պետք է ընկալենք 1985-ից առ այսօր Կովկասում, նաև ՀՀ-ում և ԼՂՀ-ում ընթացող աշխարհաքաղաքական և ներպետական գործընթացները: Այդ թվում՝ 1987թ. Վարդգես Պետրոսյանի «Կրակե շապիկը», 1990-92-ին ՀՀ-ի թուրքամետ կեցվածքը, Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը, եվրոքաղաքականության համար անսպասելի Հայոց Բազկի ու Ոգու հաղթանակը, Ադրբեջանին վերջնական պարտությունից փրկելու մեր «առաջարկած» 1994-ի հրադադարը, դրան հաջորդող, 1995-ի քիչ թե շատ «առողջ» և սակայն ոչ լիարժեք ՀՀ Սահմանադրությունը: Արևմտյան, իբր ազատականացման հանցագործ պատվերի իրագործումը, հովհարային մթի քողի տակ երկրի արտադրական ամբողջ հարստության ալան-թալանը, ՀՀ Ազգային Հարստության ոչ հովհարային մսխումն ու փոշիացումը:

Ի դեմս Հայոց համահավաք կամքի՝ Հայաստանի Անկախության Հռչակագրի, ՀՀ Անկախությունն ու Ինքնիշխանությունը, ազգային անվտանգությունը, ազգային արժանապատվությունն ու բարոյականությունը ժողովրդից աննկատ, այլոց զիջելու նախապատրաստական քայլեր են արվում հիմա էլ իբր հանուն ժողովրդավարության ու մարդու իրավունքների: ՀՀ Սահմանադրության փոփոխության անվան տակ կատարվում է սահմանադրական եվրոագրեսիա՝ ժողովրդին խաբելու և ապակողմորոշելու ՀՀ-ԵՄ հանցագործ համագործակցություն, ՀՀ օրենքները եվրոպական երկրների կողմից իսկ մերժված ԵՄ Սահմանադրությանը համապատասխանեցնելու՝ նախադեպը չունեցող միջազգային ցինիզմ, ժողովրդավարության անվան տակ ժողովրդավարությունը թաղելու, մարդու իրավունքների պահանջով ՀՀ-ում յուրաքանչյուր քաղաքացուն լիովին իրավազրկելու, կոռուպցիայի դեմ պայքարելով էլ ՀՀ իշխանավորներին օրենքով պաշտպանված ու լիովին կոռումպացված դարձնելու եվրոտեխնոլոգիաների իրագործում:

Հարկ է նշել սակայն, որ 2003-ին ժողովրդի կողմից մերժված ՀՀ Սահմանադրությունը, հակառակ 2005-ի համաժողովրդական բոյկոտի, անցած համարելու եվրոհանգստությունը խախտու է, քանզի եվրոկոմիսարները լավ գիտեն, որ այն, թե՛ ներպետական, թե՛ միջազգային առումներով օրինական չէ, քանզի ամբողջապես հակա-



# ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԻՄՆԱԽՆՂԻԻ ՇՈՒՐՋ ՔԱՐՈՉՁՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱԿԱՔԱՐՈՉՁՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Տեղեկատվական անվտանգության ապահովումը ժամանակակից աշխարհում պետությունների ու ազգերի գոյապահպանման և արդյունավետ կենսագործունեության ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկն է: Դրա բաղկացուցիչ և հիմնական տարրերից է հանդիսանում գրագետ կազմակերպված և լայնածավալ կիրառում ունեցող պետական քարոզչությունը՝ ուղղված տվյալ երկրի համար կենսական հարցերի շուրջ ձեռնտու միջազգային, ինչպես նաև ներհասարակական կարծիք ձևավորելուն:

Ժամանակակից աշխարհում քարոզչության իրականացման ժամանակ կարևոր դեր և նշանակություն ունի տեղեկատվական պատերազմների (ՏՊ) գրագետ կազմակերպումն ու իրականացումը: Ներկայումս աշխարհում ընթացող զարգացումները գալիս են վկայելու տեղեկատվական պատերազմի խաղացած կարևոր դերի մասին՝ այն դարձնելով արտաքին և ներքին քաղաքականության իրականացման կարևորագույն բաղադրիչներից մեկը:

ՏՊ-ի կարևորագույն բաղադրիչը, եթե չասենք հիմքը, հոգեբանական պատերազմն է, որն ունի իր կիրառությունը և դրա առանձնահատկությունները թե՛ խաղաղ, թե՛ պատերազմական գործողությունների ժամանակ: Հոգեբանական պատերազմների հիմնական նպատակը հակառակորդ կողմի վրա զանգվածային հոգեբանական ներգործությունն է:

1988-ից սկսած Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ թե՛ ադրբեջանական, թե՛ հայկական կողմերից իրականացվում են տարատեսակ քարոզչություն և հակաքարոզչություն: Անցած տարիների ընթացքում երկուստեք տարվող «քարոզչական պատերազմների» և դրանց արդյունքների նախնական ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ ադրբեջանական կողմը, թեև ունի քիչ թե շատ մշակված մոտեցում այս ոլորտում, այդուհանդերձ, չի կարողանում համոզիչ և լիակատար կերպով ձևակերպել իր տեսակետները, չնայած քարոզչական աշխատանքի ինտենսիվությանն ու պետական հովանավորությանը: Սակայն ասվածը չի վկայում այն մասին, որ ադրբեջանական քարոզչությունը չի արձանագրել որոշակի արդյունքներ՝ առաջին հերթին Ղարաբաղյան հակամարտությունում սեփական տեսակետների ամրագրման առումով:

Ադրբեջանական կողմի քարոզչական ակտիվությունը փորձում է ստեղծել իրեն ձեռնտու խեղված մի պատկեր՝

հիմնախնդրի կոնկրետ բաղադրիչների շուրջ հետևողականորեն ներկայացնելով հետևյալ ելակետերը.

1. Հայաստանի՝ որպես ագրեսիվ երկրի ներկայացում, որը զավթել է Ադրբեջանի տարածքների 20 տոկոսը, իսկ 1 մլն ադրբեջանցի դարձել է փախստական,
2. Հայկական երկրորդ Հանրապետության ստեղծման բացառում՝ հղումներ կատարելով առաջնային ինքնորոշման ձևակերպմանը,
3. Հայկական ահաբեկչության ակտիվ լուսաբանում և դրա արդյունքում Ադրբեջանի՝ որպես միջազգային ահաբեկչական ցանցի հանգրվանի քողարկում,
4. Հայաստանի՝ որպես շրջափակման արդյունքում փլուզված տնտեսություն և կիսաքաղց բնակչություն ունեցող երկրի, կերպարի մատուցում՝ հիմնականում ներքին քարոզչության նպատակով,
5. Հայկական բանակի հանդեպ ադրբեջանական բանակի ռազմական գերիշխանության թեզի ամրագրմանն ուղղված ջանքեր,
6. Հայոց ցեղասպանության պատմական իրողության հերքում և այս ոլորտում թուրքական քարոզչության հետ համատեղ տեսակետների մշակում,
7. Հայերի կողմից ադրբեջանցիների «ցեղասպանություն» իրականացնելու մտացածին թեզի զարգացում՝ երկրի առաջին դեմքերի ընդունած օրենսդրական ակտերի միջոցով:
8. Ղարաբաղյան հակամարտության՝ որպես կասպյան նավթի և գազի պաշարների արտահանմանը խոչընդոտող և տարածաշրջանի կայունությունը վտանգող գործոնի քարոզում:

Հայկական կողմի համար կարևոր է ուրվագծել քարոզչական և տեղեկատվական պատերազմներում իր ելակետերը, որոնք նվազ խոցելի և հիմնավորված պետք է դարձնեն հիմնախնդիրը միջազգային հանրությանը ներկայացնելու ընթացքում: Այդպիսի համակարգված աշխատանք կազմակերպելու համար անհրաժեշտ է լրջագույն ուշադրություն դարձնել պետական ռազմավարական հետազոտությունների կենտրոնների ստեղծմանը, քանզի ներկայումս դրանց քանակը սահմանափակ է:

## ՀԱՅՎ ԴԵՄՈՅԱՆ Պատմական գիտությունների թեկնածու

սում է Հայաստանի Անկախության Հռչակագրին: Ինքնախաբեության, մոլորության մեջ են միայն ՀՀ իշխանությունները, որն էլ, որպես իրողություն, արժեք չունի, քանզի հայտնի է բոլորին՝ թե՛ ներսում, թե՛ դրսում, որ ՀՀ-ում իրական իշխանությունը իրագործում են ոչ թե կոճակ սեղմողները, իրամանագրեր ու որոշումներ ստորագրողները, այլ նրանց ապարատներում ներդրված եվրոգործակալները: Ասել է թե՛ իշխանության համար դաժան ընտրապայքարը ընդամենը անձնական՝ մանր-մունր խնդիրներ լուծելու համար է: Մնացյալը՝ ժողովրդի ու պետության հանդեպ ստանձնած ծանր լուծը, կքաշեն դրսում՝ եվրոգրասենյակներում:

Այլ է, որ պատասխանատվությունը այդուհանդերձ կրելու են իրենք՝ ՀՀ իշխանավորները, որքան էլ որ համոզված լինեն, թե իբր 2005-ից հետո սահմանադրորեն, այն էլ «ցմահ», ազատված են դրանից: Ինքնամոլորություն է դա: Քանզի Հայոց անցյալի ու ներկայի պատմությունից՝ յուրա-

քանչյուրը, լինի իշխանավոր, թե իշխանության ձգտող, անհանգստության մի խոր անկյունում քաջ գիտակցում է, որ ազգային-պետական և ոչ մի հանցագործություն, առավել ևս երկրի անկախությունն ու ինքնիշխանությունը օտարին հանձնելը, ժողովրդից իր բարոյահոգևորը բռնի օտարելը, ազգային արվեստն ու գիտությունը անկարող դարձնելը, դաստիարակությունն ու կրթությունը խաթարելը, ՀՀ կենտրոնական բանկի արտարժույթային խաղերը, հացի խնդիրը այլոց երկրներում լուծելու՝ գաղթական դարձնելու բոլոր փորձերն ու գործողությունները անպատիժ չեն մնում:

Հայոց ապրիլների, մայիսների դասերը ՀՀ իշխանավորներին հուշում են ինքնամոլորությունից ձեռքազատվել, իսկ ժողովրդին՝ համահավաք ու միական լինել՝ պատրաստ ինքնապաշտպանության, համախմբման՝ դիմագրավելու, հաղթահարելու համար ներպետական ու միջազգային բոլոր առկա և առաջիկա ուղեգծությունները:



# ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Աշխարհում տեղի են ունենում գործընթացներ, որոնք կապված են էներգակիրների վերաբաշխման հետ: Դրանք չեն շրջանցել նաև մեր տարածաշրջանը: Վառ ապացույցը գազի թանկացումն էր Ռուսաստանի կողմից: Այնուհանդերձ, որ օգտագործվեցին տնտեսական լծակներ քաղաքական խնդիրներ լուծելու համար: Արդյունքում ՀՀ-ն կորցրեց Հրազդանի 5-րդ բլոկը: Այսպիսի քաղաքականությունը կարող է վտանգել մեր պետական անվտանգությունը:

ՀՀ Բաշխիչ ցանցերը ունեն տարբեր լարումներով բազմաթիվ տրանսֆորմատորային ենթակայաններ, օդային և կաբելային էլեկտրահաղորդման գծեր: Հայաստանի էներգետիկական հաշվեկշռում են գտնվում «բարձրավոլտ» էլեկտրական ցանցերը, որոնք ունեն 220 կՎ տրանսֆորմատորային ենթակայաններ և օդային էլեկտրահաղորդման գծեր: Իսկ խոշոր կայաններից, որոնք ամբողջությամբ գտնվում են մեր պետության վերահսկողության տակ, մեզ են մնացել միայն Երևանի ՋԷԿ-ը և Որոտանի կասկադը:

Սեփականաշնորհումը արդարացվում էր այն պատճառաբանությամբ, որ այդ գործընթացը համարվում էր մեր պետության էներգետիկ անվտանգության և անկախության սկզբունքներից մեկը: Դրա արդյունքում պետք է ապահովվեին ներդրումներ և համակարգի կայուն զարգացում: Սակայն, ինչպես ցույց տվեցին «Հայկական էլեկտրական ցանցեր»-ի դեմ կատարվող դատական գործերը, ընկերությունը չէր կատարել ներդրումային և հարկային պարտավորությունները՝ ավելի վատթարացնելով էլեկտրական ցանցերի տեխնիկական վիճակը: Թեկուզ վերոհիշյալ ընկերությունը որպես ձեռքբերում նշում է կորուստների իջեցումը 25%-ից մինչև 16%-ը, միևնույն է, դա հեռու է ցածր ցուցանիշ համարվելուց և մի շարք պետություններում ունի հետևյալ տեսքը. Ռուսաստան և Թուրքիա - 11%, ԱՄՆ և Մեծ Բրիտանիա - 8%, Գերմանիա - 4,5%:

2005-ին բաշխիչ ցանցերը վաճառվեցին Ռուսաստանի Դաշնության պետական սեփականություն հանդիսացող «Ռուսաստանի համընդհանուր էներգետիկական համակարգեր» («ՃԱԻ - ԱՅՆ») ընկերությանը:

Հրազդանի ՊՇԷԿ և Սևան - Հրազդան կասկադը, համապատասխանաբար 1110 և 584 ՄՎտ հզորություններով, նույնպես նշված ընկերության սեփականությունն են: ՀՀ «էներգետիկայի մասին» օրենքը 27-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսում է «Գործունեության լիցենզիա ունեցող որևէ անձի կանոնադրական կապիտալում 25% և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերեր կամ փայտերը առանց հանձնաժողովի թույլատվության իրավունք չունի ձեռք բերել նույն կամ մեկ այլ գործունեության լիցենզիա ունեցող անձի 25% և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայտամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25% և ավելի բաժնետոմսեր»:

Այստեղից հետևություն, որ չարաշահվել է սույն օրենքը: Բացի նրանից, որ չարաշահվել է օրենքը, առկա են նաև հետևյալ մտահոգությունները.

1. Բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման օգտակար գործողության գործակիցը գրոյից շատ բարձր չէ, իսկ վնասակար գործողության գործակիցը մեկից շատ փոքր չէ: Այսպես, օրինակ, եթե ընկերության եկամուտը 1 ԿՎտ-ժ-ի համար կազմում է 9,2 դրամ (իրենց հրապարակած տվյալներով), ապա 1 տարվա ընթացքում այն կկազմի մոտավորապես 64 մլրդ դրամ (800.000 x 9,2 x 8760): Հարց է առաջանում եկամտի ո՞ր մասն է ներդրվել բաշխիչ ցանցերի զարգացման համար: Նույն հարցադրումը կարելի է կատարել նաև Ռուսաստանի պետական սեփականությունը հանդիսացող էլեկտրական կայանների վերաբերյալ: Իրականում էներգետիկ ձեռնարկությունների սեփականաշնորհումը չի ապահովել անհրաժեշտ ներդրումներ և էներգետիկ համակարգի կայուն զարգացում:



2. Էներգետիկ համակարգի կարևոր կառուցվածքները (էներգակիրներ, էներգիայի արտադրություն և բաշխիչ ցանցեր), հանդիսանալով Ռուսաստանի Դաշնության պետական սեփականություն, վտանգում են էներգետիկ անվտանգությանը, խոցելի դարձնում մեր պետական անվտանգությունն ու անկախությունը:

3. Ունենալով Ղարաբաղյան չկարգավորված հակամարտություն և Հայ դատի արդարացի լուծման խնդիր՝ անհրաժեշտ է ունենալ զարգացած տնտեսություն և առողջ հասարակություն: Էներգետիկ համակարգը, լինելով ռազմավարական նշանակության բնագավառ, իր անկախությամբ ապահովում է պետության տնտեսական և քաղաքական անվտանգությունը: Մեր դեպքում խախտված է էներգետիկ համակարգի անվտանգությունը, որն իր մեջ պարունակում է քաղաքական, տնտեսական, սոցիալական ռիսկեր:

Ցավալի է գիտակցել, որ պետական նմանօրինակ մոտեցումը ոչ միայն ապագային է այլև հակաօրենսդրական: Հավելենք, որ ՀՀ էներգետիկական պետք է ծառայի ի շահ պետության ու ժողովրդի, և պետք չէ հանդիսանա մեկ այլ պետության սեփականություն, ու կառավարվի նրա կողմից, առավել ևս, որ մենք ունենք այն ներուժն ու ռեսուրսները, որոնցով կարող ենք ղեկավարել և զարգացնել այն...

**ՍԱՐԳԻՍ ՊԱՐԱՍՅԱՆ**  
**ՀՊԾՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ղեկավարամենտի ուսանող**



# ԹՈՒՐՔԻԱՆ՝ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

«Չկան մշտական թշնամիներ կամ բարեկամներ. կան մշտական շահեր»: Այս ասույթը չի կորցրել իր այժմեականությունը նաև այսօր: Աշխարհի երկրները ղեկավարվում են շահերով, և այսօր շատ պետություններ վերանայում են իրենց անվտանգության հայեցակարգերը՝ համագործակցության մեջ մտնելով վաղեմի թշնամիների հետ:

Թուրք-ռուսական համագործակցությունն այսօր ոչ ոքի չի զարմացնում, մինչդեռ ընդամենը տասնամյակներ առաջ անցկացված հասարակական կարծիքի հարցումները փաստում էին այն մասին, որ երկու հասարակություններում էլ իրար վերաբերվում էին վերին աստիճանի բացասական ու թշնամաբար: Ռուսների համար թուրքերը «արյունարբու էին ու վայրենի», ռուսները թուրքի աչքերում ունեին նույն հայելային պատկերը: Մինչդեռ այսօր թուրքական ներդրումները Ռուսաստանում հասնում են շատ մեծ չափերի, իսկ թուրք-ռուսական առևտրի ծավալը գնալով աճում է: Այս համգամաքից բացի, Ռուսաստանը նպատակ ունի սերտացնել հարաբերությունները Թուրքիայի հետ և օգտագործել վերջինիս աշխարհագրական հարմար դիրքը, որը ռազմավարական կարևորություն ունի այսօրվա տնտեսության տեսակետից:

Իրավամբ, կարող ենք ասել, որ արդեն երկար ժամանակ է, ինչ աշխարհում գերակայում է աշխարհատնտեսական տրամաբանությունը: Նախկինում Թուրքիայի աշխարհագրությունը կարևորվում էր միայն ռազմական տեսակետից, այն է՝ այդ երկիրը գտնվում էր «չարի կայսրություն» խորհրդային Միության անմիջական սահմանին և հույժ նշանակալի էր ռազմակայանների, լսակայանների տեղադրման առումով: Դեռ այս հանգամանքն էլ Թուրքիային դարձրեց ՄԱԿ-ի հիմնադիր անդամ, այնուհետև ՆԱՏՕ-ի անդամ և այդ կազմակերպության հարավարևելյան թևի կարևորագույն երկրներից մեկը: Բացի այդ, Ստամբուլը համարվում էր խորհրդային սևծովյան նավատորմն արգելակող խցան, որը կարող էր ամեն պահի փակել սևծովյան նեղուցները՝ այն դարձնելով լիճ:

Սակայն Սառը պատերազմի ավարտից հետո ամեն ինչ փոխվեց: Ընդհանուր առմամբ, հենց Սառը պատերազմի ավարտն էլ նշանավորեց աշխարհատնտեսական մտածելա-

կերպի գերակայությունը: Ժամանակակից ռազմական ու տիեզերական տեխնոլոգիաներն այնքան են կրճատել ժամանակի ու տարածության հասկացությունները, որ Մոսկվայի հեռախոսագրույցները լսելու համար ամենևին էլ պետք չէ հատուկ սարքեր տեղադրել նրա սահմանին, այդ գործն իրենց վրա են վերցրել արբանյակները, մասնավորապես՝ հայտնի «Էշելոն» համակարգը, որը, շնորհիվ իրար հետ միացված մի քանի արբանյակների, վերահսկում է աշխարհի թվային բոլոր տեղեկատվական հոսքերը՝ լինեն դրանք հեռախոսագրույցների, էլեկտրոնային փոստի կամ էլ SMS հաղորդագրությունների տեսքով: Թուրքիան կարծես թե կորցրեց իր նշանակությունն Արևմուտքի համար, և 1990-ականների առաջին կե-



սին Անկարան խուճապահար փորձում էր նախաձեռնել ինչ-ինչ քայլեր իր կարևորությունն ընդգծելու համար:

Խնդրի լուծումն եկավ Արևմուտքից, որն իր էներգակիրների պակասը ցանկանում էր բավարարել հետխորհրդային երկրների հարուստ պաշարներով, մասնավորապես Ադրբեջանի նավթագազային դաշտերով: Դիմք դրվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի շինարարությանը, որը պետք է էներգակիրներ մատակարարի Արևմուտքին՝ շրջանցելով Ռուսաստանն ու Իրանը, իսկ թուրք-ադրբեջանական պնդումների արդյունքում նաև ԳԳ-ը: Կարևոր է նաև այն, որ ադրբեջանական նավթը հասնելու է ամմիջապես Ջեյհան նավահանգիստ, որը գտնվում է Միջերկրական ծովի ափին, ինչով մեծապես կթեթևանա նաև սևծովյան նեղուցների ծանրաբեռնվածությունը:

Այսպիսով, Անկարան հայտնվեց Արևելք-Արևմուտք էներգետիկ խաչմերուկում և փորձում է վերագտնել իր «հանգուցային երկրի» դերը: Նախաձեռնվեցին մի քանի այլ ծրագրեր, որոնք պետք է ավելի ամրապնդեն

Թուրքիայի դերը տարածաշրջանում և շեշտեն նրա կարևորությունը: Այս առումով, Անկարայի համար կարևոր է իր նշանակության ընդգծումը եվրամիության համար, քանի որ Թուրքիան հույս ունի ընդգրկվել եվրոպական ընտանիք և հավատացած է, որ էներգետիկ առումով եվրոպայի հետ առավել սերտ կապերը միայն կխթանեն լիիրավ անդամակցության գործընթացը:

Արդի աշխարհում աշխարհատնտեսական մտածելակերպի գերակայությունը գիտակցվել է նաև Մոսկվայում: Դա է վկայում այն փաստը, որ Ռուսաստանը հայտարարել է, որ այսուհետ իր արտաքին քաղաքականության հիմնական լծակը լինելու են ոչ թե իր զորքերը, այլ իր էներգակիրները: Մոսկվան մեծապես օգտվում է էներգակիրների բարձր գներից, մի քանի այլ մատակարարների, մասնավորապես Իրանի ժամանակավոր անգործունակությունից և արագացում է հաղորդել իր ածխաջրածնային ծավալման էներգետիկ հսկա «Գազպրոմը» դարձել է ռուսական ազդեցությունը տարածող շատ ավելի լավ միջոց, քան ժամանակին ռուսական ռազմանավերն էին: Այսօր Մոսկվայի հիմնական նպատակն է եվրոպական շուկան: Դա քաջ գիտակցող Ուկրաինան փորձ կատարեց շահագործել իր՝ միակ երթուղի լինելու հանգամանքը, ինչը, սակայն, բերեց նրան, որ Ռուսաստանն սկսեց զարգացնել այլընտրանքային ուղիներ: Դրանցից մեկն է Բալթիկ ծովի հատակով տարվող խողովակաշարը, որը դուրս է գալու ուղիղ Գերմանիայի ափ, մյուսը՝ թուրքական ուղին է:

Սևծովյան նեղուցների գերծանրաբեռնվածությունն ու Անկարայի դժկամությունը դրանք օգտագործելու հարցում բերեցին նաև մեկ այլ նախագծի իրականացմանը: Ռուսաստանի ու Թուրքիայի միջև՝ Սև ծովի հատակով, անցկացվեց «Երկնագույն հոսք» գազամուղը, որով ռուսական բնական գազը հասցվում է Թուրքիայի հյուսիսում գտնվող Սամսուն քաղաք: Համաձայն ռուս-թուրքական նախնական պայմանավորվածության՝ «Երկնագույն հոսքի» մատակարարած բնական գազի մի մասը Սամսուն քաղաքից տարվելու է թուրք-հունական սահման, այնտեղից միանալու է հունական ցանցին, որտեղից էլ անցում է կատարելու Եվրոպա: Այս նախագիծը ձեռնտու է թե՛ Ռուսաս-



տանին, որն այլևս մեծ կախում չի ունենա Ռևիրաինայից, թե՛ Թուրքիային, որը ևս մեկ անգամ կընդգծի իր «հանգուցային» լինելը:

Սակայն այսօրինակ զարգացումն ամենևին չի համապատասխանում ամերիկյան շահերին, որը չի ցանկանում տեսնել ռուսական գազից կախում ունեցող Եվրոպա: Այսօր արդեն Ֆինլանդիան 100%-ով ներմուծում է ռուսական բնական գազ, Գերմանիայում ռուսական բնական գազի չափաբաժինը հասնում է 44%-ի, Իտալիայում ու Ֆրանսիայում՝ 25%-ի, Թուրքիայում՝ 75%-ի: Եվրոպայում ռուսական մենատիրության դեմն առնելու վերաբերյալ միտքը բազում անգամներ արծարծվել է ամուղղակի ակնարկների մակարդակով, իսկ վերջերս դա հստակորեն հայտարարեց ԱՄՆ-ի պետքարտուղար Բ. Ռայսը Աթենք ու Անկար կատարած շրջայցերի ժամանակ: Ռայսը հստակորեն պահանջեց Յունաստանից ու Թուրքիայից Եվրոպա գազ փոխադրելու հարցում հրաժարվել Ռուսաստանի հետ համագործակցությունից՝ փոխարենն առաջարկելով Եվրոպական գազային ցանցին միացնել Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը, որը համաձայն նախնական հաշվարկների՝ կգործարկվի արդեն հաջորդ տարի: (Ամենայն հավանականությամբ այս թեման քննարկվել է Բուշ - Ալիև հանդիպման ժամանակ):

Թուրքիան անշուշտ չի կարող անտեսել ԱՄՆ-ի նախագուշացումները, քանզի այդ երկրի հետ կապված է բազում տեսանելի ու անտեսանելի կապերով, սակայն հրաժարվել ռուսների հետ համագործակցությունից՝ նույնպես լավագույն հեռանկարը չէ: Այն հայտորեն, Անկարան դեռ որոշ ժամանակ կփորձի հակաճառել Վաշինգտոնին ու հնարավորինս ձգձգել Մոսկվայից հրաժարվելու պահանջի իրականացումը: Դա է վկայում նաև Թուրքիայի էներգետիկայի նախարար Զիլմի Գյուլերի արած հայտարարությունը, թե՛ «Այդ գիծը մեզ համար շատ կարևոր է: Խոսք չի կարող լինել դրանից հրաժարվելու մասին»:

Այդուհանդերձ, Անկարան մշակում է այլընտրանքային տարբերակներ: Համաձայն օրենս ընդունված որոշման՝ Թուրքիան ապագայում կկարողանա թե՛ բավարարել ամերիկացիների պահանջը՝ չտեղափոխել ռուսական գազը Եվրոպա, թե՛ ամեն դեպքում հանդիսանալ մերձակա տարածաշրջանում ռուսական գազի բաշխիչ-երկիրը:

Անկարան թե՛ Ավիվի հետ արդեն քննարկում է իրար միացված չորս խողովակաշար անցկացնել Թուրքիայից Իսրայել: Անկարան գնահատում

է այս նախագիծը որպես շատ կարևոր՝ իր ռազմավարական նշանակությունը տարածաշրջանում ընդգծելու տեսանկյունից: Սա նաև կամրայնի վերջին տարիներին թուլացած Թուրքիա-Իսրայել հարաբերությունները: Անկախ անցյալ տարիների զարգացումներից՝ Թուրքիան դեռ մնում է մահմեդական տարածաշրջանում Իսրայելի միակ գործընկերը, ինչով է կարևորվում է ԱՄՆ-ի համար:

Համաձայն նախնական պայմանավորվածության՝ առաջին խողովակաշարը տեղափոխելու է ռուսական, ադրբեջանական և դազախական բնական գազ, երկրորդը՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի նավթը, երրորդը՝ Թուրքիայի Մանավզաթ գետի քաղցրահամ ջուրը, իսկ չորրորդ խողովակաշարի միջով անց է կացվելու էլեկտրական գիծ, որը էլեկտրականություն է ներմուծելու Իսրայել: Այսպիսով, այս «գերխողովակաշարը» կանի առավելագույնը՝ լուծելու Իսրայելի թե՛ էներգակիրների և թե՛ խմելու ջրի հետ կապված խնդիրները, ինչով կչեզոքանան արաբական երկրների կողմից շրջափակման բացասական հետևանքները: Ինչևէ, այս նախագիծը գտնվում է դեռ քաղաքական քննարկման փուլում և այն կյանքի կոչելը կտևի մոտ տասը տարի, իսկ ժամանակը չի սպասում:

Կարելի է ենթադրել, որ Ռայսն, այնուամենայնիվ, հասել է Անկարայում ինչ-ինչ հստակ պայմանավորվածությունների ոչ միայն Իրանի խնդրում, այլև ռուսական գազի հարցում: Կարելի է մտաբերել նմանատիպ սցենարը ԱՄՆ-Հնդկաստան հարաբերություններում. ընդամենը մեկ տարի առաջ Վաշինգտոնն առաջարկեց Նյու Դելիին Հնդկաստանում կառուցել նորագույն տեխնոլոգիաներով սարքավորված մի քանի միջուկային էլեկտրակայան, եթե վերջինս համաձայնվի կասեցնել Իրան-Պակիստան-Հնդկաստան գազամուղի շինարարության վերաբերյալ բանակցությունները: Հաշվի առնելով վերջին ամիսներին Թուրքիայում բարձրաձայնվող հայտարարությունները խաղաղ միջուկային ծրագրեր նախաձեռնելու մասին՝ կարելի է ենթադրել, որ Վաշինգտոնը կարող է նմանատիպ առաջարկություն անել Անկարային՝ դուրս բերելով նրան Ռուսաստանից ու Իրանից՝ ներմուծվող էներգակիրների կախվածությունից:

Այս ամենին զուգահեռ ԱՄՆ-ը փորձում է, համենայնդեպս, ամմիջական վերահսկողություն սահմանել Ռուսաստանի գազային զարկերակներից մեկի՝ «Երկնագույն հոսքի» վրա: Այսպես, վերջերս հաճախ են հնչեցվում ԱՄՆ-ի պահանջները՝ թույլատրել

ամերիկյան մի քանի ռազմանավի մուտքը Սև ծով: Վաշինգտոնն այս տարօրինակ թվացող պահանջը սիրմավորում է տարածաշրջանում ստրկավաճառության, մաքսամեծության, գենքի ապօրինի վաճառքի և նման այլ խնդիրների հանդեպ վերահսկողություն սահմանելու անհրաժեշտությամբ: Սակայն, ամենայն հավանականությամբ, այս ծրագրում իրենց կարևոր տեղն ունեն հենց վերոհիշյալ խողովակաշարի հանդեպ վերահսկողություն սահմանելն ու այն պատանդի կարգավիճակում պահելը:

Բացի նրանից, որ սրան կտրակապես դեմ է Ռուսաստանը, Թուրքիան նույնպես հակաճառում է ԱՄՆ-ին պատճառաբանելով, որ նախ՝ դա կհակասի 1936թ. ստորագրված Մոնտրոյի՝ սևծովյան նեղուցներին վերաբերող պայմանագրին, ինչպես նաև իրավացիորեն նշում, որ ամերիկյան ռազմուժը տարածաշրջանում ավելորդ է, քանի որ Սև ծովում գոյություն ունի անվտանգության պահպանման BLASCKSEAFOR ձևաչափը, որի անդամ են ՆԱՏՕ-ի երեք երկրներ՝ Թուրքիան, Բուլղարիան և Ռումինիան: Ըստ ամենայնի, ԱՄՆ-ի այս նախաձեռնությունը չի հասնի հաջողության, քանի որ սևծովյան ավազանի երկրների մեծ մասը համար է ամերիկյան ռազմանավերի՝ ավազանում անցանկալի լինելու գաղափարին:

Այսպիսով, կարելի է ամփոփել, որ Թուրքիային և Ռուսաստանին որոշ ծավալուն նախագծերի շրջանակներում բավականին ձեռնտու է համագործակցությունը, ինչը չի համընկնում ԱՄՆ-ի ծրագրերի հետ: Ռուսաստանի վերջին ժամանակներս վարած հարձակողական քաղաքականությունն ստիպում է ԱՄՆ-ին՝ անցնել դիրքային հակահարձակման: Էներգետիկ խաչմերուկում, որի համար մղվում է այս պայքարը, հանգուցային դիրք է զբաղեցնում Թուրքիան, որը համաձայն իր ավանդական քաղաքականության՝ փորձում է երկու տերությունների բախումից լավագույնս օգտվել ու առաջ տանել իր շահերը: Ապագայում սպասվում է այս հարցի առավել սրացում, ինչը կարող է բերել տարածաշրջանում նոր զարգացումների: Այս առումով, առավել կարևորվում է ադրբեջանական բնական գազի դերը, որն Արևմուտքի համար կարծես թե միակ այլընտրանքն է՝ ընդդեմ իրանականի ու ռուսականի:

**ԱՐՏԱԿ ՀԱՔԱՐՅԱՆ**  
**Պատմական գիտությունների**  
**թեկնածու**



# ՈՐՏԵ՞Ղ Է ԿՈՎԿԱՍԵ ԵՎ ՈՎԻՔԵ՞Ր ԵՆ ՎԱՅԵՐԲԸ

Չանգվածային լրատվամիջոցներով հաճախ լսում կամ կարդում ենք «Հարավային Կովկասի երեք հանրապետություններ» բառակապակցությունը: Խորհրդային կայսրության տարիներին Հայաստանի Հանրապետությունը տեղադրում էին Անդրկովկասում, իսկ հիմա՝ Հարավային Կովկասում:

Հայաստանը Կովկասի մաս չի կազմում, իսկ հայերը կովկասցի չեն: Հայ ժողովրդի բնօրրան Մեծ Հայքն իր տարածքով համընկնում է այն երկրամասին, որն աշխարհագրական բոլոր քարտեզներում կոչվում է Հայկական լեռնաշխարհ, որտեղ ձևավորվել է հայ ժողովուրդը ու անցել հազարամյակներ հարատևած պատմական զարգացման բոլոր փուլերը: Հետևաբար՝ Հայաստանը Կովկասում չի կարող տեղադրվել, իսկ հայերը կովկասյան ազգ չեն կարող կոչվել:

Բայցևայնպես, հարց է ծագում, թե ո՞ր ժողովուրդներն են «կովկասյան ազգության անձինք», այսպես կոչված «Лица кавказской национальности»:

Փոքր Կովկասի լեռնաշղթան, որպես բնական պատնեշ, սահմանագատում է Հայկական լեռնաշխարհը Վրաստանից, իսկ Մեծ Կովկասի լեռնազանգվածը տարածվում է «յոթը սար ու ձոր» անդին՝ հեռու հյուսիսում: Ուրեմն, միամտորեն սխալվում է նա, ով հայերին վերագրում է կովկասյան ազգությունների հատկանիշներ, և մենք՝ հայերս, իրավունք չունենք նեղանալու աշխարհագրությունից ու ժողովուրդների պատմությունից «բոբիկ», դասերը չսերտած այդ մարդուց, քանզի կովկասցի կարող են լինել այն ցեղերը, որոնց բնօրրանը Կովկասն է: Այդ իսկ պատճառով, իրենց ծագումով կովկասցի են արխազը, ինգուշը, չեչենը, չերքեզը, կաբարդինը, ավարը, ալանը (օսը), վրացին, նույնիսկ Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասերում ապրող կազակները: Հայերը կովկասյան ազգությունների հետ նույնիսկ լեզվական առնչություն չունեն, քանզի Կովկասում ապրող ժողովուրդների մեծ մասի՝ վրացիների, արխազների, ադիգեյների, չեչենների, ինգուշների, ավարների լեզուները պատկանում են կովկասյան լեզվաընտանիքին, իսկ հայերի, օսերի և ռուսների լեզուները՝ ինդեվրոպական լեզվաընտանիքին:

Որտե՞ղ է Հայաստանը: Համենայնդեպս, այն Կովկասում չէ, այլ Հայկական լեռնաշխարհում՝ Աստվածաշնչյան սրբազան լեռնագագաթ Արարատին շրջակա տարածքում:

Այդ ինչպե՞ս է պատահում, որ ազգերիների հորջորջումով ռուսները, եվրոպացիները և աշխարհն Արցախը կոչում են Լեռնային Ղարաբաղ, սակայն Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռը, թուրքերին ընդօրինակելով, չեն անվանում Ադրդղաղ, այլ կոչում են Արարատ: Այդ ինչպե՞ս է պատահում, որ Հին Կտակարանում հիշատակված Նոյ նահապետի տապանի հանգրվանած լեռնագագաթի անունն ու վայրը լավ գիտեն եվրոպայի և աշխարհի հատկապես քրիստոնյա ժողովուրդները և հաճախակի արշավախմբեր են ուղարկում, Արարատի գագաթին Նոյի տապանը հայտնաբերելու նպատակով, սակայն ոչ այդ ժողովուրդները և նույնիսկ նրանց կողմից ուղարկվող արշավախմբերի անդամները տեղյակ չեն, թե ո՞ր լեռնաշխարհի և ո՞ր երկրի կենտրոնական մասում է վեր խոյանում այդ սրբազան լեռը: Պարզից էլ պարզ է, որ այդքանից հետո այդ մարդիկ չեն իմանա ո՛չ Հայաստանի տեղը, և ո՛չ էլ հայերի դերը քաղաքակրթության ասպարեզում:

Մենք՝ հայերս, մեղավոր ենք, որ չենք կարողացել մեզ լավ ներկայացնել աշխարհին: Մեղավոր են նաև եվրոպացիները և աշխարհի քաղաքակիրթ մյուս ազգերը, որոնք ծուլացել են կամ չեն ցանկացել ճանաչել մեզ և մեր երկրի պատմությունը: Այլապես, ինչպե՞ս հասկանալ, որ լավ են



յուրացրել հրեական պատմությունը և լավ են ճանաչում նրանց հայրենիքը՝ Հրեաստանը: Իրավունքն ու արդարությունը հզորի բաժինն են: Սակայն պարզվում է նաև, որ աշխարհաճանաչ լինելու հատկությունը նույնպես ուժեղի մեծաշնորհն է:

Օսմանյան կայսրությունում պետական մակարդակով վարում էին բնիկ ժողովուրդների թուրքացման, իսկ ռուսական կայսրությունում՝ ռուսացման քաղաքականություն: Խորհրդային տարիներին մեզ միամտորեն հավատացնում էին, թե այդ կայսրության մեջ մահվան են դատապարտված ռուս, վրացի, լատիշ, էստոնացի և այլ ազգություններն ու ժողովուրդները, քանի որ պատմական զարգացման հետևանքով առաջացել է միատարր մի հանրություն, որը կոչվում է սովետական ժողովուրդ: Հետխորհրդային տարիներին մեզ պարտադրվել է մի նոր գործընթաց, մի նոր աշխարհայացք՝ համաշխարհայնացում (գլոբալիզացիա) անվան տակ, որն, իբր, աշխարհի ժողովուրդների առանձնահատկությունները ջնջելով, մարդկության տեսակները համահարթեցնելով, ձևավորելու է երկիր մոլորակի բնակիչների մի նոր ամբողջություն՝ համաշխարհային ազգ:

Ինչպես մարդկության պատմական զարգացման բոլոր փուլերին քաղաքական վայրիվերումների ճակատագրական ժամանակահատվածներում, այնպես էլ հիմա մենք՝ հայերս, ժամանակից առաջ ենք նետվում, մեզ ներկայացնում ենք որպես նոր գաղափարների կրողներ, մեզ հռչակում ենք «համաշխարհային ազգ», թե տեսք, լավ իմացք, որ մեզ է պատկանում մարդկության զարգացման բոլոր փուլերի նախակերպի փշազարդ դափնին:

Մենք՝ հայերս, չենք ուզում խրատվել, մեր պատմությունից դասեր քաղել ու այսօր ևս շքերթի ենք ելել՝ համաշխարհայնացման գործընթացի առաջամարտիկի դրոշմ ոչ մի այլ ազգի չգիջելու վճռականությամբ: Որտե՞ղ է Հայաստանը: Հայաստանը Կովկասում է, թե՞ համաշխարհայնացման, մարդկության տեսակների համահարթեցման, համաձուլման կաթսայում: Հայաստանը ո՛չ Կովկասում է տեղադրված և ո՛չ էլ իրավունք ունի հայտնվելու համաձուլման կաթսայում: Հայաստանը տեղադրված է Հայկական լեռնաշխարհում՝ հայ ժողովրդի բնօրրանում, իսկ հայերը ո՛չ կովկասյան և ո՛չ էլ համաշխարհային ազգ են:

Մենք՝ հայերս, դասեր քաղելով մեր ժողովրդի պատմության փորձանքներով լի անցյալից, պարտավոր ենք զգուշանալ, ջուրը չտեսած չբոբիկանալ ու չմերկանալ, այլապես այս անգամ էլ կհայտնվենք համաշխարհայնացման ճգնաժամ, համահարթեցնող հզոր մեքենայի անիվների տակ, այնուհետև մեզ կգրանցեն անհետացման վտանգը դիմակայող ցեղատեսակների Համաշխարհային Կարմիր գրքում:

Մենք կովկասցի չենք և չենք ցանկանում դառնալ համաշխարհային առաջին ազգատեսակը:

ՀՊՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ





Այն տպավորությունը, թե ԳԳ ստեղծումը մեծ ապավեն էր Սփյուռքի համար՝ խաբկանք է. Հայաստան-Սփյուռք կապերն, այո՛, աննախադեպ աշխուժացել են, բայց անցած 15 տարիներին չկատարվեց գլխավորը՝ Սփյուռքը, չհաշված մի քանի անհատների ցույց տված օգնությունը, չբարձրացրեց ԳԳ տնտեսությունը, իսկ Հայաստանն էլ իր շրջափակված ու պատերազմական վիճակով չկարողացավ, և հազիվ թե հետագայում ևս կարողանա, դառնալ իրական ուժ, կառույց, Սփյուռքի համար դառնալու բարոյական քաղաքական պատվար...

ՀԱԳԳ բանակը կարող էր դառնալ նման քաղաքական ուժ, եթե անգամ համարենք, որ նրա անցած ուղին հանդիսացավ շարժման նախապատմությունը, որը մարտնչունների, հաջողությունների ու անհաջողությունների ուսանելի շղթա է: Դա մեծ դպրոց է շարժման համար, ինչը պարունակում է մի քանի կարևորագույն դասեր: ՀԱԳԳ բանակը սկիզբ էր, բայց ոչ հիմնական կառույց: Նա իրենն արեց, անհրաժեշտ էր այդ հիմքի վրա ձևավորել հայության ներքին ու արտաքին խնդիրների լուծմանը ծառայող քաղաքական ուժ:

**ՍՏԵՓԱՆ ԴՊՐՈՍՅԱՆ**

«Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն. Նահատակներ հավերժության», Երևան - 2005, էջ 221

**ՀԻՄԻ՞ ԷԼ ԼՌԵՆՔ, ՀԱՅԵ՛Ր, ՀԻՄԻ՞ ԷԼ**

Եթե անգամ Հայոց ցեղասպանության ընդունման և նույնիսկ փոխհատուցման ասպարեզներում մենք, հատկապես վերջին տարիներին, հաջողությունների ենք հասնում... ապա պետք չէ մոռանալ, որ Դեյր էլ-Ջորի անապատում դեռևս մեկ ու կես միլիոն անթաղ նահատակներ ունենք, և թուրքական միմյանց հաջորդող իշխանություններն ամեն օր՝ ամեն ժամ, պղծում են նրանց հիշատակը:

Թալեթաֆ փաշայի՝ ցեղասպանությունը հղացած ու իրագործած ոճրագործի մարմինը, Բեռլինից Ստամբուլ տեղափոխեցին, շուքով, մեծարանքով «Նահատակների բարձունքում» հողին հանձնեցին: Հիմա էլ Գերմանիայում նրան արդարացնելու, ազգային վրիժառու Սողոմոն Թեհլիրյանին վարկաբեկելու, «ահաբեկիչ» հորջորջելու բացահայտ փորձեր են անում:

Ստամբուլի բժշկական համալսարանի ուսանողները («Ֆիգարո», 03, 12, 2005թ.) Գերմանիայի կառավարությունից իրենց «գործընկերոջ» դուրսը Բեհաեդդին Շաքիրի աճյունն են պահանջում: Այն Բեհաեդդին Շաքիրի, որը երիտթուրքերի կուսակցության գաղափարախոսն էր, պատժիչ «Հատուկ կազմակերպության» («Թեջիլաթը մահուսետի») ղեկավարը, որը կայացրել էր որբացած, բայց իրենց ազգությունը հիշող հայ մանուկներին թունավոր շիճուկ սրվելով վերացնելու որոշումը: Նահանգից նահանգ անցնելով, անձամբ վերահսկել էր բռնազաղթն ու սպանողը, բոլոր կուսակալներին, ովքեր հայերի հանդեպ ներողամիտ էին եղել, պաշտոնանկ էր արել: Փաստորեն, արևմտահայությանը բնաջնջած ու տարագիր դարձրած հանցագործներին Թուրքիայի նոր սերունդը ազգային հերոսներ է համարում ու հռչակում:

Այդքանով էլ չեն բավարարվում:



«Թուրքական միջազգային ընկերակցությունների դաշնություն» կազմակերպությունը («Ֆրանս-Արմենի», հունվար, 2006 թ.) որոշել է Նյու-Յորքում (հասկանալի է, թե ինչու հատկապես Նյու-Յորքում) հուշարձան կառուցել՝ ի հիշատակ «թուրք 42 դիվանագետների և նրանց մերձավորների, որոնք զոհ գնացին հայ ահաբեկիչների գնդակին»:

Դաշնությունը պաշտոնապես հայտարարել է. «Ճշմարտությունը բարձրաձայնելու ժամանակն է: Մենք ճարտարապետներից ու պատմաբաններից կազմված հանձնախումբ ենք ստեղծել այնպիսի կոթող կերտելու համար, որն անառարկելիորեն վկայի թուրք դիվանագետների նկատմամբ

ԱՍԱԼԱ-ի գործադրած վայրագությունները...»:

Դա նշանակում է, որ Թուրքիան ու Ադրբեջանը Արցախը մեկընդմիջտ կորցնելու իրողության հետ չեն համակերպվել, հանցավոր համաձայնությամբ՝ ՀՀ-ի և ամբողջ հայ ժողովրդի դեմ հոգեբանական պատերազմ են սկսել: Այլապես, քնած հայ սպային կացնահարած ճիվաղին «տարվա մարդ» չէին հռչակի, Իգդիրում, Անիի մատուցներում «Հայկական ցեղասպանության թուրք ամենը զոհերի հիշատակին» հուշարձաններ կառուցելուց հետո, այժմ էլ Կարսում ութսուն մետր բարձրությամբ նոր հուշամահալիի չէին կերտի, որի բացման արարողությանը, իբր, պիտի մասնակցեն Կովկասի բոլոր ժողովուրդների պատվիրակությունները: Հասկանալի է՝ հայերը չեն լինելու:

Ի՞նչ անենք, հայեր, նորից լռենք:

Ի՞նչ արեցինք, երբ բոլորովին վերջերս, աշխարհահռչակ Շառլ Ազնավուրը՝ Եվրոպայում Հայաստանի Հանրապետության **Հատուկ ղեսպանը**, հետևյալ սպառնազրկը ստացավ. «Եթե Հայ դատով այդքան շատ զբաղվես, շատ շուտով կյանքիցդ կզրկվես...»:


Ջուղայի խաչքարերի նախճիրը դատապարտող մտավորականների մեր հանձնաժողովը երբ համահավաքներ է կազմակերպում, հանդես է գալիս հայտարարագրերով, ոմանք գտնում են, որ ուշացել ենք. կռիվը վերջանալուց հետո ենք բռունցք թափ տալիս:

Ես շտապում եմ հնչեցնել այս սհազանգը, որպեսզի հերթական անգամ չուշանանք:


Ինչ որ անելու ենք, այսօր անենք:

Վաղը ուշ կլինի:

**ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿՅԱՆ**



# «ՆԵՄԵՍԻՍԸ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Առաջին համաշխարհային պատերազմում թուրքիայի պարտությունից հետո երիտթուրք պարագլուխները գերմանական սուզանավով փախան Գերմանիա: 1918թ. դեկտեմբերի 16-ին Օսմանյան կայսրությունը հատուկ հրամանագրով դատավարություն սկսեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարության դեմ: Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Սայիդ Յալիմը, Նազըմը, Շաքիրը, Ջեմալ Ազմին և մյուսները մեղադրվում էին Օսմանյան կայսրությանը պատերազմի մեջ ներքաշելու, քրիստոնյա (հայ) հպատակների ջարդի և տեղահանության կազմակերպման մեջ: Դատավարությունը տևեց մոտ երկու ամիս՝ 1919-ի ապրիլի 28-ից հունիսի 26-ը: Անգլիական հրամանատարությունը 77 մեղադրյալների տեղափոխեց Մալթա կղզի, որոնց հետագայում փոխանակեց անգլիացի ռազմագերիների հետ: Դատավճիռը հրապարակվեց հուլիսի 5-ին. 31 մեղադրյալներից 4-ը՝ Թալեաթը, Էնվերը, Նազըմը և Ջեմալը, հեռակա կարգով դատապարտվեցին մահվան, մյուսները՝ տարբեր տարիների բանտարկության: Մալթայում ներկայացվածները չհիշատակվեցին անգամ դատավճիռի մեջ: Իթքիհատի շրջանային 36 քարտուղարների նկատմամբ կայացվեց առանձին դատավարություն, որի դատավճիռը հրապարակվեց 1920-ի հունվարի 8-ին: 3 հոգի դատապարտվեց մահվան, 10-ը՝ տարբեր տարիների բանտարկության: Փաստորեն, այս ամենը կեղծիք էր: Ուստի, հայ քաղաքական շրջանակները ստիպված էին իրենք պատժել թուրք ոճրագործներին: Միաժամանակ անհրաժեշտ էր մեծ պետությունների հասարակական-քաղաքական շրջաններին բացահայտել այդ երկրների՝ հայկական ջարդերում ունեցած մեղսակցությունը: Հայերը դժգոհ էին նաև Փարիզի հաշտության կոնֆերանսի որոշումներից:

Ջեմալը, Բեհաեդդին Շաքիրը, Ջեմալ Ազմին, Սայիդ Յալիմը, Խան Խոյսկին, Սարաֆովը, Ջիվանջիրը: Ընդ որում հայ վրիժառուներ Սողոմոն Թեհլերյանի, Արամ Երկանյանի, Արշավիր Շիրակյանի, Արամ Գևորգյանի, Միսակ Թռչաքյանի կողմից ոչ մի կողմնակի անձ չի տուժել: Ահա թե ինչպիսի վեհությամբ էին գործում հայագրի մարտիկները:

1919թ. սեպտեմբերին Երևանում ՅՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը որոշեց պատժել 1915թ. ցեղասպանության թուրք ոճրագործներին: Առանձնացվեց 650 անուն, որից 41-ը գլխավոր ոճրագործներն էին: «Նեմեսիսի» իրագործման համար ստեղծվեց պատասխանատու մարմին (ղեկավար՝ ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան Արմեն Գարո) և հատուկ ֆոնդ (ղեկավար՝ Շահան Մարչակյան): Գործողության անմիջական ղեկավար նշանակվեց նշանավոր գրող Շահան Նաթալին, օգնական՝ Գրիգոր Մերճանովը: Տեղեկությունների հավաքումը իրականացնում էր թուրք վտարանդիության շարքերը թափանցած իրավաբան Հրաչ Փափազյանը (գերագանց տիրապետելով թուրքերենին՝ նա դարձել էր Ջեմալ Ազմիի տղա Նեջմիի «ընկերը»՝ Մեհմեդ Ալի անունով):

1919թ., Թիֆլիսի Երևանյան հրապարակում Ա. Երկանյանը գնդակահարեց մուսավաթական Ղասիմբեկովին:

1920թ., Թիֆլիսում, 20-ամյա Արամը սպանեց Ադրբեջանի մուսավաթական կառավարության ղեկավար Խան Խոյսկուն՝ 1918թ. սեպտեմբերին Բաքվի 30 և 1920թ. մարտի 23-ին Շուշիի 35 հազար հայերի ջարդի գլխավոր կազմակերպչին, մուսավաթական Սաֆարովին, իսկ մյուս դահիճը՝ Խաս Մահմեդովը վիրավորվեց:

1921թ. հուլիսի 19-ին, Կ. Պոլսում «Ճակատամարտ» թերթի խմբագրատան առաջ, 33-ամյա Մ. Թռչաքյանը գնդակահարեց Պեհուտ խան Ջիվանջիրին՝ մուսավաթական Ադրբեջանի ներքին գործոց նախարարին, Բաքվի և Շուշիի հայության գլխավոր ջարդարարներից մեկին...

1921-ի դեկտեմբերի 5-ին Ա. Շիրակյանը Հռոմում սպանեց երիտթուրքական կառավարության առաջին կաբինետի ղեկավար Սայիդ Յալիմին՝ կոտորածի ծրագիրը հաստատողին:

1922-ի ապրիլի 17-ին Ա. Շիրակյանն ու Ա. Երկանյանը Բեռլինում գնդակահարեցին Տրապիզոնի նախկին նահանգապետ Ջեմալ Ազմին և «Թեշքիլաթ-ը մահուսետ» կազմակերպության հիմնադիր Բեհաեդդին Շաքիրին՝ տիպիկ Թալեաթի աչքերի առաջ (սպանվել է նաև Շաքիրի թիկնապահներից մեկը):

1922թ. հուլիսի 25-ին խտորջուրցի երիտասրդներ՝ Պետրոս Տեր-Պողոսյանը և Արտաշես Գևորգյանը Թիֆլիսում գնդակահարեցին Ջեմալին:

1922թ. օգոստոսի 4-ին Միջին Ասիայից Աֆղանստան ճողպրելիս՝ արցախցի Հակոբ Մելքունովի գլխավորած ջոկատի հետ ընդհարման ժամանակ սպանվեց Էնվեր փաշան:

«Նեմեսիսը» ընդհատվեց, երբ ընդունվեց «Պրոմեթևս» ծրագիրը (1922թ. հայ, վրացի և ազերի վտարանդի կառավարությունները, մտան համագործակցության մեջ ընդդեմ բուլշևիզմի, և ՅՅԴ ղեկավարությունը որոշեց ընդհատել թուրք ոճրագործների ահաբեկումը): Իթքիհատի գլխավոր քարտուղար Նազըմը գաղտնի անցավ Թուրքիա, 1926թ. Քեմալի դեմ կազմակերպված անհաջող մահափորձից հետո ձերբակալվեց և կախաղան հանվեց նույն թվին, Ջմյուռնիայում (Իզմիր):

ՀԱԿՈՒ ՄԱՆՁՅԱՆ

**14.10. 1903թ. - Թիֆլիսում Դրաստամատ Կանայանը և Հայկ Բժշկյանը դաշունահարեցին Կովկասի փոխարքա Գ. Ա. Գորլիցինին, որն ստիպված էր 1904 թ. վերջերին հեռանալ Կովկասից:**  
**11.05.1905թ. - Բաքվում Դրաստամատ Կանայանը ահաբեկեց հայ-թաթարական կռիվների սարդիչ, Բաքվի նահանգապետ Նակաշիծին:**  
**Նույն 1905 - ին հայ վրիժառուները իրականացրին.**  
**Գանձակի փոխնահանգապետ Անդրեևի, գավառապետներ՝ Բոգոսլավսկու, Շեռլինգի, Պավլովի, ոստիկանապետ Սախարովի, պրիստավներ՝ Նաշչանսկու, Ջավախովի, Շունակկիչի, Տեր-Սահակովի նկատմամբ կայացած մահապատիժները:**



# ՆԵՄԵՍԻՍԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԷՐ ԱՌԵԼ...

Շահան Նաթալի (Հակոբ Տեր-Հակոբյան) հասարակական-քաղաքական մեծ գործիչ, գրող, ծնվել է 1884-ին Խարբերդի նահանգի Յուսեյնիկ գյուղում: Մեկ տարի Խարբերդի հռչակավոր Եփրատ բուլեջը հաճախելուց հետո 1897-1900-ին սովորել է Կ. Պոլսի Պերպերյան վարժարանում, որտեղ նրա ուսուցիչն էր ականավոր մանկավարժ և իմաստասեր Շահան Պերպերյանը (որպես հարգանքի նշան՝ ընտրում է իր ուսուցչի անունը՝ Շահան: Ըստ հավաստի աղբյուրների, Շահանը հեռակա սիրահարված է եղել սերբերի, խորվաթների և սլովենների թագավորության թագուհի Նաթալիին, որի անունն էլ ընտրել է որպես իր կեղծանվան ազգանուն: 1901-ին վերադարձել է ծննդավայր, զբաղվել՝ մանկավարժությամբ, միաժամանակ ուսումնասիրել է Խարբերդի բարբառը: 1904-ին Խարբերդում մտել է ՀՅԴ շարքերը, որտեղ քառորդ դար հայրենասիրական մեծ գործունեություն է ծավալել: Նույն թվականին էլ մեկնել է ԱՄՆ: 1909-12թթ. սովորել է Բոստոնի համալսարանում՝ հետևելով գրականության և փիլիսոփայության դասընթացներին: Այդ տարիներին հրատարակել է բանաստեղծությունների ժողովածուներ և թատերգություններ, «Շանթ» և «Փյունիկ» գրական հանդեսները, որոշ ժամանակ՝ «Հայրենիք» օրաթերթը:



Մեծ եղեռնի լուրն առնելով՝ բոլոր պանդուխտների նման, Շահան Նաթալին հուզմունքի ու զայրույթի մղձավանջային պահեր է ապրել և հաստատել է իր վրեժխնդիր լինելու ուխտը. անպատիժ չթողնել ցեղասպաններին, եթե երբևէ աշխարհը չցանկանա նրանց պատժել: Նա դարձավ Հայոց ցեղասպանության գլխավոր հանցավոր-ոճրագործներին պատժող «Հատուկ հանձնաժողովի» անդամ, «Նեմեսիսի» կազմակերպիչ:

Թուրք դահիճները ազատ ու համարձակ շրջում էին Բեռլինի, Հռոմի, Բաքվի, Թիֆլիսի և այլ քաղաքների փողոցներում: Շահան Նաթալիի համար գլխավոր թիրախը

մեծագույն հայակեր թալեաթն էր, որին Նաթալին իր անգլերենով ակնարկում էր «նամբըր ուան»՝ «թիվ առաջին»: Այս գազանի զգեստման առաքելությունը վստահվեց Սողոմոն Թեհլերյանին:

Շահան Նաթալին 1927-ին հունվարին հրաժարվել է ՀՅԴ բյուրոյի անդամությունից, երբ ընթացք չի տրվել հակաթուրքական ահաբեկումները շարունակելու իր առաջարկին: Որոշ ժամանակ ապրել է Եվրոպայում, Փարիզում հիմնել «Արևմտահայ ազատագրական ուխտ» կազմակերպությունը, խմբագրել «Ազատամարտ» անկախ շաբաթաթերթը: Ապա վերադարձել է Բոստոն, ուր ապրել է մինչև մահ՝ 1983 թվականը:

1973-ին Գուրգեն Յանիկյանի արձակած փամփուլշտներով վերածնված Հայկական նորագույն զինյալ ազատագրական պայքարը հուզեց 90-ամյա Շահան Նաթալիի հոգին. նա Յանիկյանի և անձնագոհ հայ երիտասարդների մեջ տեսավ իր գործը շարունակողներին: Նեմեսիսը հարություն էր առել: Նորագույն շարժման առիթով նա իր գոհունակությունն ու հպարտությունը հայտնեց Նորագույն զինյալ ազատագրական շարժման անվեհեր մարտիկներին...:

Շ. Նաթալին գրել է մի շարք պատմագիտական երկեր՝ «Թուրքիզը Անգորային Բագու Եւ Թրքական Օրիէնթասիոն» (Աթենք, 1928), «Ալեքսանդրապոլի Դաշնագրէն 1930-ի Կովկասեան Ապստամբութիւնները» (հ. 1-2, 1934-35), «Թուրքերը Եւ Մենք» (Աթենք, 1928), «Վերստին Յաւելուած»- «Ալեքսանդրապոլի Դաշնագրի «Ինչպէ՞ս»-ն ու «Ինչո՞ւ»-ն» (Պոսթոն, 1955), «Երեք Դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի, Կարսի), Բաղդատական Ձուգակչի» (Բեյրութ, 1957) և այլն, որոնցում փորձել է հայ ժողովրդի նորագույն պատմության տվյալների հիման վրա հիմնավորել իր քաղաքական հայացքները, համաձայն որոնց՝ հնարավոր չէ թուրքերի հետ համաձայնության հանգել և, առավել ևս, նրանց հետ դաշնակցել:



## Ս Ո Ղ Ո Մ Ո Ն Թ Ե Յ Լ Ե Ր Յ Ա Ն


Ծնվել է 1896թ. Երզնկայի Ներքին Բագառիճ գյուղում, ուր և ստացել է նախնական կրթությունը: Ապա ուսումը շարունակել է Երզնկայում և Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանում: 1913թ. փոխադրվում է Սերբիա, բայց շուտով անցնում է Կովկաս՝ մասնակցելու կամավորական շարժմանը: Կովկասյան ճակատում թուրքերի դեմ կռվում է Սեպուհի (Արշակ Ներսիսյան) վաշտում (կամավորական առաջին ջոկատ, հրամանատար՝ Անդրանիկ):

«Նեմեսիս» գործողությունը իրականացնելու վիճակահանության ժամանակ նրան բաժին ընկավ գլխավոր դահիճ թալեաթը: 1921թ. մարտի 15-ին, Բեռլինի Շառլոտենբուրգ թաղամասի Հայդենբուրգ փողոցում 25-ամյա Ս. Թեհլերյանը զնդակահարեց թալեաթին: Եվ 1921թ. հունիսի 2-ին, գերմանական դատարանը՝ Լեմբերգի նախագահությամբ, անպարտ ճանաչեց Սողոմոն Թեհլերյանին: Այդ արդար դատավճռում մեծ գործ կատարեց վրիժառուի դատապաշտպան, գերմանացի արևելագետ դոկտոր Յոհան Լեփսիուսը: Արդարացված Թեհլերյանը երկար տարիներ ապրել է Հարավսլավիայի մայրաքաղաք Բելգրադի Դալմատինսկա փողոցի թիվ 78 տանը: 1945-ից հետո բնակություն է հաստատել ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում, որտեղ էլ մահացել է 1960թ. մայիսի 23-ին:

Ի հիշատակ Հայ վրիժառուի՝ հուշարձան է կանգնեցվել Ֆրեզնոյում, Թալինի շրջանի Մաստարա գյուղում և Երևանում:



# ՆՐԱ ՀՈԳՈՒՄ ՓՈԹՈՐԿՎՈՒՄ ԷՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՍԵՐԸ...



Արթուր Ղարիբյան... հերոս ազատամարտիկ, որն Արցախի մարտադաշտում միշտ առաջին գծում էր, կռվեց անձնվեր, ժայռաբեկորի նման ամուր, քաջասրտությամբ: Հոգում՝ Ջորավար Անդրանիկի, Նժդեհի, Դրոյի, Դումանի կերպարները պահած: Իսկական դյուցազուն էր՝ հերոսական հզոր կերպարով: Արթուրն ուժեղ էր, կամքով՝ արի: Նրան երբեմն երկաթե մարդ էին կոչում: Թշնամու ահն ու սարսափն էր, կռվել է ու բանակումների ստեղծումով զբաղվել, նրա գաղափարի կիզակետը հաղթանակն էր, որի ավարտը, ավա՛ղ, չտեսավ...

Արթուր Ղարիբյանը մասնակցել է Երասխավանի, Շահումյանի, Գետաշենի, Շուշիի, Լաչինի մարտական, ազատագրական գործողություններին: Նրա մարտական ընկերները պատմում են, որ Արթուրը կռվի թե՛ պահին անգամ... երգել է, այո, թող չափազանցություն չթվա, որ նա մարտի է դուրս ելել «Արյունոտ դրոշ» երգով՝ ատամների կրճտոցի տակ պահած՝ ողջ հայության վրեժի ցասումը...

Ա. Ղարիբյանը միշտ համեստ պահվածքով, համակրելի և հարգված հրամանատար է եղել: Խիզախ քաջորդին, արմատներով ջավախքցի, ծնվել է Ստեփանավանում, ավանդապահ հայի ընտանիքում: Նա մանկական տարիներից հետաքրքրություն ու սեր է ունեցել դեպի նկարելը, քանդակելը: Արթուրին դուր է եկել այն ամենը, ինչը կյանքում հերոսական է համարվել: Նրա մայրը՝ տիկին Գոհարը պատմում է. «Արթուրիս հետաքրքրությունը մեծ էր հատկապես հզոր կենդանիների հանդեպ: Մի անգամ, հիշում եմ, կենդանաբանական այգում ձեռքս բաց թողեց ու անհետացավ, փնտրելուց հետո նրան գտա՝ մեծ առյուծի վանդակաճաղերին հենված: Հզոր կենդանու երկինք հասնող մռնչյունը սարսափելի էր, ինքը կանգնել էր կենդանու դեմ և նմանակում նրան՝ ձայների արտաբերում: Նրան միշտ անվեհեր երևույթներն էին



հետաքրքրում: Նա՛ ուսանել, արվեստի ճանապարհ է անցել Փ. Թերլենգյանի անվան Գեղարվեստի ուսումնարանում, Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: Նրա ստեղծագործական բուռն կյանքն, ավա՛ղ, Արցախում ընդհատվեց ողբերգականորեն... քսանհինգամյա գեղահրաշք երիտասարդը զոհվեց Սիսավանդի անտառում՝ արկի պայթյունից:

Այնքա՛ն երազներ, բաղձալի իղձեր, անկատար մնացին: Սիրատուն ծնողները, հարազատները, ընկերները, դասախոսները Արթուրից սպասում էին մեծ ապագա՝ արվեստի լուսավոր բարձունքում, տաղանդավոր քանդակագործի ստեղծագործությունները պիտի ունենային մեծ ճանաչում: Արթուր Ղարիբյանը, Հայրենիքի ու ազգի շահերով ապրող, վերջին կուրսի ուսանող արվեստագետը, գիշեր-ցերեկ կռվի մեջ էր և այդտեղ էր հանձնում բոլոր բարդ քննությունները՝ իր դիպլոմը ստացավ... հետմահու:

Արթուրն իր մեծագույն հաղթանակը երազում էր իրագործել արվեստում, որն ամենևին ապարդյուն չանցավ՝ երազանքը կատարեց Արցախ աշխարհի ազատամարտի ընթացքում: Նրա քաջագործության, արծվային ճախրանքների, ռազմական գիտելիքների մասին կան պատումներ, հողվածներ, գրքեր: Ականատեսների և մարտական ընկերների գրույցները իր ու մեր մյուս բոլոր նահատակների մասին, ովքեր իրենց արյան վերջին կաթիլը տվել են Վասն Ազատության, կպատմվեն ժողովրդի մեջ: Նրանք Հայրենիքի, ազգի որդիներն են, ովքեր ի վերուստ ծնվել էին իրենց բանտված հողի իրավունքը պաշտպանելու համար... այո, դեռ նոր հուշեր կգրվեն նրանց համար, խնկարկելի անունների պատվին, հիշատակի տոներ ու հանդեսներ կլինեն: Այսօր Արթուր Ղարիբյանի հիշատակին նվիրված թանգարան-ցուցասրահ կա Երևանի Կոմիտասի փողոցում, նրա անունով դպրոց՝ Ջավախքում: Նրա անվամբ են կոչվում Մարտակերտի արվեստի ստուդիան, իր ծննդավայր Ստեփանավանի կերպարվեստի թիվ 1-ին դպրոցը: Հերոս ազատամարտիկի անմահ, լույս կերպարը երգի ու բանաստեղծության վերածվեց: 1993-ին Արթուրի կերպարը ոգիացավ նաև իր ընկերոջ՝ վաղամեռիկ բանաստեղծ Սիփան Շիրազի «Հավատարմություն» ստեղծագործության սքանչելի տողերում.

Իմ հոգու համար ես ունեմ ժամհար,  
Իմ կյանքի համար ես ունեմ ժամեր,  
Դու հեռանում ես կյանքից հեռահար,  
Դու՛ կյանքի նման կրակ հազած սեր:

Փառապանծ մնան նահատակված հայ մարտիկների անունները, թող դարեդար նրանց սխրանքները փառաբանվեն և հերոսական ոգի, ուժ տան նոր սերունդներին:

**ԼՈՒՍԻՆԵ ԹՈՓՈՒՅՅԱԼ**






## ՎԵՐԺԻՆԵ ՄՎԱԶԼՅԱՆԻ «ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԳԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ» ԹՈՒՐԹԵՐԵՆ

Տարեցտարի ավելի է մեծանում հետաքրքրությունը Հայոց ցեղասպանության նկատմամբ, որը պայմանավորված է վերջերս բազմաթիվ երկրների կողմից պատմական այդ փաստի ճանաչման իրողությամբ: Սակայն թուրք ու թուրքամետ պատմաբաններն առ այսօր ամեն կերպ ճգնում են խեղաթյուրել հայ ժողովրդի համար ճակատագրական դարձած 1915-1922թթ. պատմական ստույգ իրողությունները:

Հայոց ցեղասպանության մասին տարբեր լեզուներով լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, քաղաքագետների և հասարակական գործիչների ասույթներ, գեղարվեստական տարբեր ժանրերի ստեղծագործություններ, սակայն հրատարակված այդ հսկայական գրականության մեջ բացակայել է ժողովրդի ծայնը՝ պատմական հիշյալ իրադարձություններից անմիջական տպավորություններ ստացած ականատես-վկա վերապրողների պատմածները, որոնք ևս պատմաճանաչողական, իրավաբանական. փաստավավերագրական և սկզբնաղբյուրային կարևոր արժեք են ներկայացնում:

Գիտակցելով հիշյալ իրադարձությունների բացահայտման գործում նաև ականատես-վերապրողների հաղորդած վկայությունների պատմաճանաչողական դերն ու նշանակությունը՝ բանասիրական գիտությունների դոկտոր Վերժինե Սվազլյանը, սկսած 1955թ., շուրջ 50 տարիների ընթացքում, Հայաստանի տարբեր շրջաններում, նույնպես և Հունաստան, Ֆրանսիա, ԱՄՆ և Թուրքիա կատարած իր անձնական կամ գիտաժողովային կարծատև ուղևորությունների ընթացքում, անձանձիր հետևողականությամբ ականատես-վերապրողներից գրառել, ծայնագրել, տեսագրել և ուսումնասիրել է պատմական Հայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայաբնակ 100 տեղավայրերի սեռատարիքային տարբեր խմբերի ներկայացուցիչների հաղորդած փաստավավերական ժողովրդական վկայություններ (660 միավոր), որոնցից յուրաքանչյուրն ապացուցողական արժեք է Հայ դատի արդարացի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման գործում:

Հայոց ցեղասպանության 90-ամյա հիշատակի առիթով Ստամբուլում «Բելգե» հրատարակչությունը, մարդու և ազգերի իրավունքների անկոտրում ու նվիրյալ պաշտպան, առաջադեմ թուրք մտավորական, հասարակական-քաղաքական գործիչ Ռաֆիա Ջարաթոլլուի խմբագրությամբ լույս է ընծայել Վերժինե Սվազլյանի «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» ուսումնասիրության թուրքերեն թարգմանությունը՝ *“Ermeni Soykirim ve Toplumsal Hafiza”* (Istanbul, “Belge” Uluslararası Yayıncılık, 2005, 160 sayfa) խորագրով:



ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել գրքի հայերեն (2003), անգլերեն՝ երկու հրատարակությամբ (2004, 2005), ֆրանսերեն (2005), գերմաներեն (2005), ռուսերեն (2005) տարբերակները:

Ուսումնասիրության մեջ ներկայացված են Հայոց ցեղասպանության ընթացքն ու պատմական իրադարձությունները, որոնք լրացված, հիմնավորված և հաստատված են Արևմտահայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի շուրջ 100 տեղավայրերից բռնի տարագրված, Հայաստանում և Սփյուռքում (Հունաստան, Ֆրանսիա, Իտալիա, Գերմանիա, ԱՄՆ, Սիրիա, Լիբանան, Իրաք, Եգիպտոս, Բալկանյան երկրներ, Թուրքիա) բնակություն հաստատած, Հայոց ցեղասպանության ականատես վերապրողների հաղորդած վկայություններով ու պատմական բնույթի երգերով (հայերեն և թուրքալեզու):

Փաստագրական այդ վկայությունները ճշմարտացիորեն վերարտադրում են Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում երիտթուրքական կառավարության կազմակերպած հայերի զորահավաքն ու զինահավաքը, ինչպես նաև զանգվածային տեղահանություններն ու կոտորածները:

Սույն ուսումնասիրության ժողովրդագիտական նյութերը մեջբերված են հեղինակի հայերեն սկզբնաղբյուրային սովոր գրքից (Վերժինե Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000):

Աշխատությանը կցված են՝ Օսմանյան Թուրքիայում հայերի տեղահանության և ցեղասպանության քարտեզներ, վերապրողների լուսանկարներ, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, թուրքերեն, ռուսերեն և հայերեն ամփոփումներ:

Ուսումնասիրությունն ավարտվում է հեղինակի հետևյալ եզրակացությամբ. «Ուստի ժամանակն է, որ առաջադիմության ճանփան բռնած ներկայիս Թուրքիայի Հանրապետության կառավարությունը ևս քաջությունն ունենա ընդունելու ինչպես գրավոր, նույնպես և բանավոր փաստերով հիմնավորված, ապացուցման կարիք չունեցող, պատմական այս բացահայտ ճշմարտությունը, որը կոչվում է **Հայոց ցեղասպանություն**»:

### ՄԻՑԱՆԱԿՆԵՐ ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՄԵԾ ԱՎԱՆԳ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՆ

Վերժինե Սվազլյանը «Հայոց ցեղասպանությունը և ժողովրդի պատմական հիշողությունը» մենագրության, Էդգար Հիլգենրաթը (Գերմանիայից) «Վերջին մտքի հեքիաթը» վեպի համար մրցանակ են ստացել՝ համաձայն 2005 թվականին Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդրած անձանց մրցանակ շնորհելու ՀՀ նախագահ Ռոբերտ Բոչարյանի ապրիլի 15-ին ստորագրած հրամանագրի («Ազգ», 22. 05. 2006թ.):

### ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԼԻՆԻ, ՈՐ ԹՈՒՐԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՆ ՀԱՅԵՐԻ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 21-ին «Եվրոտեսիլ» մրցույթի ժամանակ Անդրեի ելույթից հետո «Ֆրանս 3» հեռուստաընկերության հաղորդավար Միշել Դրյուկերն ասել է. «1915թ. թուրքերի կողմից մեկուկես միլիոն հայ է կոտորվել 20-րդ դարի առաջին ցեղասպանության ընթացքում: Ամեն դեպքում, մի օր ամիրաթեշտ կլինի, որ թուրքերն ընդունեն այս ցեղասպանությունը»: Երաժշտական երեկոյին հետևել է ֆրանսիացի 4 մլն հանդիսատես («Ազգ», 23. 05. 2006թ.):



# «ՄԵԾ ԾՐԱԳԻՐ 2006»-Ը ՏԱՊԱԼՎԵՑ

Փորձենք ճշտել 2006-ի մարտի 21-ին «PanARMENIAN.NET»-ից վերցված տեղեկությունը՝ ավելացնելով հայերին առնչվող իրադարձությունները: Նախկին մտոխտ և ներկայիս այսպես կոչված թուրքական աշխատավորական կուսակցության նախագահ Դոդու Փերինջեքը (ուսանել է իրավաբանություն Գերմանիայում և Մետուդ Ելմագի հետ միասին կազմում են «գերմանական դպրոցը») ուղևորվել էր Գերմանիա կազմակերպելու «Արշավ դեպի Բեռլին» և «Մեծ ծրագիր 2006»-ը: Նրան հետո միացել են մի նախկին գլխավոր դատախազ, թուրքիայի խորհրդարանի չորս պատգամավորներ (նրանցից երեքը՝ ներկայիս իշխանության AKP-ի կուսակցության անդամներ), ինչպես նաև խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնախմբի նախագահ և վերջապես ընտրությունները տանուլ տված Ռաուֆ Դենկեթաշը՝ ոչ մի երկրի կողմից (բացի թուրքիայից) պաշտոնապես չճանաչված Հյուսիսային Կիպրոսի թուրքական Հանրապետության նախկին նախագահը:

«Վերցրու դրոշ և շտապիր Բեռլին», «Մենք Արևմուտքին ցույց կտանք, թե ինչքան հզոր է թուրքիան» պատերազմական կարգախոսների և «անխիղճ եվրոպացիները եթե չուտով չդադարեցնեն անհիմն ցեղասպանության իրենց մեղադրանքները, իրենց մայրաքաղաքները բոցավառվելու են ինչպես Փարիզը» սպառնալիքներով (ըստ թուրքական կայքէջի), սկսեցին «Մեծ արշավ»-ը: Համարյա բոլոր գերմանական թերթերը (բացի TAZ ձախակողմյան թերթից, որը միշտ մեղմ մոտեցում ցուցաբերում է թուրքիայի նկատմամբ) թե՛ ծաղրեցին, թե՛ քննադատեցին, «ժայրահեղ ազգամուլական» և «հետադիմական» կոչելով այդ շարժումը:

- Շարժման նպատակն էր.
  - մեծարել ոճրագործ թալեաթին և բարձրացնել նրան «ազգային հերոսի» աստիճանին,
  - չեղյալ համարել Գերմանիայի պետության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը<sup>1</sup>,
  - դադարեցնել Գերմանիայի թուրքերի նկատմամբ թշնամանքը,
  - թույլ չտալ Հայոց ցեղասպանության «սուտը» մտցնել գերմանական դպրոցական դասագրքեր<sup>2</sup>:

15 մարտի 2006-ի առավոտյան ժամը 11-ին, երբ 20-25 թուրքեր հայտնվեցին Շթայն հրապարակում ծաղիկ դնելու ֆաշիստական Գերմանիայի զոհերի հուշակոթողին՝ ի մեծարումն թալեաթ փաշայի (թալեաթն իր արդար դատաստանը ստացել է Սողոմոն Թեխլերյանից, Հարդենբերգ և Ֆասան փողոցների անկյունում): Հայկական ցեղասպանության ճանաչման հանձնախումբը (գերմ. AGA - «ճանաչում աշխատանքային խմբակ») հասարակական կազմակերպություն, արդեն ժամը 10:00-ից գրավել էր հուշարձանի տարածքը իր պաստառներով ու թռուցիկներով: Օգնության էին եկել հույները, ասորիները՝ արամեալեզու քրիստոնյաները<sup>3</sup> և այլազգիները, ինչպես նաև Զր-

դական ուսումնասիրության համաեվրոպական կենտրոնը, Ցեղասպանության դեմ կազմակերպություն, Գերմանական քաղաքային ակցիան, TUDY -Մարդու իրավունքների պաշտպան կազմակերպությունը, ինչպես նաև Զրդագիտությանն աջակցող բեռլինյան ընկերությունը: Միջոցառման բուն նպատակն էր թույլ չտալ, որ ֆաշիստական զոհերի հուշակոթողը պղծվի ոճրագործ թալեաթի մեծարումով և, որ ամենակարևորն է, այն ավանդույթ չդառնա (մասնակիցների թիվը շուրջ 60 էր):

20-35 թուրքերի այլ բան չէր մնում, քան քաշվել այգու անկյուններից մեկը, մի երկու ճառ արտասանել, հետո ծաղիկները մի ժապավենի հետ դնել ձմոտ մարզի վրա և, միմյանց հետ վիճելով, հեռանալ (վիճաբանության պատճառը վատ կազմակերպվածությունն ու մասնակիցների սակավությունն էր):

Մարտի 18-ին տեղի ունեցավ թուրքերի «Մեծ արշավը» հազարից ավելի մասնակիցներով, առանց Բեռլինում ապրող թուրքերի մասնակցության (նրանց թիվը Բեռլինում 250.000 է)՝ հակահայկական կոչերով ու պաստառներով: Ի պատասխան սրան, վերը նշված կազմակերպությունները կազմակերպել էին նախ՝ հանրակառքով շրջագայություն, այցելելով հայերի հետ առնչվող վայրերը (թալեաթի պատժավայր, Ա. Թ. Վեգենրի, Կոմիտասի բնակավայրեր և այլն), իսկ հետո տեղի ունեցավ տեղեկատվական երեկո Հարդենբերգ փողոցի վրա գտնվող Գեդարվեստի համալսարանի լեփլեցուն սրահում՝ «Հայոց ցեղասպանության հիշողության դժվարությունները» խորագրով, որ-



տեղ իր վերջին վեպից հատվածներ կարդաց թուրք Դոդան Աբասլին (Քյոլն), պատմաբան Հանս-Լուկաս Քիսերը դասախոսեց թալեաթի կենսագրության մասին: Դերասան Գրիգոր Մելիքյանը և դերասանուհի Բեա Էլերզը կարդացին թալեաթի դատավարության արձանագրությունից: Նուրեն (քուրդ երգչուհի) Եղեմնին սփրված մի քանի երգ երգեց, և վերջապես, եղավ կլոր սեղան հարց ու պատասխանով: Ոստիկանությունը (որին կարողացել էր համոզել Թեսա Հոֆմանը և գուցե նաև նեոֆաշիստների կողմից կազմակերպված նույն օրն ու նույն ժամին տեղի ունեցած բախումը թուրքերի հետ) թալեաթի մեծարման և «Մեծ ցույց»-ի արգելմանը, չեղյալ էր համարել 2-րդ ատյանի Բեռլին-Բրանդենբուրգի կառավարչական դատարանը՝ «ազատ կարծիքի իրավունք» հիմնավորումով, այն պայմանով, որ ոչ կոչերով և ոչ էլ պաստառներով չվիրավորեն և չժխտեն հայերի զանգվածային կոտորածները: **Այստեղ վստահաբար իր սև դերն էր ունեցել վաղեմի թուրք-գերմանական զինեղբայրությունը:** Թուրքերը թե՛ կոչերով, թե՛ պաստառներով արտահայտվեցին, ինչպես որ ծրագրել էին և դեռ Փիրենջեքը ցույցի վերջում երկարաշունչ ճառ արտասանեց, թեպետ դա էլ արգելված էր (սրա դեմ Ցեղասպանության ճանաչման հանձնաժողովը դիմել է իրավական քայլերի):

Բեռլինի «Մեծ արշավ»-ի և Պոլսո համագումարի մեջ ուղղակի կապ կա՞ր. շատ հասկանալի է՝ սփյուռքահայերին ահաբեկել և զգուշացնել այն պետություններին, որոնք պատրաստվում են Հայոց ցեղասպանությունը ճա-





# ՄՈՒՍՏԱՏԱ ԲԵՄԱԼԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Իթքիհատական կառավարության անկման և նոր կառավարության ստեղծման ժամանակ, երբ ինքնավարության կարգավիճակը էր «Իթքիհատ վե քերաքի» կուսակցությունը և նրա հանցագործ ղեկավարները փախել էին Թուրքիայից, ամեն կողմից սկսվեցին ճնշումներ և պահանջ ոճրագործներին պատժելու համար: Մոհամմեդ Վահիդդին Վեցերորդի հրամանով ստեղծվեց **Արտակարգ Զինվորական ատյան**, որի կազմում ընդգրկվեցին թուրքական բանակի բրիգադի գեներալներ:

Թուրքական զինվորական ատյանում հանդես եկան բազմաթիվ թուրքեր, որոնք իրենց վկայություններով ապացուցեցին Երիտթուրքական կառավարության իրագործած հայ ժողովրդի զանգվածային կոտորածներն ու ջարդերը, ունեցվածքի վրան-թալանը:

**1919 թվականի հունվարի 27-ին** զինվորական ատյանում վկայությամբ հանդես եկավ Մուստաֆա Քեմալը՝ ապագա Աթաթյուրքը: Նա ասաց. «Մեր հայրենակից փաշաները իրագործեցին անասելի և աներևակայելի հանցագործություն դիմելով ամեն տիպի դեսպոտիզմի. կազմակերպեցին հայերի տեղահանությունը և կոտորածը. այրում էին ծովեր երեխաներին, նրանց վրա

նավթ լցնելով, բռնաբարում էին կանանց և երիտասարդ աղջիկներին՝ իրենց ծնողների առաջ, ոտք ու ձեռքերը կապած, յուրացնում էին նրանց անշարժ և շարժական գույքը, հոր ու մորից պոկում էին աղջիկներին և տանում հարեն: Դժբախտության մեջ գտնվող մարդկանց բշում էին Միջագետք՝ ճանապարհին նրանց ծաղրելով: Հազարավոր անմեղ մարդկանց նստեցնում էին մակույկների մեջ և խեղդում ծովում: Նրանք հայերին դրել էին այնպիսի վիճակի մեջ, որը իր ազգի պատմության մեջ չի տեսել ոչ մի ազգ»:

**Paul de Veou. La chute d'Alexandrette. Paris, 1938, p.121-122**

Այս վկայությունը դժվար չէ գտնել Զինվորական ատյանում գործերի մեջ, ինչպես նաև հատուկ «Թաքվիմի վեքաի» տեղեկատվական թերթում դատավարության ընթացքի մասին հրատարակված նյութերում:

Հետագայում նույն Մուստաֆա Քեմալը «Լոս Անջելես Էքզամինեթոր» թերթին տված հարցազրույցում ասել է. «Հարկավոր է գնդակահարել և ոչնչացնել Իթքիհատի բոլոր անդամներին. հենց այդ կուսակցությունն իր ցավալի քաղաքականությամբ ոչնչացրեց և աքսորեց մեկ մի-

լիոն քրիստոնյաների» («Ալիք», Թեհրան, 1926, N 59):

Եվրոմիություն մտնելու ակնկալիքով, թուրքական կառավարությունը փորձում է միջազգային հանրությանը ցույց տալ, որը ինքը քաղաքակիրթ երկիր է, կընդունի, որ եղել է ցեղասպանություն, եթե պատմաբաններից կազմված մի հանձնաժողով ապացուցի, որ պետական մակարդակով կազմակերպված ցեղասպանություն է իրագործվել հայերի նկատմամբ: Չստանալով Հայաստանի Հանրապետության համաձայնությունը հարցը պատմաբաններին հանձնելու մասին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թալիբ Էրդողանը հայտարարեց, որ եթե անվիճելի փաստ ներկայացվի, ինքը կճանաչի Հայոց ցեղասպանությունը: Նա ամենայն հավանականությամբ տեղյակ է այս կարևոր վկայությանը, սակայն գերադասում է լռել:

Չնայած Մուստաֆա Քեմալը (Աթաթյուրքը) շարունակեց երիտթուրքերի քաղաքականությունը՝ հայերի կոտորածներն ու ջարդը, ունեցվածքի հափշտակումը, սակայն շատ կարևոր է նրա վկայությունն այսօր տարածել ողջ աշխարհով մեկ:

## ՀՈԿՏԱ ՀԱԿՈՒՅԱՆ



նաչել: «Մեծ արշավ»-ը սկսվել էր անցյալ տարի Շվեյցարիայից՝ Լոզանի պայմանագրի տարելիցի նշումից, և Բեռլինից հետո տարածվելու է նաև Եվրոպայի մյուս մայրաքաղաքներ (ըստ Փերինջեթի): Թուրքերն իրենց ԶԼՄ-ներում այդ միջոցառումները ուժեղացրեցին և մեծ հաջողություն համարեցին: Գերմանիայի պաշտոնյաները տեղի տվեցին, մամուլն ու տեղյակ մտավորականությունը քննադատական մոտեցում ցուցաբերեցին, և գուցե այդ էր պատճառը, որ բեռլինաբնակ թուրքերը չմասնակցեցին ցույցերին, սակայն բացեփակ ժխտեցին Հայոց ցեղասպանությունը և քննադատեցին Բուհդեսթաֆի որոշումը: Ցավալի, այնուամենայնիվ, արիմիությունների կազմակերպության և մշակութային Workshop-ի կողմից սրահներ-

րի տրամադրումն էր այդ ազգայնամուլներին: Մտահոգիչ է նաև Գերմանահայոց կենտրոնական խորհրդի և իրենց անդամ միությունների անտարբերությունն ու չեզոքությունը, որոնք ինչպես իրենք են իրենց կայքէջում գրել՝ «ուշի ուշով, մոտիկից հետևում են անցուղարձերին»<sup>4</sup>:

## ԺՐԱՅՐ ԶՈՂԱՐՅԱՆ

### Ծանոթագրություն.

1. Բուհդեսթաֆի որոշման տեքստում չեն հիշատակված ոչ ցեղասպանություն և ոչ տարագրություն բառերը:
2. Գերմանիայի դպրոցական դասագրքերում չկա որևէ հիշատակում Հայոց ցեղասպանության մասին, այն ուսուցիչների համար օժանդակ դասագրքում է գրված, որն իբր թե պետք է ընդարձակվի և ներկայացվի մյուս ցեղասպանությունների հետ միասին, այն էլ մինչ օրս միայն Բրանդենբուրգում:
3. Գերմանահայոց կենտրոնական խորհուրդը իր մի հայտարարությունում հույների և ասորիների՝ արամեալեզու քրիստոնյաների հետ համագործակցությունը համարում է այլասերություն, նրանց (նույն երկրում, նույն ոճրագործի կողմից) ցեղասպանության մասին խոսելը՝ Հայոց ցեղասպանության նսեմացում: Այսինքն, նույն սխալը, որ Իսրայելի պետությունն անում է՝ եզակի հայտարարելով իրենցի բնաջնջումը Եվրոպայում:
4. Այն ինչ վերաբերում է Բուհդեսթաֆի կողմից սահմանված օրենքին՝ «Այսուհետև այդ տարածքում արգելվում է «սուտ» անվանել Հայոց ցեղասպանությունը», ինչպես գրում է «PanARMENIAN.NET»-ը, մնաց մեզ առեղծված: Ոչ այդպիսի օրենք կա, ոչ էլ որոշում:



# ԳՐՈՂԻ ՊԱՏՁԱՄՆ ՈՒ ՊԱՏՎԻՒՐԱՆԸ

Գրող Յրանտ Յրահանը (Յրանտ Նազարյան), ում ծննդյան 110-ամյակը վերջերս լրացավ, ծնվել է Թուրքիայի Ադաբազար քաղաքում, պապի պապը՝ Սեբաստիայում, ապուպապը՝ Վասպուրականում: Ինչո՞ւ էր Նազարյան գերդաստանը անընդհատ տեղից տեղ գաղթում: Հասկանալի է թուրքական հալածանքներից ձերբազատվելու, խույս տալու համար: Ձերբազատվո՞ւմ, խույս տալի՞ս էր: Իհարկե՝ ոչ: Ամենուր նրանց, ինչպես բռնագաղթված բոլոր արևմտահայերին, տանջահարում, հարստահարում, լլկում էին: Նազարյաններից ամենադժբախտը, սակայն, Յրանտը՝ ապագա գրողը, եղավ: Նա ոչ թե, ինչպես պապերը, սոսկ կոտորածներ՝ ցեղասպանություն տեսավ, այլ ի՞ր աչքերով տեսավ, թե ինչպես օսմանյան թուրքերը, համայն հայությանը բնաջնջելու մոլագարությանը համակված, կառափնատեցին մտավորականությանը՝ Վարուժանին, Սիամանթոյին, Ռուբեն Սևակին՝ այն էլ ոչ թե թրով ու յաթաղանով, այլ՝ բութ քարերով: Որքան էլ արտառոց թվա, դա ամենաահավոր արհավիրքը չէր, որ ապրեց այն ժամանակ Յրանտ Նազարյան անուն-ազգանունով երիտասարդը, ամենաահավորը նրա համար վերջին քեմալական տեղահանությունն էր, ավելի ճիշտ այն պահը, երբ այստեղ-այնտեղ մնացած հայերին վտարեցին և «Առանց հետ վերադառնալու իրավունքի» դրոշմակնիքով անձնագրեր տվեցին: Դա նշանակում էր, որ հայը զրկվում էր բնօրրան վերադառնալու հույսից, ակնկալիքից:

Հ. Նազարյանը, սակայն, մեծ հավատ ուներ մայրենի լեզվի գորության նկատմամբ: Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում, որտեղ ապաստանել էր, սկսեց հայերեն սովորեցնել վերապրողների զավակներին, որոնցից շատերը թուրքական, քրդական գաղթականներում էին մեծացել և մայրենի լեզուն ամբողջովին մոռացել էին:

Գրող Յրանտ Յրահանը ամենաերջանիկն էր իր գերդաստանում. ապուպապերի՝ Վասպուրականից բռնագաղթելուց ուղիղ հազար տարի անց նրան բախտ վիճակվեց Հայրենիք վերադառնալ: Վարչակարգն ի՞նչ նշանակություն ուներ. Հայրենիքում էին Մեսրոպ Մաշտոցի շիրիմը, Էջմիածնի Մայր տաճարը, Արագած լեռը, Արարատը՝ թեկուզ և գերու-

թյան մեջ: Երևանում Յրահանը համոզվեց, որ ճակատագիրն այդքան բարեհաճ է եղել իր նկատմամբ, որպեսզի դարավոր նախնիների, մեկ ու կես միլիոն անթաղ նահատակների պատգամ-պատվիրանները փոխանցի սերունդներին: Այդ հավատամքով նա գրեց «Իմ կյանքի վեպը», «Խոսում են անմահները» գրքերը, որոնք և «Կյանքն ընդդեմ մահվան» ասքապատումի ատաղձը դարձան:

Ուշագրավ է արձակագրի վերջին չափածո ստեղծագործությունը: Մահից առաջ ավարտած բանաստեղծությունում (ներկայացվում է ստորև), Յրանտ Յրահանը վստահեցնում է, որ Արարատն ու Արագածը երբևէ հանդիպելու, միավորվելու են:

Հույս, որի իրականացումն ինձ այնքա՞ն մոտալուտ է թվում, երբ մեր գերված բնօրրանին նայում եմ հաղթանակած Շուշիի բարձունքից...

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿՅԱՆ

### Երկու բարձունք

Աջից Արագած, Չախից Արարատ՝ Կանգնած դեմ-դիմաց՝ Երևան, անարատ: Երկուսն էլ հստակ, Լուրթ երկնքի տակ, Սիրով ոգևոր, Լռությամբ հզոր Կիտուն են կարոտ Ու թախիծ վերքոտ: Քանի՞ հազար դար Այսպես անդադար Նայում են իրար, Այս վիշտն են տանում, Բայց հույսով ապրում...



### ՎԻԿՏՈՐԻՆԱ

## ՄԱՍՈՒՆՔՆԵՐ ՀԱՅՈՑ ԱՆԿՐԿՆԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

- Եթե ըսվեր, հոգեվարքի վերջին պահուղ, թե օր մը ևս կշնորհվի այս աշխարհին մեջ, անցուցածո կյանքիդ ո՞ր օրը կուզեիր ապրել կրկին, է՛յ իմաստուն բարեկամ: Ո՞ր գեղեցիկ օրը անվերադարձ օրերուդ՝ պիտի ուզեիր, որ ետ գար ժամանակին խորերեն: Առաջին սիրույդ առաջին թրթի՞ռը արդյոք, գերագույն պսակո՞ւմը հաղթանակիդ, երբ փառքդ դափնիի վերածվեցավ արժանավոր ճակատիդ շուրջ... Ո՞ր օրդ պիտի ուզեիր, որ ետ գար, երջանիկ օրերով հարուստ, ո՞վ երջանիկ մարդ, երբ մայրամուտ է արդեն և հորիզոնիդ վրա մութ ստվերները կիջնեն...

- Եթե տրվեր, օ՛, եթե տրվեր վերապրիլ օր մը կյանքես, երագի գույն աչքերով այն քնքուշ էակը չէր, որ պիտի ուզեի գտնել կրկին, հաղթանակի



գինովությունս չէր, ներշնչումի մեծ պահս չէր, վայելքի և երջանկության գիշերներս չէին, առագաստի իրկունս չէր և առաջին զավակիս առաջին ճիչը չէր... Եթե տրվեր, օ՛, եթե տրվեր մահվան առջև օ՛ր մը ևս ապրելու կյանք, պիտի ուզեի, որ գար ինձի մանկությունս...

Ինձմե առաջ մեկը ըրա՞ծ է այս

հարցումը, մեկը տվա՞ծ է այս պատասխանը: Բայց ես գիտեմ նաև, թե աշխարհի անկյուններում մեջ մոռցված բազմություն մը կա, տասնյակ մը հազար ինձի պես տրտում տղաք, որոնք աշխարհի ամենեն դժբախտ մարդիկը եղան ու պիտի մնան այդպես, որովհետև մանկություն չունեցան: Գիտեմ, թե անուն չունեցող բան մը եղավ մեր մանկությունը, թվառության ու տառապանքի դժոխային խառնուրդ մը, որուն հիշատակն իսկ, տարիներ ետք, դեռ կպահե մեր սրտերը կարծր ու հոգիները խանձված:

Մանկություն չունեցանք, որովհետև հայ էինք ու որբ էինք...

**Սիրելի ընթերցող,**  
- Ո՞վ է այս պատումի հեղինակը:  
- Ինչպե՞ս է գիրքը կոչվում:





**(1-ին մասը՝ թիվ 6-ում)**

Պատերազմական գործողությունների զարգացումների, ռազմաճակատների տարբեր հատվածներում տեղի ունեցող սպասելի և անսպասելի տեղաշարժերի և մնացյալ ամեն ինչի մասին **Ջոհրապը** խորհրդածում էր՝ չափանիշ ունենալով բարոյականի այն տեսակը, որը բարոյագուրկ և արյան ծարավ ազգերին բնավ չի առաջնորդել՝ «ժողովուրդներն ուղղակի իրենցով կառավարելու» հրամայական խնդիր ունենալով: «Ուրիշ տեսարան մը, որ ազգերու բարոյականին մասին մեծ վավերագիր մըն է, ան ալ վերջին պահուն Դելեմաց (Յունաստանի - Ա. Ա.) դրժումն է դաշնակիցներուն հետ քալելու տրված որոշումին»:

Փոքր «ազգերու անկումին» խնդիրը քաղաքական թատերաբեմում ավելի տեսանելի է, բայց «վատահելու չէ» քանզի, ըստ Ջոհրապի, անվնաս դուրս ելնելը «մեծ պատերազմեն» զոհն իր կողմից պատճառաբանվում և արդարացվում էր՝ իհարկե անտեղյակ հոթիհատի չարանենգ ծրագրին, և պատահական չէ, որ Ջոհրապը անուղղելի լավատեսի համբավ ուներ: Այս ամենով հանդերձ, Մեծ եղեռնի հետևանքները հայոց համար շարունակապես զգալի են ոչ միայն այն պատճառով, որ պատմական բնօրրանից տեղահանված մի ողջ ժողովուրդ ցեղասպանության զոհ դարձավ, այլ նաև ծրագրավորված բնաջնջվեց ժողովրդի ամենակենսատու ՈԳԵՂԵՆ շերտը՝ մտավորականությունը՝ ամենալայն ընդգրկմամբ: Թեոդիկի եղեռնապատումի եզակիությունը մեկ անգամ ևս այս ուշագրավ հանգամանքով է փաստվում:

Ազգապահպանման հրամայականներից կարևորագույնը, թերևս, Դայրենիքի գիտակցումն ունենալն է: **Ակնունու (խաչատուր Մալումյան)** համար, որը պայքարի բովում թրծված ազգային-քաղաքական գործիչ էր, լավատեղյակ՝ արևելահայոց և արևմտահայոց դարավերջի և դարասկզբի ազգային նկրտումներին, Դայրենիքը նաև հավաքականության խորհուրդ և իմաստավորում ուներ, առանց որի ամեն ազգի գլխին դանկլյան սրի պես կախված է ոչնչացման սպառնալիքը: «Ազատագրական արյունը չէ, որ սպառնում է մի ազգին, այլ թափառական կյանքը՝ անվերջ տարագրությունը: Մի՛ մոռացիր, որ քան տարուց ավել է, ինչ Օսմանյան բռնապետությունը տարված է հրծիգությամբ, սրով և կոտորածով. մի նպատակ ունի՝ վերացնել հայերին, դարձնել Դայաստանը անհայաբնակ,

որպեսզի այդպիսով մի մեծ գերեզմանաքար դրվի այն մեծ հարցի վրա, որ զբաղեցնում է ամբողջ եվրոպան՝ «Հայկական հարց» անունով, և որը 600 տարվա ժողովրդի սրտում ծնել է և՛ հույս, և՛ հերոսություն, և՛ մարդկային մեծ իդեալներ... Այո՛, իդեալներ, որոնց իրագործման համար հայությունը միայն մի վայր ունի՝ Դայաստան: Մայր հայրենիքից դուրս հայ ժողովուրդը ազգ չէ... Մեզանից ավելի հալածական տգետ մեր նախնիքը՝ տանջանքների բովից անցնելով՝ մեզ թողեցին մի մեծ ժառանգություն՝ Դայրենիք: Մի՛թե մենք մեր ապագա սերունդներին պետք է թողնենք լոկ հայկական գաղութներ...»:

Դայրենյաց դարավոր տառապանքի տրոփյունը իր հետ բերում է հասարակական լայն գործունեություն ծավալելու՝ դրանով իսկ դույզն-ինչ նպաստելու հանրային կարծիքին, որը «կըրնա մեծ շահեկություն բերել

գատուիր, սակայն ճշմարտութիւնը ժողովուրդին գլխուն մի՛ նետեր: Երբ ճշմարտութիւն մը անհաճոյ է, զայն ներկայացուր այնպէս, ինչպէս բարեկիրթ մարդ մը սրահին մեջ կը ներկայացնէ իր համակրելի մէկ անծանօթը... զգացումը մեծ ազդակ մըն է. սակայն պետք չէ անոր դիմել, եթէ գործունեութեան հետեւանքը պիտի չվաւերացուի միտքին կողմէ...»:

Կարծես թէ Տ. Քելեկյանը խնդրո առարկա է դարձնում կոչված զգացմունքային, բանականությունից, տևական կշռադատումի չենթարկված հայրենասիրական գեղումները, որոնք սոսկ օդն ի կախ գեղումներ էլ մնում են, եթե անտեսենք նրանց բերած ավերածությունների սպառնալի հետևանքները: Դետևանքներ, որոնք այս կամ այն կերպ իրենց զգացնել տվել են մեր պատմության ամենատարբեր քառուղիներում, մասնավորապես, Մեծ եղեռնին նախորդած տարին, երբ իրականությունը բոլորովին այլ էր, երազանքը, ազգային ռոմանտիկական տար-

բեր դրսևորումներով, բոլորովին այլ: «Անձնական պայքարները հանրային կարծիքին գրգռումին ատեններուն՝ կրնան մեծ շահեկանություն ընծայել, բայց գրեթէ միշտ նողկանք կհաղորդեն այդ հիուանդոտ հետաքրքրութեան: Գաղափարի պայքարն, ընդհակառակն, երբ հանրութեան շահը կշօշափէ եւ այն համոզումը կներշնչէ թէ անձնական նկատումներէ գերիվեր է, մնայուն ազդեցութիւն կգործէ»: Ասել է, թէ պայքարի (քաղաքական, սոցիալական և այլն) հիմնավորվածության, վերջնահաշվով՝ արդարացվածության խնդրահարցումն է առավելապես կարևորում հասարակական մտքի տեսաբան-հրապարակախոսը, առանց որի «մնայուն ազդեցության» փոխարեն կգործի հակազդեցության օրենքը՝ բոլոր աղետալի հետևանքները ի ցույց դնելով: Դամենայնդէպս, Տ. Քելեկյանի պես ազգային-հասարակական կյանքում թրծված անհատականությունը, որ ուներ նաև եվրոպական մտքի փորձառություն թէ՛ ազգային, թէ՛ հասարակական կյանքում այնպիսի կենսադիրքորոշում և մտավորականի պահվածք-գործելաոճ, որ շատերի կողմից ոչ միայն ընդունելի, այլ նաև ընկալելի չէր. այն, ինչ երկի հետևանք էր Դայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության որդեգրած գաղափարների:

**ԱՐՄՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների**  
**թեկնածու**

**ԹԵՈԴԻԿԻ ԵՂԵՌՆԱՊԱՏՈՒՄԸ. 2**

գաղափարի պայքարին». այսպիսի համոզում ուներ ժամանակի մեծ հրապարակախոս **Տիրան Քելեկյանը**, որ, տարիներ շարունակ խմբագրելով թուրքական մեծահամբավ «Սաբահ» օրաթերթը, թուրքական հրապարակախոսության ռահվիրաներից էր: 1908թ. Սահմանադրությունից հետո թուրք մամուլի զարգացման և հասարակական կյանքին իր նպաստը բերած այն երևելի մտավորական գործիչը, որի ամեն մի կարծիքի և դիրքորոշմանը սկզբունքային նշանակություն էին տալիս, մեծագույն հարգանք տածում հասարակական կյանքի զարգացմանը և բարեփոխություններին նպաստող նրա ամեն մի հրապարակային առաջարկին և չափազանց հիմնավորված տեսակետին: Ժամանակակիցների վկայությամբ, բազում թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ են բարեխոսել Բ. Դռան և անձամբ Թալեաթի առաջ Տ. Քելեկյանի անունը տպագրվող հայ մտավորականների ցուցակից հանելու համար՝ որպես պետությանը իր անմնացորդ եռանդը բերած գործիչ:

Բայց նման սկզբունքային մտավորականներից «սպասվող» մտավախությունը չէր կարող հայաջինջ քաղաքականություն ծրագրավորողներին հետ պահել իրենց նպատակներից, որոնցից առաջնայինը հայության Ոգին ոչնչացնելն էր: Տ. Քելեկյանի պես անձինք այդ նպատակների իրականացման ճանապարհին ոչ միայն կարող էին խոչընդոտ հանդիսանալ, այլ նաև անսպասելի զարգացումների տեղիք տալ. «Ճշմարիտն մի՛



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԶՈՒՆԻՒ

**Ազգային գաղափարախոսության վերաբերյալ իր տեսակետներն է արտահայտում հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ալբերտ Նալչաջյանը**

Մենք ազգային գաղափարախոսություն չունենք: Բազմիցս գրել, խոսել են, որ մեզ ազգային գաղափարախոսություն է պետք: Դեռ գրված, ձևավորված, դասավանդվող մեծ քանակությամբ չկա հայ իրականությունում: Մի շարք մտավորականներ՝ պատմաբաններ, գրականագետներ, հոգեբաններ, զբաղված են այդ գործով, բայց միավորող ուժ չկա: Պետական պատվեր է պետք:

Ազգային գաղափարախոսությունը ազգի ուղեցույցն է: Նախաքրիստոնեական Հայաստանի պետական և ազգային պատկերացումները մեզ հայտնի չեն, քանի որ այդ ժամանակաշրջանի վերաբերյալ մեզ գրավոր տեղեկություններ չեն հասել: Հավանաբար, այդ ժամանակ հայերն առաջնորդվել են բազմաստվածության սկզբունքներով: Տիրապետող Մեծի օրոք արդեն գործում էր միապետական գաղափարախոսություն, այսինքն՝ թագավորի գլխավորությամբ ուժեղ, կենտրոնացված պետությունը հոգ էր տանում ազգի մասին, ընդլայնում պետության սահմանները և այլն: Հայոց թագավորները միապետական գաղափարախոսությամբ են առաջնորդվել, իսկ քրիստոնեության ընդունումից հետո հիմնական կորիզը դարձել է կրոնականը: Մեր գաղափարախոսությունը միապետական ու կրոնական է եղել, բայց ավելի շատ կրոնական, քանի որ, երկար ժամանակ ունենալով կրոն և եկեղեցի, չենք ունեցել պետություն:

17-18-րդ դարերում Եվրոպայում նոր ազգային պետությունների առաջացման հետ միասին առաջ եկան նաև նոր ազգային գաղափարախոսություններ: Իսկ Հայաստանում ազգային գաղափարախոսությունն իր իսկական իմաստով սկսեց ձևավորվել 19-րդ դարի 2-րդ կեսից, երբ ստեղծվեցին առաջին կուսակցությունները՝ Արմենականը՝ 1835-ին, Հնչակյանը՝ 1887-ին և ՀԳԴ-ն՝ 1890-ին, որոնց որդեգրած գաղափարախոսությունները հասել են մեզ: Սակայն դրանք չի կարելի ազգային գաղափարախոսություն համայնել, քանի որ հատվածական են և կուսակցականացված: **Համազգային գաղափարախոսության մեջ չի կարող արտացոլված լինել միայն մեկ կուսակցության տեսակետը, որը հենվում է ինչ-որ սոցիալական ուժերի վրա: Այստեղ ամբողջ ազգի շահերը պետք է արտահայտված լինեն:** Ներկայիս կուսակցական գաղափարախոսություններից որոշ բաներ կարելի է ներառել ազգային գաղափարախոսության մեջ, սակայն ամբողջությամբ ազգային գաղափարախոսությունը պետք է կառուցել ոչ թե կուսակցությունների, այլ՝ ժողովուրդների գաղափարախոսությունների հիման վրա, այն պետք է ստեղծել՝ հիմք ընդունելով ազգային յուրահատկությունները, աշխարհագրական դիրքը, ազգի արժեքաբանությունը և այլն:

Ազգը, պետությունը ղեկավարելու երկու մեթոդ կա՝ իրադրական և հեռահար: Իրադրականն այն է, երբ իշխանությունն անում է այն, ինչ պահանջում է իրադրությունը, իսկ հեռահարը ապագայի համար մշակվող ծրագիր է: Իրադրական մեթոդով առաջնորդվել սխալ է, քանի որ դա մշակում է «յուլա տանել» պետությունը, որ ազգը գոյություն ունենա: Այսօր մեր երկրում հիմնականում իրադրական մոտեցումն է գործում. չկա գաղափարախոսություն, չի դասավանդվում, ազգը, մատաղ սերունդը չի սովորում այն:

Ազգի զարգացման, պետականության հզորացման և տարածքային ընդլայնման խթանը ազգային գաղափարախոսությունն է. եթե ազգը չունեցավ ծրագիր, նպատակ, ապա խղճուկ գոյություն կպահպանի, կամ էլ ընդհանրապես կվերանա: Այդ իսկ պատճառով, մեզ ավելի քան երբևէ գաղափարախոսություն է պետք, որն իր մեջ կներառի մի

շարք բաժիններ և դրույթներ.

**1. Գիտական պատկերացում տվյալ ազգի առանձնահատկությունների մասին կամ էթնոհոգեբանական նկարագիրը.** Եթե ուզում ենք ունենալ ազգային, պետական գաղափարախոսություն, ապա, առաջին հերթին մենք պետք է իմանանք, թե մենք ովքե՞ր ենք, որտեղի՞ց ենք գալիս, ո՞ւր ենք գնում, ի՞նչ հատկություններ ունենք: Ամբողջ հոգեբանական կերտվածքը մենք պետք է լավ պատկերացնենք, որպեսզի կարողանանք ճիշտ ծրագրավորել մեր գործունեությունը: Ազգային ինքնուրույնություն պետք է լինի: Եթե ծրագրավորում ենք, ասենք՝ գիտության, տեխնիկայի, արտադրական տեխնոլոգիաների տարբեր ուղղությունների զարգացումը, ապա պետք է իմանանք, թե մեր ուժերը բավարարո՞ւ են դրա համար (ոչ միայն քանակական, այլև որակական տեսակետից):

**2. Պետական կառուցվածք և ձև.** Մեզ պետք է ուժեղ նախագահական իշխանություն, այնպիսի իշխանություն, որի ժամանակ հիմնականում պաշտպանվեն քաղաքացիների և պետության իրավունքները: Համենայն դեպս, պատմական որոշակի հատվածի համար կարող ենք նախատեսել պետական կառավարման որոշակի ձև. դա կիսաավտորիտար, կիսադեմոկրատական յուրահատուկ պետական կառույց է, որը հնարավոր է ստեղծել: Պետական կառավարման ձևն արդեն ինչ-որ չափով գոյություն ունի, պարզապես այն պետք է կատարելագործել: Իսկ իշխանության տարանջատման առումով երեքի փոխարեն կարելի է առանձնացնել հինգ իշխանություն՝ օրենսդիր, գործադիր, դատական, կրոնական և ԶԼՄ-ի:

**3. Էթնոկոնոմիկա.** Պետության հզորացման գլխավոր պայմանը զարգացած տնտեսությունն է, իսկ դրա համար պետք է ուսումնասիրել ազգի թե՛ ներուժը, թե՛ մտավոր կարողությունը: Պետք է մտածենք, թե տնտեսության ո՞ր ճյուղերն են մեզ համար ավելի նպատակահարմար. արդյո՞ք էլեկտրոնային արտադրությունը, նորագույն տեխնոլոգիաները մեր երկրում կզարգանան հաջողությամբ և մեր ժողովրդի մտածողությունը պատրաստ է դրան:

Հայկական էթնոսը աշխարհի 2500 էթնոսներից այն մեկն է, որը գիտական բարձր մակարդակ ունի, ի տարբերություն շատ էթնոսների, որոնք դեռ ապրում են Քարե դարի մակարդակում: Այսօր հայկական էթնոսն իր գիտական բարձր մակարդակով կարող է զարգացնել և՛ մաթեմատիկան, և՛ հասարակական գիտությունները, և՛ տարբեր տեխնոլոգիաները: Հայը կարող է, ֆինանսների առկայության պայմաններում, նույնիսկ ատոմային ժամանակակից ռեակտորներ կամ էլ գերժամանակակից, ապագա էներգետիկ սարքավորումներ ստեղծել, քանի որ ունի մտավոր շատ մեծ կարողություններ: Ցավոք, շատ հայ մտավորականներ զբաղված են այլ ազգերից ընդօրինակելով և նրանց աշխատանքը գերազնահատելով. եթե արտասահմանյան է, ուրեմն լավն է: Գերմանացին, հրեան, ամերիկացին կարող են լավ բաներ ստեղծել, իսկ հայը չի՞ կարող, հայը պիտի ընդօրինակի՞: Դա գալիս է նրանից, որ մարդիկ ազգային գաղափարախոսություն չունեն: Եթե նրանց առաջ դնենք գաղափարախոսությունը, և նրանք կարողային, որ հայը հասել է զարգացման այն մակարդակին, որ ամեն ինչ կարող է անել, ապա նրանք երիտասարդ տարիքից կիմանային դա և կմտածեին իրենց առջև ծառայող սեփական խնդիրները լուծելու մասին, այլ ոչ թե կփորձեին պարզել միայն, թե «ամերիկացի քեռիները» կամ մյուսները ի՞նչ են մտածել այդ խնդրի մասին: Իհարկե, պետք է ուսումնասիրել նաև միջազգային փորձը զարգացումն արագացնելու համար, բայց հիմնականում պետք է հենվել սեփական ընդունակությունների վրա:

**4. Կրթություն.** Ազգային գաղափարախոսության մեջ մի



առանձնահատուկ տեղ պետք է գրավի դպրոցի, կրթության և դաստիարակության հարցը: Պատմության ընթացքում բոլոր սոցիալական բարենորոգիչները, մտածողները, որոնք ցանկացել են կառավարել հասարակությունը, առաջին հերթին շեշտը դրել են կրթության և դաստիարակության վրա: Այս տեսակետից՝ մեր երկրում վիճակը տուկալի է, մակարդակը՝ ցածր: Մի քանի տարի ստեղծվում էր ՀՀ պետական կրթակարգ, 2004-ին այն դրվեց լայն քննարկման, որը կառավարությունը հաստատեց: Դա այժմ դարձել է ուղեցույց: Ես մանրամասն ուսումնասիրել եմ այդ փաստաթղթերը, և իմ ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դա կիսազրագետ փաստաթուղթ է և՛ լեզվական, և՛ գիտական տեսակետից: Դրանով չի կարելի ղեկավարվել: Փորձեցի բացատրել, որ պետք է այն վերանայել, բայց իմ առաջարկը սվիններով ընդունեցին: Չի կարելի կրթությունը կազմակերպել այդ փաստաթղթերի հիման վրա, քանի որ այնտեղ չկա այն ըմբռնումը, թե ինչ բան է երեխան, ինչպես է նա զարգանում և ինչ դասավանդել նրան: Փաստաթղթում չեն տարբերակված նաև առաջնային և երկրորդական առարկաները: Կա ազգային բառը, բայց ազգային կրթություն և դաստիարակություն այնտեղ գործնականում չկան: Դա շատ վտանգավոր միտում է, որովհետև ձգտում են նմանվել արտասահմանին: Սեփականը, ինքնաճանաչումը և դրա վրա հիմնված կրթական կարգը չունենք:

**5. Կրոն.** Որևէ ազգային գաղափարախոսություն պետք է նաև հատուկ տեղ հատկացնի կրոնին, բայց դա պետք է լինի գաղափարախոսության միայն մեկ մասը և ոչ թե՛ ամբողջը:

Հայաստանն սկսեց տարածքներ կորցնել այն ժամանակ, երբ քրիստոնեությունն ընդունեց: Քրիստոնեական գաղափարախոսությունը, որ մարդասիրություն է քարոզում, լավ է այն ժամանակ, երբ լուծված են ազգային հարցերը, գծված են պետության սահմանները և ազգային մեծ խնդիրներ չկան: Ես եկեղեցու, կրոնի դերն ընդունում եմ. քրիստոնեության մեջ շատ մարդասիրական բաներ կան, մեր եկեղեցին, անշուշտ, մեծ դեր է խաղացել ազգապահպանության հարցում, սակայն երբ գալիս է պատմական պահը, որ պետությունը պետք է ղեկավարվի ավելի մարտական գաղափարախոսությամբ, չի կարելի ավելի քրիստոնյա լինել, քան Քրիստոսը, քան Հռոմի Պապը, քանի որ թշնամիները դրանից օգուտվում են, շահագործում են այդ բարությունը: Նույնիսկ այն ժամանակ, երբ թուրքերը մի շրջանում մորթում, տեղահանում և թալանում էին հայերին, և երբ այդ լուրը հասնում էր մյուս շրջանի հայերին, նրանք չէին հավատում, որ մարդ արարածը կարող է այդպիսի բան անել: Պատճառը սխալ դաստիարակությունն է: Քանի որ մարդն ի բնե ագրեսիվ է, ապա մեզ կոշտ գաղափարախոսություն է պետք: Կրոնի մեջ էլ, գուցե, պետք է փոփոխություններ մտցնել, որպեսզի հայը խեղճ չլինի և կարողանա ղեկավարել չարին ու ագրեսիային: Մեր կրոնի բնույթը ինքնին պահպանողական է, և հոգևորականները հակված չեն ինչ-որ բան փոփոխելու: Սխալ են համարում մեր հոգևորականների այն միտքը, թե հայը քրիստոնյա լինելով է հայ: Երբ երկար դարեր ազգը դավանում է կրոն, ապա այն կարող է դառնալ ազգի էթնիկական հատկանիշներից մեկը, որոնք մի քանիսն են՝ լեզուն, հոգեբանական առանձնահատկությունները, մտածելակերպը, բնավորությունը և այլն: Այս բոլորը միասին կազմում են էթնիկականությունը: Երբ մենք ասում ենք հայ, հայկականություն, չպետք է հասկանանք միայն քրիստոնյա: Քրիստոնյա ժողովուրդներ շատ կան, հապա մենք ֆրանսիացիներից, ռուսներից ինչպե՞ս, ինչո՞վ ենք տարբերվում:

Սրանք են գաղափարախոսության հիմնական բաժինները, որոնց կիրառման դեպքում հնարավոր կլինի մեծ առաջընթաց արձանագրել: Ներկայումս այս ուղղությամբ աշխատանքներ տարվում են, սակայն մտավորականներին միավորող ուժ չկա, պետական պատվեր չկա, հակառակ դեպքում այն շատ կարճ ժամանակում սեղանին կդրվի: Այն



կլինի երկու տարբերակով՝ կարճ, որ գրպանի, սեղանի գիրք դառնա, և ընդարձակ՝ ավելի խորը ուսումնասիրությունների համար: Այնինչ այսօր մեր երկրում ոչ միայն ըստ արժանվույն չի գնահատվում գիտնականի աշխատանքը, այլև աշխատանքային պայմաններ չկան: Տարբեր զարգացած երկրներում (Ֆրանսիայում և այլուր) հատուկ էթնոհոգեբանական ինստիտուտներ կան հարյուրավոր աշխատակիցներով, իսկ ՀՀ-ում ո՞վ է զբաղվում էթնոհոգեբանությամբ՝ ես, քույրս, իր տղան ու էլի մի քանի հոգի: Ցավոք, մեր գործը շարունակողներ չկան: Անգամ օժանդակություն չենք ստացել Հայոց ցեղասպանության խնդիրները բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար 6 հոգանոց խումբ ստեղծելու հարցում: Ես այժմ միայնակ զբաղվում եմ նաև այս խնդրով:

**Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և ներողություն խնդրելը երեխայական բաներ են: Մեր հիմնական պահանջը պետք է լինի հողերի վերադարձը, իսկ դրան էլ մենք միայն ուժով կարող ենք հասնել, քանի որ մեզ ոչ ոք հող չի մվիրի: Եթե թուրքերը նույնիսկ ներողություն խնդրեն, դա ձևական կլինի: Ըստ էության, նրանք ներքուստ չեն փոխվի. ազգերն արագ չեն փոխվում, նույն ագրեսորներն են, նույն սրիկաները:** Նրանք դեռ գաղափարախոսներ ունեն, որ ասում են՝ այս Հայաստանն էլ է պետք վերացնել, որ մեր հոգսերը պակասեն: Հայկական հողերի վերադարձը մեզ շատ է անհրաժեշտ, քանի որ հայ ազգը այս փոքր հողակտորի վրա ապագա չունի: Մեր երկրի ընդերքը այդքան հարուստ չէ, նավթի պաշարներ չունենք, ծովից կտրված ենք, շրջապատված ենք թշնամիներով: Մենք, ուրեմն, պետք է ընդլայնենք մեր պետության սահմանները՝ այն հնարավորինս նույնացնելով մեր հայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհի սահմաններին: Եվ այն փոքրիկ տարածքները, որ հետ ենք բերել, ոչ մի կերպ չի կարելի վերադարձնել:

Եթե ուզում ենք, որ մեզ հետ էլ հաշվի նստեն, ապա պետք է հզորանանք: Պետությունը քնքույշ հարաբերությունների վրա կառուցել չի կարելի, և եթե ուզում ենք վրեժ լուծել թուրքից, ապա պետք է համարժեք պատասխան տանք: Ազգերի միջև դաժան պայքար է մղվում: Եթե ուզում ենք մեր հայրենիքը վերադարձնել, ապա պիտի նաև դաժան լինենք: Համամիտ չեն այն պատճառաբանության հետ, որ թուրքերը 60-70 միլիոն են և նրանց հնարավոր չէ հաղթել: Հնարավոր է. Թուրքիան բազում թշնամիներ ունի:

Մենք կարող ենք լինել ուժեղ, հզոր, զարգացած, կարող ենք վերադարձնել մեր պատմական հայրենիքը, միայն թե ցանկանանք: Ապրենք՝ այդ ցանկությունը նպատակ դարձնելով և հետևենք մեր ազգային իղձերին:

**Զրույցեց ՎԻԿՏՈՐՅԱ ԲՈՒՌՆԱՋՅԱՆԸ**



## Պարիս Հերունի

# ԳԻՏՆԱԿԱՆ ԵՄ, ԱՇԽԱՏՈՒՄ ԵՄ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԱՄԱՐ

Գիտնականները քաղաքական գործիչներ չեն, որ ճաշեր ասեն, հանրությանը ճանաչելի դարձնեն իրենց անձն ու անունը: Առհասարակ, ես դա չեմ սիրում: Գիտնական եմ, աշխատում եմ հայրենիքիս համար:

Իմ կյանքի կենդարյա գիտական մի շարք ուղղություններում գերազանցել եմ համաշխարհային մակարդակը: Վերջին մի քանի տարիների ընթացքում այնպիսի նորարարություններ են արել, որ անգամ Ամերիկյան, Եվրոպան, Ռուսաստանը չունեն: Միայն փոքրիկ Հայաստանն ունի մենք՝ Ռադիոֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտը, աշխարհում մեծ համբավ ունենք. բազմաթիվ երկրներից մարդիկ են գալիս, որ տեսնեն մեր ռադիոաստղափոսական հզոր ու հսկա անտենան: Առհասարակ, զարգացած երկրները հզոր անտենա սարքում են երկու նպատակով, առաջին՝ տիեզերքը ուսումնասիրելու, որը մեծ ուղղություն է. այսօր շատ երկրներ են զբաղվում աստղագիտությամբ՝ ռադիոաստղագիտությամբ և սարքում են մեծ անտենաներ, երկրորդ՝ տիեզերական հետազոտությունների համար, երբ տիեզերանավը գնում է դեպի հեռու մոլորակներ և նրա հեռավորությունը երկրից դառնում է միլիոնավոր կիլոմետրեր: Եվ որպեսզի այդ հեռավորության վրա կառավարեն տիեզերանավը, կարողանան լուսանկարներ անել և ինֆորմացիաներ ընդունել, մեծ և հզոր անտենաներ են պետք երկրի վրա:

Մենք սարքեցինք հզոր ու շատ կարճալիք այնպիսի մի անտենա, որն անենալավն է.

ունի սուր ճառագայթում, կայուն է և սեփական աղմուկները շատ ցածր են, այնքան ցածր, որ մեծ հայտնագործություն եղավ: Բանն այն է, որ ողջ աշխարհում տարածված է այն կարծիքը, թե տիեզերքը՝ ամբողջ աշխարհը, ծագել է «Մեծ պայթյունի» (**Big bang**) հետևանքով, և գիտնականները դա ընդունում են: Շատ գիտնականներ քայլ առ քայլ հաշվել են, թե ի՞նչ հզորությամբ և ինչպե՞ս է դա եղել, և «համոզված են», որ առաջին պահին ճառագայթած էներգիան պետք է մինչև հիմա տիեզերքի մեջ լինի: Ուրեմն, տիեզերքում այդ պայթյունից պետք է լինի փոքր չափի ճառագայթում՝ ռելինգտո, որի հզորությունը չափում են Կելվինի աստիճաններով, Կելվինի սանդղակը բացարձակ է՝ 0-ն -273 ցելցիուս: Այդ գիտնականների համոզմամբ՝ այդ ճառագայթումը՝ ռելինգտո, պետք է լինի 2,7 Կելվին: Այս ցուցանիշը տասնյակ տարիներ գիտնականները մեծ անտենաներով փորձում էին որսալ, բայց քանի որ սեփական աղմուկները շատ բարձր էին քան 2,7-ը, չէին կարողանում հայտնաբերել: ԱՄՆ-ում երկու հոգի (մեկը հրեա) լուր տարածեցին, թե ոչ այնքան մեծ անտենայով հայտնաբերել են ռելինգտո և գոյություն ունի 2,7-ը: 1978-ին երկուսն էլ Նոբելյան մրցանակ ստացան:

Ես սարքեցի նոր տիպի մի անտենա, որի արտոնագիրը (պատենտը) կոչվում է **Հերունու հայելային ռադիոաստղադիտակ** և որն ունի բացառիկ առավելություններ: Կառուցումը սկսվեց 1976-ին և տևեց տասը տարի: Այս հսկա անտենան մեր ուժերով ենք սարքել, աշխարհում նմանը չկա. ունի 54 մետր տրամագիծ, 50 միկրոն ճշտությամբ

մակերես, որով պայմանավորված է նրա շատ կարճալիք լինելը: Այս մեծ հայելային անտենան անշարժ է, դրա համար էլ ճշգրիտ է: Անտենան սարքելուց հետո սկսել ենք դիտումներ և հայտնագործություններ անել և, միաժամանակ, նրա պարամետրերն ու բնութագրերը չափել: 1988թ. նոյեմբեր ամսին չափեցինք, թե որքան է անտենայի սեփական աղմուկը, քանի որ դա նոր տիպի սխտեմ էր, համոզված էի, որ եղածներից ցածր պիտի լինի, իսկ թե որքա՞ն չէի կարող ասել: Երբ չափեցինք, բոլորս ապշեցինք. սեփական աղմուկի ցուցանիշը 2,8 Կելվին էր (առկա էր նաև օդի խոնավությամբ պայմանավորված ճառագայթումը): Սեփական աղմուկն ավելի քիչ էր, այստեղից հետևություն էր ցուցանիշը 2,7-2,8 է, ապա 2,7-ը ռելինգտոն է, ուրեմն, անտենան ունի գրեթե զրո սեփական աղմուկ, որն անհնարին է: Այստեղից հետևություն՝ ոչ մի 2,7 ռելինգտային ճառագայթում չկա տիեզերքում, «Մեծ պայթյուն» չի եղել, ամբողջը սուտ է, հետևությունները՝ սխալ:

Սկզբից ես զգուշացա իմ հայտնագործության մասին հայտարարել, բայց անտենան ամբողջ աշխարհին էր հետաքրքրում, որի մասին զեկուցում էի աշխարհի տարբեր երկրներում: Բնութագրերի ցուցակում ասում էի, որ սեփական աղմուկը 2,7 Կելվին է, իսկ թե դա ի՞նչ էր նշանակում, ես չէի ասում: Սակայն իմ կարևոր զեկուցումների ժամանակ (ԱՄՆ, Ֆրանսիա, Անգլիա, Ռուսաստան) հետո տանում էի մի էջ, որտեղ պատճենված էր այն գիրը, որը գրվում է անտենայի ելքում այդ 2,7-ը չափելու ժամանակ և ինչպես է այն չափվել: Այդ էջը տալիս էի խոշորագույն աստղագետներին, անտենայի մասնագետներին և ասում էի. «Խնդրում եմ, եթե



Ռադիո-անտենա - այն տեմա - ըստ՝ Պարիս Հերունու

ազատ ժամանակ կգտնեք, ուշադիր նայեք այս թվերին, կարո՞ղ է մի բան ճիշտ չեն արել իմ չափումների ընթացքում: Այդ դեպքում ինձ զանգեք, կամ նամակ գրեք»: Սպասեցի տասը տարի, ոչ ոք ոչինչ չգրեց, որովհետև հասկանում էին, եթե գրեին՝ սխալ չկա, ուրեմն, համաձայն էին ինձ հետ, որ «Մեծ պայթյուն» չի եղել: Մեծ անտենան սարքելու ժամանակ շատերն էին փորձում մեզ խանգարել, բայց մենք մեր գործն ավարտին հասցրեցինք: Տասը տարի անց ես հայտարարեցի, թե ինչ է նշանակում այս գիրը, և որ ռելինգտային ճառագայթում չկա և տիեզերքում էլ «Մեծ պայթյուն» (**Big bang**) չի եղել: Հոդվածներ տպեցի եվրոպական մի շարք ամսագրերում, իսկ միջազգային մի քանի գիտաժողովներում զեկուցեցի այդ մասին: Այս տարի՝ անձանը, Ֆրանսիայի Նիցցա քաղաքում անտենաներին նվիրված մեծ գիտաժողովում ներկայացնելու եմ զեկուցում՝ հենց «Մեծ պայթյունը» հերքելու մասին:

Բացի մեծ անտենաներից մենք ստեղծել ենք աշխարհում առաջին անտենաների հեռվում ստեղծած դաշտի ծավալային պատկեր ստանալու մեթոդը՝ ռադիոհոլոգրաֆիան: Ռադիոալիքների վրա այդպիսի բան առաջին անգամ ես եմ արել, որը թույլ է տալիս անտենաների բոլոր չափումներն անել անտենայի մոտիկ տարածքում: Իմ առաջարկած նոր մեթոդի օգնությամբ հենց մոտիկում կարելի է չափել, և որի համար ոչ մեծ պալիգոններ են պետք, ոչ էլ՝ մեծ ծախսեր: Մոտիկից չափում ենք դաշտը, այդ տվյալներն անցկացնում ենք համակարգիչ, որի օգ-



նությամբ գնում ենք հեռու դաշտ և ստանում անտենայի ստեղծած հեռու դաշտի «ճառագայթի» ծավալային պատկերը: Խորհրդային Միության գիտահետազոտական ինստիտուտներ, կոնստրուկտորային շատ գործարաններ այս սարքավորումը մեզանից գնեցին ինքնաթիռների և տիեզերանավերի, նավերի անտենաների համար, այդ թվում նաև հակահրթիռային համակարգերի համար: Այս հայտնագործության համար 1986-ին Խորհրդային Միության պետական մրցանակ ստացա մեր անձնակազմի ութը տղաների հետ միասին: 1975-ին Հայաստանի պետական մրցանակ՝ մեկ այլ աշխատանքի համար, որը կապված էր մեծ անտենայի հետ, սարքել էինք 18 մետրանոց պտտվող անտենա):

Մենք ստեղծել ենք համակարգեր, որ կարելի է ռադիոլոկացիոն մեթոդով որոշել, թե ինքնաթիռը կամ նավը որտեղ է: Հիմա շատերը այնպես են անում, որ այդ օբյեկտները չհայտնաբերվեն. ծածկում են ինչ-որ շերտով, որը ռադարի (ռադիոտեղորոշման) ուղարկած ալիքը կլանում է և էլ հետ չի ուղարկում, որ ռադարն ընդունի և տեսնի: Դա չափելու համար մեծ երկրները միլիարդավոր գումարներ են ծախսում, մեծ բալիկոններում ինքնաթիռները ամիսներով թռչում են և չեն կարողանում ճիշտ չափումներ անել: Իմ ստեղծած սարքավորումը մոտ տարածությունում չափում է դաշտը:

Հետո սարքել ենք աշխարհում առաջին անտենային բնութագրերի ազգային էտալոնները: Խորհրդային Միությունը ուներ 130 էտալոն (մետր, վայրկյան, կիլոգրամ և այլն), սակայն դրանք փոխառնված էին արտասահմանից: Մենք ստեղծեցինք 11 նոր տիպի էտալոններ անտենաների ասպարեզում, որոնք աշխարհում առաջինն են և միակը: Ուրիշ ոչ ոք չունի այսպիսի էտալոններ: Հեշտ չէ ստեղծել մի բան, որ աշխարհում գոյություն չունի:

Իմ վերջին աշխատանքները (նույնպես արտոնագրված) նվիրված են նոր տիպի հզոր արեգակնային էլեկտրակայաններ սարքելուն: Այդ ուղղությամբ էլ շատ ենք աշխատում: ԱՄՆ-ը, 25 տարի առաջ նկատի ունենալով հետագա էներգետիկ ճգնաժամը, սկզբում 3 մլրդ դոլար, հետո՝ մինչև 40 մլրդ դոլար հատկացրեց, որ ԱՄՆ-ում սարքեն հզոր արեգակնային էլեկտրակայաններ: Կալիֆոռնիայում արեգակնային էներգիայի չորս նոր գիտահետազոտական ինստիտուտ բացեցին և սարքեցին հզոր արեգակնային կայաններ յուրաքանչյուրը 1 մեգավատտ հզորությամբ, ընդհանուր առմամբ մոտ 200 մեգավատտ հզորությամբ: Բայց այդ գործն առաջ չգնաց. չկարողացան սնել էներգետիկ հզոր ցանցերը: Ինչո՞ւ: Երկու պատճառով. մեկն այն էր, որ դրանք կառուցելը շատ թանկ արժեք էր կրողը՝ դրանք ունեին շատ ցածր օգտակար գործողության գործակից, ընդամենը՝ 3%, որովհետև դրանք սարքված էին հայտնի հին սկզբունքով: Այսինքն՝ եթե շատ հայելիներով շողքեր օգես մի կետի, ապա այն կայրվի: Արքիմեդն այդպես վառել էր Հռոմի նավը, իսկ հայերը Արքիմեդից 5.000 տարի առաջ գիտեին այդ սկզբունքի մասին:

Տաք ջուր, զոլորչի, շոգետուրբինա, պտտվող հայելիների դաշտ, այս բոլորը շողքերը օգում են մի կետի վրա, կաթսայի ջուրը գոլորչիանում է, որը գնում և մտնում շոգետուրբին: Էներգիա ստանալու այս ճանապարհն են օգտագործում օտարազգի գիտնականները: Իսկ մեր սկզբունքը բոլորովին ուրիշ է: Երբ առաջին արտոնագիրն

ստացա, մի գեկուցագիր գրեցի մեր երկրի նախկին վարչապետ Հ. Բագրատյանին, խնդրեցի պետական աջակցություն: Մերժվեցի...

1994-ին Հայաստան եկան բրիտանացիները, մի երկու խոսքով բացատրեցի, անմիջապես առաջարկեցին ֆինանսավորել: Այս սարքի օգտակար գործողության գործակիցը 42% է, իսկ կառուցման արժեքը՝ 15-20 մեգամ էժան, որովհետև շարժվող հայելիների դաշտին 1 մեգավատտի համար 7 հեկտար տարածք է պետք, և այդ ամենը համակարգչային ծրագրով տարբեր անկյուններից պետք է նայել և անընդհատ դիրքը փոխել, քանի որ արևը շարժվում է, իսկ նրա անդրադարձը պետք է ընկնի աշտարակի վրա դրված կաթսային, որ տաքացնի: Մեր հայելին անշարժ է, 1 մեգավատտի համար 0,7 հեկտար տարածք է զբաղեցնում: Հարթ տարածություն պետք չէ (որը թանկ է), ժայռերի ու ձորերի մեջ էլ կարող ենք այն տեղադրել: Մոտ 70% սարքել ենք այդ կայանը՝ օգտագործելով ինքնաթիռային տուրբինա: Սրա առավելությունն այն է, որ անպայման չէ սարքել այնպիսին, որ 100 մեգավատտ հզորություն ունենա ատոմային կայանի պես: Ավելի լավ է սարքել 10-15 մեգավատտ հզորությամբ մի քանիսը, իրար մոտ կամ տարբեր տեղերում, որը միաժամանակ ստեղծում է մի շարք առավելություններ, այն կլինի մի քանի սարերում տեղադրված, որի ապահովությունը շատ մեծ է: Կայանի շուրջօրյա աշխատանքի համար նախատեսել ենք նրա մոտ երկու ջրավազան կառուցել, մեկը վերևի մասում, մյուսը՝ ներքևի: Ցերեկը կայանը ջուրը մղում է և ներքևի ավազանից վերինի մեջ է լցնում, իսկ գիշերը՝ հակառակը: Մեր կայանի համար ավազանը պիտի լինի այնպիսին, որ կարողանա երեք օր կամ մեկ շաբաթ բավականացնել: Իսկ արևոտ երկրների համար մի գիշերվա համար էլ բավարար է:



Արևային ժամացույց

Արևը տաքացնում է, տաք օդը գնում է տուրբին (շարժանիվ), տալիս պտտեցնում է էներգիան, որն էլ էլեկտրագեներատոր է մտնում և վերջ: Հետագա քայլը սրա աշխատելուց հետո պետք է լինի սերիական արտադրությունը:

Այսօր էլ աշխարհի տարբեր երկրներից միլիարդատերեր են ինձ մոտ գալիս և առաջարկում են համագործակցել: Պատվիրատուն ուզում է այն տեղադրել ու գործարկել իր երկրում, որպեսզի իր ժողովուրդն աշխատի և միլիարդավոր դոլարների օգուտ ունենան ինքն ու իր պետությունը: Իսկ ես ուզում եմ, որ այդ գումարները մտնեն Հայաստանի Հանրապետության բյուջե: Դրա համար ուզում եմ, որ մեր պետությունը տեր կանգնի, մի քիչ գումար հատկացնի, մեր աշխատանքներն ամբողջությամբ ավարտենք, հետո մեր ունեցած շուրջ 30 գործարանների հետ կարելի է համագործակցել և արդյունքում արևային էներգիա ստանալ, կառուցելով շատ կայաններ, ինչպես նաև արտասահմանում վաճառել, որտեղ կա հսկայական շուկա:

Ես արդեն 72 տարեկան եմ և չունեմ ևս տասը տարի, որ սպասեմ, թե մեր կառավարությունը երբ կգիտակցի այս կայանի հույժ կարևորությունը, տնտեսաբաղաբական և ռազմավարական նշանակությունը: Մեր մեծահարուստները եկել են, տեսել, հիացել ու գնացել, և մինչև օրս ոչ մի արձագանք:



Իսրայելը, ԱՄԷ-ը, Հոնկոնգը, ԱՄՆ-ը առաջարկում են, բայց ես չեմ համաձայնվում: Արևային էներգիայի համար մեր պետության հատկացրած գումարները շատ քիչ են: Ամեն զոնով ուզում եմ իմ գործն ավարտին հասցնել, թեկուզ և առանց գումարի: Ուզում եմ հզորությունը մի քիչ փոքրացնել և կառուցել, և եթե հնարավոր լինի, այս տարի աշնանը շահագործման հանձնել: Մենք դրա համար ունենք արհեստանոցներ, դազգահներ, գործարան, ունենք վարպետներ, կոնստրուկտորներ, ավտոմատիկայի և համակարգչի մասնագետներ: Սա կարող է մեր ամբողջ երկիրը պահել իր օգուտներով: Մեր դժվարությունն այն է, որ մի տասը գործարան է պետք գնել, ներդրումներ անել գործարանները ձևափոխելու համար, մոտ կես տարի կտևի, որից հետո կսկսվի սերիական արտադրությունը: Իսկ զանգվածային արտադրությունը կախված է այդ մարդկանց (որպես գործարար) գործի մոտեցման ճկունությունից, Ռադիոֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտն ունի բոլոր տեխնիկական միջոցները: Այդ ամենն անելուց հետո աշխատանքների բաժանում կլինի գործարանների միջև. մեկը մետաղի կոնստրուկցիան կապահովի, մյուսը՝ հայելին ու ջերմափոխանակության սարքավորումները: Արևային



Պարիս Հերուինին և իր ղեկավարած գիտական արշավախումբը

էլեկտրակայանը բնապահպանական տեսակետից ամենամաքուրն է՝ համեմատած այլ տեսակի էլեկտրակայանների հետ: Միայն տուրբինի ձայնն է, որը հույս ունեն կարող ենք նվազագույնի հասցնել:

Տասը տարի՝ սկսած 1994-ից, աշխատել եմ Քարահունջում, ամեն անգամ ութը հոգով չորս օրով գնացել ենք և աշխատել: Նախօրոք անելով մեր հաշվարկները՝ օրինակ, այնտեղ քարե աստղադիտակներ կան, նայում են երկնքին: Աստղերի տեղերի շարժվելու օրենքն իմանալով՝ կարելի է հաշվել, օրինակ, Քարահունջի զենիթի կետով երբևէ աստղ անցե՞լ է, թե՞ ոչ, եթե այո, ապա ե՞րբ և ո՞րն եղել է: Ես կիրառել եմ 4 մեթոդներից մեկը և գտել, որ Քարքիունջի զենիթի կետով 7.680 տարի առաջ անցել է Կարապի համաստեղության Դենեբ ամենապայծառ աստղը: Օտարագզի շատ այցելուներ են Քարահունջ գալիս: Ես մեր ուղեկցորդներին դասախոսություն եմ կարդացել: Այնտեղ մի թերություն կա՝ հարմարավետ չէ, 4 ժամ է պետք տեղ հասնելու համար, հանգստանալու պայմաններ չկան, մի փոքր թանգարան է պետք՝ գործիքներ, քարերի մոդելներ տեղադրելու համար, մանրամասն բացատրություն տալու և անգնե աչքով աստղերը դիտելու:

## ԱՄԵՆԱԹԱՆԿ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՈԳԻՆ ԵՆ...

*Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ նորընտիր ռեկտոր Արամ Սիմոնյանը գիտական շրջանակներում առավել հայտնի է Լեռնահայաստանի ազգային-ազատագրական պայքարին նվիրված իր «Ջանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ.» սենագրությամբ, մինչդեռ նա մեր հանրապետությունում այն սակավաթիվ պատմաբաններից է, որ լրջորեն զբաղվում է պատմական վիճակագրությամբ:*

Մեզ հետաքրքրում է, թե ինչն է հատկապես վիճակագրության ոլորտը հետաքրքրել նրան:

«1977-ին պատահաբար կարդացի մի հետաքրքիր հոդված՝ 19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբին Բաքվի նավթարդյունաբերության մեջ հայտնի երկու խոշոր հայ ձեռննրեցների՝ Մանթաշուվի և Լիանոզովի ներդրումների մասին: Ցանկություն առաջացավ ցույց տալ հայերի դերը ցարական Ռուսաստանի արդյունաբերության և ֆինանսների պատմության մեջ: Ռուսական կայսրության վիճակագրությունը կատարյալ էր. դրա նմանը ժամանակին աշխարհում չկար: Այն անհասանելի և օրինակելի է եղել բոլոր ոլորտներում: Ռուսական վիճակագրությանն, օրինակ, հայտնի էր, թե 19-րդ դարի վերջին, ասենք, Ջանգեզուրի գավառի Շինուհայր գյուղի գյուղացին ինչ է ցանում, որքան՝ հավաքում, որքան՝ պահեստավորում: Այդ երկիրը հրաշալի գիտեր իր բոլոր ծախսերն ու եկամուտները, անկորուստ հավաքում էր իր բոլոր հարկերը՝ մինչև վերջին կոպեկը: Ունեն վիճակագրական աղբյուրների հսկայական հավաքածու՝ Անդրկովկասի և հայերի վերաբերյալ:»

Ա. Սիմոնյանին հատկապես հետաքրքրել է հայ հասարակության տնտեսական զարգացման ընթացքը (թեև նա որոշել է շարունակել այս աշխատանքը նաև կրթության, սոցիալական, քաղաքական, մշակույթի ոլորտներում), քանի որ տնտեսությունը հասարակության զարգացման այն ոլորտն է, ուր հայերը մեծ նվաճումներ են ունեցել ցարա-

կան ինքնակալության շրջանում, իսկ հայերի ծառայություններն անգնահատելի են հարևանների, մասնավորապես՝ Վրաստանի և Ադրբեջանի սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման գործում:

«Համեմատելով տեսնում եմ, որ հայերի կրթական ցենզը՝ գրագիտությունը, շատ ավելի բարձր է եղել, քան հարևան ժողովուրդներինը, որ հայերն իսկապես կրթությանը, գիտությանը, մշակույթին նվիրված ժողովուրդ են եղել: Միզուցե այս բոլորը վերհանելու ցանկության մեջ ազգային եասիրության, սնապարծության մեծ մի բան կա, բայց, եթե մենք չզբաղվենք դրանով, ո՞վ պետք է զբաղվի:»

Ա. Սիմոնյանը հայտնաբերել է, որ ցարական Ռուսաստանի ծառայողական պաշտոններում և բանակում հայերը շատ փոքրաթիվ են եղել: Դա բացատրում է տվյալ ժամանակաշրջանում հայերի նկատմամբ եղած անվստահությանը: Պաշտոնյա վրացիների թիվն անհամեմատ ավելին էր. ցարիզմը նրանց նկատմամբ հովանավորչական քաղաքականություն էր վարում. վրաց ազնվականությունը և վերնախավի մյուս ներկայացուցիչները ցարական Ռուսաստանի համար ծառայել են իբրև սոցիալական հենարան, մինչդեռ հայերն իրենց ազգային-ազատագրական պայքարով «ավելորդ գլխացավանք» էին ցարական կայսրության համար:

Այդ աշխատանքը կատարելիս՝ Արամ Սիմոնյանին ամենից շատ զարմացրել են «19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ընտանիքի»՝ մեծավ մասամբ խոճուկ և աղքատիկ բյուջեն, նրա չարքաշ կյանքը, շուկայական գների թանկությունը Երևանում և Արևելյան Հայաստանի շատ վայրերում, որոշ ապրանքների ծայրահեղ տարաբևեռ գները: Օրինակ՝ 20-րդ դարի սկզբին 1 կգ միսն արժեք 20 կոպեկ, իսկ 1 շիշ շամպայնը՝ 8-12 ռուբլի: Որակյալ բանվորը ստացել է համեմատաբար բարձր աշխատավարձ (օրա-



կան՝ 2-3 ռուբլի): Բաքվում և Թիֆլիսում շատ ուժեղ է եղել հայ առևտրական և արդյունաբերական կապիտալը: Մեծ թիվ են կազմել հայ ձեռներեցները և սեփականատերերը: Մասնավորապես՝ հայտնի հայ գործարար Ադելխանյան-

նին են պատկանել Թիֆլիսի կաշվի և կոշիկի 2 ամենախոշոր գործարանները: Ասում են, որ մինչ օրս Ադելխանյանի գնած հաստոցներից, մեքենաներից պահպանվել են: Կովկասում ամենախոշոր ծխախոտի ֆաբրիկաներն ու խմիչքի արտադրությունները եղել են հայերի ձեռքում: Անասելի մեծ հարստություն ունեին Մանթաշովը, Լիանոզովը, Տեր-Ղուկասովը, Ծատուրով և Առաքելով եղբայրները, Մելիք-Ազարյանը և շատ ուրիշներ: Պատմական փաստ է, որ մի անգամ Մոսկվայում, երբ Մանթաշովը մեծ խնջույք էր կազմակերպել, անխտիր բոլոր տղամարդկանց համար սեղանին սիգարետի ոսկյա տուփեր է դրել, իսկ կանանց համար՝ ադամանդակուռ գարդեր: Ցավոք, նրա ողջ կապիտալը փոշիացավ, անհետացավ, քանի որ հայկական ողջ կապիտալը, ինչպես նաև՝ հայ քաղաքական վերնախավը (էլիտան), հիմնականում ձևավորվեց Հայաստանից դուրս: Բաքվի և Թիֆլիսի ամենավեհաշուք շինությունները կառուցվել են հայ մեծահարուստների փողերով ու հայ ճարտարապետների ձեռքով, մինչդեռ դրանցից ոչ մեկն այսօր մեր ժողովրդի սեփականությունը չէ»:

Ցավոք, այսօր պատմաբանները պատմական հետազոտություններում չեն կիրառում մաթեմատիկական մեթոդը: Նախկինում, ըստ նրա, այդ մեթոդը կիրառել է ԳԱԱ թղթակից անդամ Ազատ Համբարյանը: Այսօր, երբ չկան այդ գործը շարունակողներ կամ դրանից օգտվողներ, արդյո՞ք ինքնանպատակ չի դառնում այդ հետաքրքիր, սակայն անչափ աշխատատար զբաղմունքը:

«Նախ, երբ կարողանում են, թեկուզ թվերի լեզվով, հայտնաբերել որևէ հայի վաստակը, ասենք, Սիբիրում կամ մի այլ խուլ վայրում, թե այս կամ այն գործարար հայը որքան կապիտալ է ներդրել արտադրություն հիմնելու համար, գերագույն բավականություն են ստանում այդ աշխատանքից: Երկրորդ՝ այս ուսումնասիրությունները և հայտնաբերած աղբյուրները հնարավորություն կտան մեր պատմաբաններին գրել նոր աշխատություններ: Եվ հետո ժամանակն է, որ մենք լրջորեն զբաղվենք օտարի այջքում հայի կերպարի, նրա դրական կերպարի պահպանման և ամրապնդման խնդրով: Վիճակագրական նյութերն այդ իմաստով ունեն իրենց «անելիքը»:

Ա. Սիմոնյանը, պատմական վիճակագրությունից զատ, վերջին 15 տարում լրջորեն զբաղվում է նաև հայ ազգային-ազատագրական պայքարի խնդիրներով: Նրա դոկտորական ատենախոսությունը 1920-1921թթ. Ջանգեզուրի գոյամարտի, այսինքն՝ Լեռնահայաստանի և նրա Սպարապետի՝ Գարեգին Նժդեհի մասին է: Շուտով պատրաստ կլինի նաև Ջանգեզուրի 1918-1920 թվականների հերոսամարտի մասին աշխատությունը, և դրանով, ինչպես ինքն է ասում, իր «փոքրիկ դերակատարումով» կամբողջացնի իր «մեծ պարտքը» հայրենի եզերքին, իր շատ սիրելի Ջանգեզուրին:

«Հպարտ եմ, որ հայ եմ, զանգեզուրցի, լեռնցի: Հպարտ եմ, որ զանգեզուրցիները կարողացան Լեռնահայաստանը զերծ պահել աղբյուրական ոտնձգություններից: Դա մեր ազգային-ազատագրական պայքարի ամենավառ, հաղթական էջերից է: Այդ գոյամարտի շնորհիվ Լեռնահայաստա-

նում ստեղծվեց հայոց պետականություն, որն ընդգրկում էր Ջանգեզուրը, Վայքը և Արցախը: Ցավոք, այն կարճ կյանք ունեցավ: Ինձ ոգեշնչեցին, իհարկե, Նժդեհի և նրա զինակիցների պայծառ կերպարները: Նժդեհը ոչ միայն զինվորական, հասարակական, քաղաքական, ազգային գործիչ էր, այլ նախ և առաջ՝ փիլիսոփա և մտածող: Ես իսկապես համոզված եմ, որ նրա գաղափարների մեծ մասն այսօր անանց արժեք են մեր ժողովրդի և մեր անկախության համար: Նախ՝ պետք է ընկալենք այդ գաղափարները՝ որպես գործողության ուղեցույց, երկրորդ՝ զանազաններ հիմնականում ու երկրորդականը, երրորդ՝ հասկանանք, որ Նժդեհը, լինելով մեծ մտածող, նաև մահկանացու էր, հողեղեն մարդ՝ մարդկային բոլոր բարեմասնություններով ու թուլություններով, և դրանում է նրա մեծագույն հմայքը: Կասկածից վեր է, որ Նժդեհի գաղափարախոսության ամբողջ հենքը, նրա ուսմունքի կուռ համակարգը, որ կարոտ է լուրջ ուսումնասիրության, այսօր էլ գործում է և դեռ երկար կգործի՝ հօգուտ հայոց պետականության և հայ ժողովրդի: Վերջին տարիներին, ի բարեբախտություն մեզ, շատերը սկսեցին հետաքրքրվել Նժդեհի գաղափարական ժառանգությամբ, նրա պատմական, փիլիսոփայական հայացքներով: Հիշենք թեկուզ Մուշեղ Լալայանին, Ռաֆայել Համբարձումյանին, Վլադիմիր Ղազարխչյանին, Սեյրան Ջաքարյանին, Աշոտ Սարգսյանին և այլոց: Սակայն մտավախություն ունեն, որ նրանց մեծ մասը սիրողական մակարդակով է վերաբերում Նժդեհի ուսմունքին, իսկ դա կարող է վնասել ընդհանրապես այդ մեծ մարդու ժառանգության ուսումնասիրմանն ու ըմբռնմանը»:

Կասկածից վեր է, որ Արամ Սիմոնյան-պատմաբանի հայրենասիրության և ազգամովրդունի ակունքներում կանգնած է եղել և է՝ հայրը՝ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Սիմոնյանը: Եվ պատահական չէ, որ ամենաթանկ ժառանգությունը՝ ստացած հորից, նա համարում է ազգային դաստիարակությունը, այն, որ ազգային գաղափարներին հաղորդակից է եղել դեռ մանկուց. հայրն է նրա առջև բացել պատմության՝ իր համար գոնե իրական դարպասները, հոր զրույցներն են իր մեջ ներարկել ազգային ոգի:

«Կարծում եմ, որ յուրաքանչյուր հայ պարտավոր է լինել ամենից առաջ լավ մարդ: Ինձ մեծապես ոգեշնչել է նախ՝ հորս անձնական օրինակը և ապա՝ դաստիարակությունը: Հաջորդ կարևոր բանը, որ հայրս ներարկել է իմ մեջ (թող անհամեստություն չհամարվի, որ մեծ հատկանիշ եմ վերագրում ինձ), տղամարդ լինելն է: Լինել տղամարդ՝ նշանակում է լինել զուսպ, առատածեռն, ազնիվ, անտարբեր չլինել ուրիշի ցավի նկատմամբ, հարգել ծնողներին, ընդունել մերձավորների տեսակետը և, ամենակարևորը, լինել շռայլ, շռայլ ամեն ինչում՝ բարեկամության մեջ, ընկերության մեջ, մարդկանց օգնելիս, նրանց ցավը մեղմելիս... Զէի ասի, թե դա միշտ է ինձ հաջողվում և այն էլ՝ մինչև վերջ, բայց ես ձգտում եմ: Կարևորն այն չէ, որ կարողանաս շոշափելի օգուտ բերել, այլ այն, որ լինես անկեղծ և փորձես հասկանալ ու ցույց տալ այդ օգնությունը՝ կարելիության չափով: Եվ, ամենակարևորը, պետք չէ սպասել, որ ինչ-որ մեկը քեզ երախտապարտ լինի կամ ասի՝ տեսե՛ք՝ ինչ լավ մարդ է: Գնահատականի սպասելով գործ անելը կամ ապրելը ամենամեծ մեղքն է և Աստվածահաճո չէ»:

ՆՎԱՐԴ ԲՈՐՅԱՆ



## ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ՉՊԵ՛ՏՔ Է ՍՊԱՍԵԼ, ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՊԵՏՔ Է ՏԱ՛Լ

Մեր հյուրն է գեղանկարիչ Գագիկ Խաչատրյանը

- Պարոն Խաչատրյան, ինչպիսի՞ն էր ուսումնառության և ստեղծագործության Ձեր անցած ճանապարհը:

- Ուսումնառության մի քանի փուլ եմ անցել. վաղուց եմ սկսել նկարել, դպրոցական տարիներին մասնակցել եմ խմբակների: Իմ լուրջ մոտեցումը արվեստին սկսեցի Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանից, որն ավարտելուց հետո ընդունվեցի Լենինգրադի Ռեպինի անվան գեղարվեստի ակադեմիա (հիմա՝ Սանկտ Պետերբուրգի ակադեմիական ինստիտուտ):

- Ի՞նչ թողեցին Ձեր սերնդակիցները Սանկտ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիային:

- Ակադեմիայում (այն արվեստանոցում, որտեղ ժամանակին դասավանդել է Ռեպինը և մի շարք այլ ակադեմիկոսներ) մեկ տարի եղել եմ ազատ ունկնդիր, այնտեղ դասավանդում էին հայտնի նկարիչներ Վիկտոր Ռեյխտեր, Բորիս Ուզարովը, հենց նրանք էլ ինձ նկատեցին. ինձ բախտ վիճակվեց սովորել, հասկանալ իսկական գեղանկարչությունը:

Եթե արվեստագետը որևէ բանի հասնելու ցանկություն ունի՝ կհասնի դրան: Այնտեղ՝ արվեստանոցում, ղեկավարս հաճախ էր ինձ ասում. «Հոգնել ես, գնա՝ էրմիտաժ»: Աշխարհահռչակ այս թանգարանում լրացնում էի գեղարվեստական այն պակասը, որն ունեի:

Սանկտ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի պատմության մեջ՝ սկսած Այվազովսկուց, Հովմաթանյաններից մինչև 1988-ը, հայերը 3-րդ տեղում էին (ռուսներից և ուկրաինացիներից հետո): Ակադեմիայի ստեղծման օրվանից 90 հայ է ավարտել այս բուհը:

Հայկական կերպարվեստը մշակույթի աշխարհում մեծ դեր և տեղ ունի:

- Որպես դիպլոմային աշխատանք՝ ներկայացրեցիք «Ռեքվիեմ»-ը, ինչպե՞ս ընդունվեց այն քննական հանձնաժողովի կողմից:

- 1981-84թթ. աշխատեցի դիպլոմային մի վրա և 1984-ին պաշտպանեցի: Կոչվում էր՝ «Ռեքվիեմ», նվիրված՝ հայ ժողովրդին և Հայոց ցեղասպանությանը: Ղեկավարներիս համար անակնկալ էր, ինձ համար՝ ոչ: Պաշտպանությունս շատ լավ անցավ. ներկա էին ավելի քան 40 ակադեմիկոս և պրոֆեսոր, իսկ հայերի թիվը մի քանի հարյուրի էր հասնում: Գերազանց պաշտպանությունից հետո հանձնարարական ստացա՝ ասպիրանտուրայում սովորելու: Արվեստանոցում երեք տարի ղեկավարս է եղել Խորհրդային Միության ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր Բորիս Ուզարովը: Ավարտելուց հետո իմ գիտական ղեկավարը նույնպես նա էր: Այդ տարիներին ստեղծեցի Սարդարապատի ճակատամարտին նվիրված մի գործ՝ «Կոչ», որը հիմա գտնվում է Պենզայի պետական թանգարանում:

- Անհատական և խմբակային ցուցահանդեսները և դրանցում Ձեր հաջողությունները:

- Դպրոցական էի, երբ 1970-ին խմբակային ցուցահանդեսում աշխատանքներիս առաջին ցուցադրումը եղավ, այդ մասին գրվեց «Պիոներ կանչ» թերթում, իսկ ավելի լուրջ խմբակային եղել է 1980-ականներին: Սանկտ

Պետերբուրգի ակադեմիան հայերից ինձ և Մանվել Մադոյանին 1985-ին ներկայացրեց Նյու Յորքում: Դրանից հետո՝ Պետերբուրգում, Սոսկվայում: 1980-ականների վերջերից սկսած եղել եմ անհատական ցուցահանդեսներ Սանկտ Պետերբուրգում, Սոսկվայում, Բեռլինում, Համբուրգում: Ես գտնում եմ, որ ցուցահանդեսը պետք է լինի նպատակային: Հայրենիքում իմ անհատական ցուցահանդեսը դեռ չի եղել: Այնպիսին, ինչպիսին, որ ես կցանկանայի, ուզում եմ կայանա Հայաստանում և ոչ թե նրա սահմաններից դուրս, որը ժամանակ առ ժամանակ անում եմ:

Ես բազմաժանր նկարիչ եմ՝ նատյուրմորտ, պեյզաժներ, կոմպոզիցիա, դիմանկարներ: Աշխատանքներիս մի մասը վաճառել եմ, սակայն ունեմ էլ ավելի արժեքավոր գործեր, որոնք անձեռնմխելի են. պահում եմ Հայաստանում ցուցադրության համար:

- Հայաստանի նորանկախ հանրապետությունը և արվեստագետի կյանքը:

- Սանկտ Պետերբուրգի ակադեմիայի ֆոնդում, Գիտահետազոտական թանգարանում Հ. Այվազովսկու, Մ. Ավետիսյանի ստեղծագործությունների հետ ներկայացված եմ նաև իմ աշխատանքները: Պետերբուրգի դպրոցը եվրոպական դպրոց է, հայերը մեծ հետք են թողել այնտեղ:

1988-ին վերադարձա Հայաստան, Ղարաբաղյան շարժման մասնակիցների շարքերում էի իմ արվեստագետ և մտավորական ընկերների հետ: Ոգևորությունն ավելի մեծ էր, քան ակնկալիքը, իհարկե հայրենիքից չպետք է սպասել, հայրենիքին պետք է տալ:

Կար մի ծրագիր, որը պետք է իրագործվեր 1996-97-ականներին. երևանում պետք է բացվեր Սանկտ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի մասնաճյուղ, որը մեր տարածաշրջանում պետք է ապահովեր ռեստավրացիոն (վերականգնման) գործունեություն՝ առաջին հերթին Հայաստանի թանգարանները և մշակութային արժեքները պահպանելու և վերականգնելու առումով: Այդ պահին ես ՀՀ մշակույթի նախարարության թանգարանների և գրադարանների վարչության պետն էի և մեծ ուսումնասիրություն և նախապատրաստական աշխատանք էի կատարել այդ ուղղությամբ: Ի դեպ, գեղարվեստի ակադեմիայի մասնաճյուղի խորհրդի որոշման մեջ նշված էր, որ «մասնաճյուղ... ամրապնդելու և ապահովելու է քրիստոնեական մշակութային տարածքը կովկասյան տարածաշրջանում»: Դա մեծ օգուտ և աջակցություն էր մեր մշակույթին: Դժբախտաբար, այդ ծրագիրը չգնահատվեց, չհասկացվեց և աջակցություն չստացավ այն ժամանակվա ՀՀ մշակույթի նախարար Ռուանդ Շառոյանի կողմից:

15 տարվա ընթացքում, կերպարվեստի բնագավառում ՀՀ պետական թանգարանների կողմից որևէ աշխատանք չի գնվել: Այսինքն՝ օտարագրին մտնում է պետական թանգարան և չի տեսնում 15 տարիների ընթացքում արված որևէ նոր աշխատանք: Ստացվում է, որ մեր անկախ հանրապետությունում նկարիչ չկա՞, չկա՞ ստեղծագործական կյանք:

Մեր երկրի այսօրվա վիճակը չի նպաստում արվեստագետի բուռն ստեղծագործական կյանքին, սակայն այն արվեստագետը, ով ինտելեկտուալ է, արհեստավարժ է և ի ծնե ունի հայ լինելու ազգային գեներտիկ պատկանելիություն, չի ընկճվում:





**- Հայ ազատագրական պայքարը Ձեր ստեղծագործություններում:**

- «Ռեքվիեմ»-ը, որի համար նախապատրաստել էի 80 աշխատանք (դիմանկարներ), չափերը՝ 2,20 x 3,10 սմ, լացուկոծ չէր, այլ խոնարհուն եղեռնի զոհերի հիշատակին: Դրանից հետո ստեղծվեց Սարդարապատի ազատագրական պայքարին նվիրված «Կոչ»-ը: Եղել է մեկ այլ աշխատանք ևս կապված Հայաստանի հետ՝ «Վերադարձ»:

1980-ականներին արդեն գիտեի ԱՍՍՀՄ-ի և նրա ազգանվեր մարտիկների մասին: Մինչ Գուրգեն Յանիկյանի դիմանկարը նկարելը, կարդացի նրա «Նպատակ և ճշմարտություն» գիրքը: Շատ արագ ընկալեցի նրա՝ Մեծ մարդ, հիմնադիր և առաջնորդ լինելը: Նպատակ ունեմ ստեղծել մի մեծածավալ աշխատանք ևս, որտեղ Գուրգեն Յանիկյանի հետ կլինեն ԱՍՍՀՄ-ի բոլոր հերոսները, որն էլ կլինի իմ խոնարհունը Նորագույն զինյալ ազատագրական պայքարի նվիրյալների գաղափարի, պայքարի ու գործի առջև:

**- Հայ մշակույթի և Հայաստանի ապագան:**

- Մշակույթը զարգանում է այնտեղ, որտեղ կան նախադրյալներ. արվեստագետին ապահովում են կայուն և

անհոգ ստեղծագործական մթնոլորտ: Արվեստագետը պետք է անհոգ լինի, հակառակ դեպքում ստեղծագործել չի կարող: Ես կամենում եմ վիճակի բարելավում, որ մարդիկ չմտածեն հանապազօրյա հացի մասին, նյութական խնդիրները չստիպեն նրանց լքել Հայաստանը: Ես կամենում եմ, որ հայ արվեստագետն ապրի ու ստեղծագործի հայրենիքում՝ Հայաստանի և հայության համար, ստեղծի համամարդկային արժեքներ: Չէ՞ որ սա է արվեստագետի ամենամեծ արժեքը: Ուզում եմ Հայաստանի Հանրապետությունը տեսնել բարգավաճ, սոցիալապես արդար՝ բոլոր հայերի համար:



**ՆԱՆԵ ՍԵՎԱՆ**

**Հ.Գ.- Արվեստագետի աշխատանքները տեսնան զուգակողմնաբար:**

**ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՐՊԵՍ  
ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՄՐՈՑ**

19-րդ դ. առաջին կեսին Արևելյան Հայաստանի Ռուսաստանին անցումից հետո ռուսական իշխանությունների առջև ծառայած խնդիրներից էր երկրամասի աստիճանաբար միաձուլումը ամբողջ կայսրությանը: Այս նպատակին ծառայում էր նախ՝ կենտրոնի վարչատարածքային քաղաքականությունը, ապա նաև հայերի շրջանում ուղղափառության տարածմանն ուղղված միջոցառումները:

Կովկասում ցարական կառավարությունը ստեղծեց «Ուղղափառության վերականգնման վարչություն» (կանոնադրությունն ընդունվեց 1860թ. մայիսի 31-ին<sup>1</sup>), որի գործունեությունն ուղղված էր այլադավանների շրջանում ուղղափառության տարածմանը: Վարչությունն իր առաքելության իրականացման ընթացքում հայկական միջավայրում լուրջ բարդությունների հանդիպեց: Շուտով պարզ դարձավ, որ գրեթե անիրագործելի խնդիր է հայությանը մղել դեպի ուղղափառություն, քանի որ այստեղ առաքելական եկեղեցու հիմքերն անսասան էին: Վարչության անդամները դիմում էին նույնիսկ խորանանկ ու նեղ միջոցների՝ հայերին դավանափոխելու համար, բայց ապարդյուն: Դավանափոխության միայն 2-3 դեպք էր արձանագրվել վարչության տարիների գործունեության ընթացքում, այն էլ հայ գյուղացիության սակավահող լինելու պատճառով:

Այսրկովկասի հայ գյուղացիությունը հողասակավ էր և կախվածության մեջ էր հողատեր-կալվածատերերից, որոնք ազգությամբ հիմնականում թաթարներ ու վրացիներ էին:

Օգտվելով դրանից՝ իշխանությունները քարոզում էին, թե ուղղափառություն ընդունելու պայմանով հայ գյուղացին կարող է հող ստանալ: Բայց հայկական գյուղական համայնքներում այս առաջարկությունները բացասական էին ընկալվում և սակավաթիվ դեպքերում, երբ համայնքի որևէ անդամ, կարիքից դրդված, ընդունում էր նման որոշում, հայտնվում էր համայնքից դուրս կարգավիճակում, լիովին մեկուսացված և բարոյալքված:

Այսպես՝ Երևանի նահանգի Սուրմալու գավառի Կողբ գյուղի եկեղեցական գործակալ Համբարովը սակավահող հայ գյուղացիներին ուղղափառություն ընդունելու պայմանով խոստացել էր հողային տարածքներ հատկացնել իրենց կենցաղը կազմակերպելու համար: Գյուղի առավել չքավոր 24 ընտանիքներ 1889թ. հունիսին դավանափոխ եղան և դիմեցին Համբարովին խոստացած հողային տարածքի հատկացման խնդրանքով<sup>2</sup> (նշվում էր նաև չափը՝ 238 դեսյատին վարելահող և 500 դեսյատին արոտավայր): Հետագա քննություններից պարզվում է, որ ուղղափառություն ընդունած կողբեցիների 24 ընտանիքները համարյա հողային սեփականություն չունեին և ծայրահեղ աղքատ վիճակում էին, իրենց գոյությունը պահպանում էին Կողբի աղահանքերում աշխատելով: Այս դավանափոխ հայերի հողատերացման գործընթացը ձգձգվում է, ինչի հետևանքով նրանց դրությունն էլ ավելի է վատթարանում, քանի որ համայնականները այլևս ոչ մի օգնություն չեն ցուցաբերում այդ ընտանիքներին: 1891թ. ապրիլին Երևանի

նահանգապետի գրասենյակից մի գրություն է ուղարկվում Կովկասում քաղաքացիական մասի գլխավոր կառավարչին, որտեղ ասվում է. «Շարունակելով բնակվել իրենց նախկին հավատակիցների հետ՝ նրանք (իմա՝ 24 ընտանիք - Թ.Վ.) էլ ավելի վատթար դրության մեջ հայտնվեցին, քանի որ այլևս *համազուղացիների կողմից ոչ մի նյութական օգնություն չէին ստանում, և դեռ ավելին, անարգանքի էին ենթարկվում դավանափոխության համար*»<sup>3</sup>: Հայտնվելով ծայրահեղ վիճակում՝ այդ ընտանիքները տեղի քահանա Հ. Ենոքովի հանձնարարությամբ հեռու, դիմեցին Հայոց Կաթողիկոսին, որպեսզի վերջինս միջամտի իրենց խոստացած հողային հատկացումների խնդրում, հակառակ դեպքում խնդրում էին Կաթողիկոսին ներում շնորհել իրենց հավատն ուրանալու համար և նորից ընդունել Առաքելական եկեղեցու հավատին (Հ. Ենոքովի դեմ կառավարությունը դատական գործ հարուցեց՝ մեղադրելով նրան հավատորսության համար): Այսպիսով՝ այս կիսատ-առատ դավանափոխության միակ պատճառը հողազրկությունն էր:

Ուղղափառության տարածման քարոզը չէր սահմանափակվում միայն սակավահող գյուղերով, այլ ընդգրկում էր նաև բանտերն ու քարավայրերը: Է. Ակունին, քննադատելով ռուսական իշխանությունների այդ անբարո քաղաքականությունը, 1899թ. նշում է, որ «մոտ 10 տարի առաջ Երևանի բանտը բաց էր մի ուղղափառ քահանայի համար, որ ամեն օր ներս էր թափանցում բանտարկյալների խուցերը և քարոզում հայ



գյուղացի բանտարկյալներին, որ եթե ուզում են Սիբիրից ազատվել, իրենց հույսը պետք է դնեն ոչ թե իրենց անձնության կամ փաստաբանի վրա, այլ միմիայն ուղղափառության վրա»<sup>4</sup>:

Ցարական կառավարության այս գործելակերպը տարիների ընթացքում որոշ փոփոխություններ է կրել՝ զգուշավոր ակնարկներից սկսած մինչև անթաքույց դրսևորումներ: Է. Ակնունին գրում է. «Այդ (դավանափոխության – Թ. Վ.) մտքով հաճախ ուղղակի կամ անուղղակի դիմումներ են եղել հայոց կաթողիկոսներին, հայոց կրոնական վարչության զանազան ներկայացուցիչներին, բայց միշտ անհաջող: Վերջին տարիներին փոխվել է գործելու եղանակը. համոզելու կամ գրավելու փոխարեն՝ ձգտում են ստիպել, ճնշել: Առաջ դա կատարվում էր գաղտնի, իսկ այժմ՝ բացահայտորեն: 1904 թվի մարտին, Պետերբուրգի «Եկեղեցական համբավաբերը», որ պետք է համարել ուղղափառ սինոդի օրգան, այս խոսքերը տպագրեց. «Ս. Սինոդը ուղղափառ եկեղեցու մերձավոր նպատակն է համարում դեպի ինքը գրավել Հայ-լուսավորչական եկեղեցին, որ վաղուց անջատված է»<sup>5</sup>:

Թեպետ կառավարությունը խոստանում էր աջակցել ուղղափառություն ընդունած հայերին, ազատելով որոշ հարկերից, հատկացնելով առանձին հողային տարածքներ, այնուամենայնիվ, ինչպես նշեցինք, հավատուրացությունը չտարածվեց հայերի շրջանում: Կողբեցիներին արձագանքեցին Շիրակի մի քանի սակավահող գյուղեր, նման փորձեր եղան նաև Արարատյան դաշտում՝ Էջմիածնի գավառում<sup>6</sup>:

Հարկ է նշել, որ այն սակավաթիվ հայերի շրջանում, որոնք տարբեր պատճառներով, մասնավորապես «հող, պաշտոն, ստանալու համար, կամ իշխող, բարձր դասակարգի մեջ մտնելու տենչով»<sup>7</sup> համակված ուղղափառություն էին ընդունել, նկատելի էր բարոյա-հոգեբանական խոր անկում: Այս մասին ցավով նշում է «Դրոշակը». «Դժվար է, կարծում ենք, երևակայել ավելի մեծ ողբերգություն, քան այն, որ կատարվում է ռուսադավանություն ընդունած այն հայ գյուղացիների սրտերում, որոնք հաճախում են իրենց ծնողների, իրենց իսկական պաշտած սրբավայրերը միմիայն գաղտագողի ու մութ գիշերներով»<sup>8</sup>:

Գ.Գոլիցինը հայերի շրջանում ուղղափառություն տարածելու նպատակով Երևանում մի հոյակապ ուղղափառ տաճար է հիմնում և, որպեսզի հայերին գրավի և այդպիսով դավա-

նափոխ անի, այնտեղ տեղադրեց մի սեղան Գրիգոր Լուսավորչի անունով և Կաթողիկոսից մասունքներ բերեց այդտեղ: Նա նաև Իգդիրում և Վաղարշապատում լավագույն հողեր հատկացրեց ռուսական եկեղեցիներ կանգնեցնելու նպատակով, թեպետ այդտեղ բնակվում էին 5-10 ռուսադավաններ, բայց թե այս, թե այլ ձեռնարկումները ոչ մի արդյունք չունեցան՝ հայերը շարունակում էին հավատարիմ մնալ իրենց եկեղեցուն<sup>9</sup>:

Այսրկովկասում «Ուղղափառության վերականգման վարչության» ամբողջ գործունեությունը վկայում է, որ հայերը հավատարիմ էին առաքելական եկեղեցուն ու դավանանքին: **Հայ առաքելական եկեղեցու հանդեպ**



**հավատուրացությունը հավասարազոր էր հայրենիքի և ազգի հանդեպ կատարած դավաճանության:**

Հայ ժողովրդի և Առաքելական եկեղեցու կրոնահոգեբանական այդ միասնության մասին նշում էին նաև ռուս իշխանավորները: Փոխարքայի գրասենյակի տնօրեն Պետերսոնի փոխարքային ուղղված զեկուցման մեջ նշված էր այն մեծ դերի մասին, որն ունեին Հայոց եկեղեցին և հոգևորականությունը ժողովրդի շրջանում. «Հայկական եկեղեցու առանձնահատկություններից է նրա ազգային բնույթը: Եկեղեցին դարձրել էր հայ ժողովրդի ազգային և մշակութային կյանքի կենտրոնը. Հայ-գրիգորյանական եկեղեցուն դավանելը նշանակել է պատկանելություն հայ ազգին: Այն անձը, ով լքել է Հայոց եկեղեցին, հեռացել է նաև հայությունից, ընդունելով մահմեդականություն, նա դարձել է թուրք կամ պարսիկ, ուղղափառություն վրացի կամ ռուս, ընդունելով լյութերականություն դարձել է գերմանացի, իսկ կաթողիկոսություն՝ ֆրանսիացի»<sup>10</sup>:

Մինևույն ժամանակ՝ 1900թ. մարտի 23-ի Ներքին գործոց նախարարությանը ներկայացված զեկուցագրում (No. 152, հոդված 103) նշվում էր, որ Հայոց եկեղեցին տարբերվում է հավատորսության բացակայությամբ և իշխող եկեղեցու հանդեպ բարյացակամ վերաբերմունքով<sup>11</sup>:

Հայերին դավանափոխելու ձգտումները ոչ միայն արդյունք չտվեցին, այլև հիասթափություն առաջացրեցին հայերի շրջանում, որոնք ավանդաբար հավատարիմ էին ռուսական իշխանություններին: Հայերի նկատմամբ այս քաղաքականությունը հետագայում քննադատության է արժանացել ռուսական վարչակազմի խելամիտ գործիչների կողմից, որոնք հասկացել էին նման քաղաքականության կայսրության համար վտանգավոր ու բացասական կողմերը: Այսպես՝ ժողովրդական լուսավորության նախարար, կոմս Ի. Ի. Տոլստոյն իր հուշերում գրում է. «Ո՞ւմ էր հարկավոր, ո՞ւմ գլխին փչեց ուղղափառ վրացիների կամ ռուսների հետ ամուսնանալու դեպքում իրենց երեխաներին ուղղափառության ոգով դաստիարակելու համար հայերից ստորագրություն պահանջել»<sup>12</sup>:

**Այսպիսով, առաքելական հավատը հայ ժողովրդի համար մնում էր անփոփոխ ու կայուն սրբություն, իսկ Հայ Առաքելական եկեղեցին՝ հայ ժողովրդի ինքնությունը մարմնավորող բարոյահոգեբանական կառույց:**

**ԹԱՆԱՐԱ ՎԱՐՄԱՆՅԱՆ  
Պատմական գիտությունների  
թեկնածու**

**Գրականություն.**

1. Տե՛ս «Кавказский Календарь на 1907 г.», хронологический указатель, Тифлис, 1906, с.33:
2. Տե՛ս ՀԱԱ, ֆ.113, ց. 3, գ. 2, ք. 1:
3. Տե՛ս նույն տեղը, ք.18 շրջ.:
4. Է. Ակնունին, Կովկասյան խաբրիկներ, - «Դրոշակ», Ժնև, 1899, N-7, էջ 103:
5. Է. Ակնունին, Դեպի կրիվ (հայկական վշտագրության մի էջ), Ժնև, 1904, էջ 25-26:
6. Տե՛ս Ա. Գյուլխանյանյան, Բաբվի դերը մեր ազատագրական շարժման մեջ, «Հայրենիք», Բոստոն, 1924, N-3, էջ 64:
7. Վրաստանը և ազգային ինքնավարության հարցը Կովկասում, «Դրոշակ», Ժնև, 1903, N-10, էջ 165:
8. Տե՛ս նույն տեղը, էջ 165:
9. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 2, գ. 11, ք. 107:
10. Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 290, ք. 5:
11. Տե՛ս նույն տեղը, ք. 5:
12. Воспоминания министра народного просвещения графа И. И. Толстого (31 октября 1905 г. — 24 апреля 1906 г.), Серия «Мемуары русской профессуры», кн. 2, М., 1997, с. 122.



# ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ԴԵՌ ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԼԻՆԵԼ ՀԱՅ

Արևմտյան Ուկրաինայում, դեռևս 1939թ. լեհացած, կաթոլիկ դարձած և լեզուն կորցրած մեծ թվով հայեր էին ապրում, ովքեր վառ էին պահում իրենց ազգային ինքնագիտակցությունը: Նրանց, ում Ստալինը աքսորեց Սիբիր և Ուրալ, Լեհաստանի քաղաքացիներ էին, որտեղ հայերը ազգային փոքրամասնություն չեն համարվել, ինչպես, օրինակ՝ հրեաները, որոնց թիվը մինչ Մեծ հայրենականը 3,5 մլն է եղել: Հայերը էթնիկ խումբ են համարվել, բայց միաժամանակ լեհ էին հայկական ծագումով: Երբ 1630թ. արքեպիսկոպոս Տորոսկիչը (Թորոսյան) կաթոլիկություն ընդունելու պայմանագիր ստորագրեց Վատիկանի հետ, դա լեհահայության վերջի սկիզբն էր: Ե՛հ չէ, որ հայերը սկզբում կաթոլիկ եկեղեցին չէին ընդունում, անգամ վարկած կա, որ 50 տարի եկեղեցի չեն գնացել, երեխաներին չեն կնքել, պսակ չեն արել, ինչ է՛ չկտրվեն Հայ առաքելական եկեղեցուց: Սակայն տարիների ընթացքում դարձան կաթոլիկ:

1943-44թթ. գերմանացիները խրախուսում էին լեհ-ուկրաինական բախումները. Ուկրաինայի ազգայնամոլները հարձակվում էին Լեհաստանի Կուտի քաղաքի բնակիչների վրա (մեծամասնությունը՝ հայ) և կացիներով կոտորում նրանց: Գերմանացիները ոչ խիստ, սակայն բացատրություն են պահանջել. «Ինչո՞ւ նրանց, նրանք էլ հո՞ւ լեհ չեն»: «Լեհահայը կրկնակի լեհ է», եղել է բացատրությունը:


Գլխվիցեյում 1989թ. վարդապետ նշանակվեց Յոզեֆ Կովալչիկը (մայրը հայ), ով ուսանել էր Հռոմի Լեոնյան վարժարանում: Նա հայերեն փաստաթղթերում ստորագրում էր՝ Հովսեփ Նալբանդյան: Վարդապետը կոչված էր համախմբել ժողովրդին, սակայն նա լեհահայերին պառակտեց միավորելու փոխարեն. նրա վարդապետության վերջին տարիներին լեհահայը էլ եկեղեցի չէր գնում: Եվ այս ամենը վերջացավ նրանով, որ վարդապետը մեկ տարի առաջ վաճառեց հայ համայնքին պատկանող շենքը, որը քաղաքն էր տվել համայնքին՝ «Լեհաստանի հայերի միությանը» և «Մասիս» խանութը, որը ևս եկեղեցուն էր, ու փախավ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ քրեական գործ է հարուցված, և օրերս նրան ձերբակալել են:

Այսօր հայ կաթոլիկ եկեղեցուն միայն կիրակի օրն է հայկական ծեսով հայերեն պատարագ մատուցվում: Վարդապետը շաբաթ օրը գալիս է Կրակով, որտեղի եկեղեցին հատկացնում են հայերին պատարագի համար:

Հայ կաթոլիկ եկեղեցին ոչ մի կապ չի ուզում ունենալ Հայ առաքելական եկեղեցու հետ: Եվ եթե լեհահայը չունի հոգևոր կյանք, ապա խոսել մշակութային կյանքի մասին, արդեն անհեթեթ է: Կրակովում կա Հայ մշակույթ սիրողն-

րի միություն, որն էթնիկ սկզբունքներով չի կազմված, նրա անդամների մեծ մասը օտարազգի հայազետներ են: Չուտ հայկական միավորում՝ «Լեհաստանի հայերի միությունը» ստեղծվել էր վարդապետ Յոզեֆ Կովալչիկի նախաձեռնությամբ: Միությունը հիմա չի գործում:

Լվովի մայր տաճարը, որը գտնվում է Հայկական փողոցի վրա, 13-րդ դարի շինություն է, շատ գեղեցիկ, տիպիկ հայկական ճարտարապետությամբ: Շնորհիվ Ուկրաինայի հայերի հոգևոր առաջնորդ՝ Նաթան ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանի (այսօր՝ Հայ առաքելական եկեղեցու Մեծ Բրիտանիայի թեմի առաջնորդ) 1990-ականների կեսերին այն վերադարձվեց Հայ առաքելական եկեղեցուն և հիմա գործող հայկական եկեղեցի է:



Լեհահայը դեռևս 700 տարի առաջ է կորցրել իր լեզուն և այսօր էլ հայերենը պահելու ձգտում չունի: Ավագ սերնդի մոտ պահպանվել է ազգային ինքնագիտակցությունը: Նրանց զավակների մոտ ավելի քիչ, իսկ թոռների մոտ՝ արդեն չկա: 36.000 հայ կա Լեհաստանում, ովքեր ընդունում են իրենց հայկական ծագումը: Այն ժամանակ, երբ հայը դավաճանեց Հայ առաքելական եկեղեցուն, դարձավ կաթոլիկ, դադարեց հայ լինել: Վերջին տարիներին Հայաստանից այնտեղ հաստատված հայերի մեծ մասն անգամ այս երկու եկեղեցիների տարբերությունը չգիտի:

1990-ականների կեսերին 40-60 հազար հայ է բնակվել այնտեղ (այսօր՝ 4-5 հազար): Եվ քանի որ երկրի տնտեսական վիճակը ծանր էր, իսկ քաղաքացիության խնդիրը՝ կարևոր, նրանց մեծ մասը տեղափոխվեց եվրոպական այլ երկրներ, շատ քչերը վերադարձան Հայաստան: Հայաստանից եկած հայի ազգային ինքնագիտակցությունը նույնպես թույլ է. հայ երիտասարդները ամուսնանում են լեհերի հետ՝ օրինական կեցություն ձեռք բերելու համար: Եվ շատ ընտանիքներում երեխաները լեհերեն են խոսում:

Լեհաստանի Սեյմը վերջերս ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Դա Տադեոշ Իսակովիչ-Չալեսկի վարդապետի շնորհիվ էր, ում աջակցեցին լեհահայ պատգամավորներ Լեշեկ Աբգարովիչը և Վոյցեխ Մոյզեսովիչը: Մեծ եղեռնի 90-ամյակը նշանավորվեց Կրակովի եկեղեցու բակում խաչքարի տեղադրմամբ:

Լեհերի պատմության մեջ հայկական ծագումով բարձրաստիճան պաշտոնյաներ շատ են եղել, օրինակ՝ կրթության առաջին նախարար Պիրամովիչը (Գրիգոր Փիրումյան), ով լեհերենի դասագրքեր է կազմել: Կրակովի գեղարվեստի ակադեմիայի ռեկտորը՝ Ակցենտովիչն էր, ում անունով այսօր կա հրապարակ, 1990-ականներին երկրի փոխվարչապետը՝ Մանուկիչը: Սակայն ունենալ հայկական ծագում, դեռ չի նշանակում լինել հայ: Այսօր Լեհաստանում մշակույթի ու արվեստի լեհահայ գործիչ չկա:

## ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ 160 ՀԱՋԱՐ ԴՈՒՍԱՐ ԿԱՐԺԵՆԱ

Համաժողովի կազմակերպման և անցկացման նպատակով ՀՀ կառավարությունը պահուստային ֆոնդից արդեն իսկ 72 մլն 862.5 հազար դրամ (160 հազար դոլար) հատկացրել է երկրի արտաքին գործերի նախարարությանը: Հայաստան-Սփյուռք երրորդ համաժողովը կայանալու է Երևանում, այս տարվա սեպտեմբերին, ինչպես տեղեկացնում է ԱԳՆ մամլո ծառայությունը («Ազգ», 05, 05, 2006թ.):



# ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Չրույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի վարիչ Տեր Հովակիմ աբեղա Մանուկյանի հետ:*

## **- Հայր Սուրբ, ինչպե՞ս են միմյանցից բաժանվել առաքելական, կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիները:**

- Առաջին դարում քրիստոնեությունը տարածվեց և ստեղծվեց «Սուրբ, առաքելական, ընդհանրական» եկեղեցին: Այն տարածվեց աշխարհի տարբեր երկրներում, մի շյուղն էլ Հայաստանում հաստատվեց: Բայց Քրիստոսի անձը մարդիկ տարբեր կերպ էին ընկալում. կային հոգևորականներ, ովքեր Քրիստոսի անձի հետ կապված տարբեր տեսակետներ էին արտահայտում, ոմանք՝ ճիշտ, ոմանք՝ սխալ: Եկեղեցին ժողովներ էր գումարում, որպեսզի առաջացած խնդիրները հարթեր, հարցերին պատասխան տար: Խնդիրներ եղան, որոնց չկարողացան պատասխանել, և սրանք դարձան բաժանման պատճառներ, որոնք մինչև հիմա գոյություն ունեն: Առաջին բաժանումը տեղի ունեցավ 5-րդ դարում՝ 451-ին, երբ Կոստանդնուպոլսի մերձակա Քաղկեդոն քաղաքում ժողով գումարվեց: Այստեղ քննվեց Քրիստոսի բնությունների հարցը, այսինքն՝ Քրիստոս և՛ կատարյալ մարդ էր, և՛ կատարյալ Աստված, և ինչպե՞ս են այդ երկու բնությունները միավորվել մեկ անձի մեջ:

Այս հարցի շուրջ առաջանում է երկու հիմնական ուղղություն, մեկը՝ Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցն էր, մյուսը՝ Անտիոքիցն, որի հետևորդները գահակալում էին Կոստանդնուպոլսում, իսկ նրանց աջակցում էր Հռոմի Լևոն Պապը: Այս երկու դպրոցների միջև տարածայնություններ են առաջանում: Առաջին մեծ տարածայնությունը հնարավոր է լինում հարթահարել 431թ. Եփեսոսում գումարած Տիեզերական երրորդ ժողովի ընթացքում: Այնուամենայնիվ, 451թ. Քաղկեդոնի ժողովի արդյունքում տեղի է ունենում բաժանում արևելյան եկեղեցիների միջև:

Առաջին բաժանման արդյունքում արևելյան մի շարք եկեղեցիներ դադարեցրեցին եկեղեցական հաղորդությունը Կոստանդնուպոլսի և Հռոմի աթոռների հետ, նրանք են այսօրվա Ղպտի եկեղեցին՝ Եգիպտոսում, Ասորի Հակոբիկյան եկեղեցին, Հնդկի Մալաբար եկեղեցին, Եթովպիայի Թևահեդո եկեղեցին և Հայ Առաքելական եկեղեցին, որոնք կազմում են Հին Արևելյան Ուղղափառ եկեղեցիների ընտանիքը: Այս հինգ եկեղեցիները չեն ընդունում Քաղկեդոնի ժողովի որոշումները և ընդունում են Կյուրեղ Ալեքսանդրացու ուսմունքը Քրիստոսի երկու բնությունների միավորման հարցի շուրջ և դավանում են Քրիստոսին որպես կատարյալ մարդ և կատարյալ Աստված՝ հավատարմով, որ Նրա երկու բնությունները միավորվել են

մեկ միացյալ աստված-մարդկային բնության մեջ:

11-րդ դարում մեկ այլ խնդիր է առաջանում Կոստանդնուպոլսի և Հռոմի միջև: Հարցը վերաբերում էր Սուրբ Հոգու բխման վարդապետությանը: Մենք դավանում ենք Սուրբ Երրորդությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Սուրբ Հոգին բխում է Հորից, թե՛ և՛ Հորից, և՛ Որդուց: Այս հարցը դառնում է եկեղեցիների մի բաժանման պատճառ, և 11-րդ դարում՝ 1054-ին, Կոստանդնուպոլսի աթոռը բաժանվում է Հռոմի աթոռից և իրեն հետևող եկեղեցիների հետ միասին, որոնք գտնվում էին Հունաստանում, Բալկաններում, Ռուսաստանում և այլուր, վերցնում են ուղղափառ անունը, այսինքն՝ ուղիղ և ճիշտ փառաբանող: Սրանք բյուզանդական ավանդության ուղղափառ եկեղեցիներն են:

Հռոմի աթոռը վերցնում է կաթոլիկ անունը, որը նշանակում է ընդհանրական:

Կաթոլիկ եկեղեցին, որ սփռված է աշխարհով մեկ (մոտ 1 մլրդ. անդամ ունի) ղեկավարվում է Հռոմից: Ուղղափառները մոտ 600 մլն են: Կաթոլիկ եկեղեցու բարձրագույն իշխանությունը Հռոմի Պապն է, իսկ ուղղափառինը տիեզերական ժողովը: Այս եկեղեցիները նման են նրանով, որ ունեն նվիրապետություն, խորհուրդներ, եկեղեցիների համար կարևոր պարագաներ, որոնք չունեն բողոքական շատ եկեղեցիներ:

Տարբերությունն այն է, որ խնդիրներ կան աստվածաբանության հարցերի շուրջ Սուրբ Հոգու բխման խնդիրը. ուղղափառները հավատում են, որ Սուրբ Հոգին բխում է Հորից, իսկ կաթոլիկները՝ Հորից և Որդուց, և Քրիստոսի բնությունների հարցը:

Նաև գոյություն ունի Հռոմի Պապի գերագահության խնդիրը: Տարբեր են նաև Սբ. Մարիամ Աստվածածնի վերաբերյալ կարծիքները. ըստ կաթոլիկների՝ Մարիամ Աստվածածինը իր ծնողներից ծնվել է անարատ ձևով, այնպես, ինչպես Քրիստոսը ծնվեց, ըստ ուղղափառների՝ Աստվածածինն իր կյանքով է արժանացել այդ սրբությանը և ընտրվել Աստծո կողմից:

Կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների միջև գոյություն ունի նաև մի շատ սուր խնդիր: Սա վերաբերում է արևելածես կաթոլիկ եկեղեցիներին: 16-րդ դարում Կաթոլիկ եկեղեցին տարածքներ կորցրեց Արևմուտքում և փորձեց այդ տարածքները վերագտնել Արևելքում: Հետագայում իր միսիոներների միջոցով Արևելքում հաստատեց այնպիսի եկեղեցիներ, որոնք իրենց ծեսերով նման են տեղի եկեղեցիներին, որոնց հետ չեն հաղորդվում: Այսպես, Ղպտի եկեղեցու կողքին ստեղծվեց Ղպտի կաթոլիկ եկեղեցին, Հայ եկեղեցու կողքին՝ Հայ կաթոլիկ եկեղեցին, Ասորի եկեղեցու կողքին՝ Ասորի կաթոլիկ և այլն: Այս եկեղե-

ցիները ղեկավարվում են պատրիարքների կողմից և գտնվում են Հռոմի Պապի իշխանության տակ: Եթե այսօր մենք կարող ենք Հռոմի հետ պաշտոնական երկխոսություն վարել, բավական հաջողություններ արձանագրել և լուրջ համագործակցություն ունենալ, ապա այս եկեղեցիների հետ չենք կարող լինել ինչպես հավասարը հավասարի հետ:

## **- Հայ եկեղեցին որևէ բան ձեռնարկո՞ւմ է արևելածես կաթոլիկ եկեղեցիների դեմ:**

- Հայ եկեղեցին որևէ եկեղեցու դեմ որևէ բան չի ձեռնարկում: Հայ եկեղեցին իր առաքելության մեջ է և իր առաքելությունն իրականացնում է թե՛ Հայաստանում, թե՛ սփյուռքում: Մենք չենք կարծում, թե պետք է պայքարել: Պետք է զորանալ. եկեղեցիները պետք է զորանան և միավորվեն: Հովհաննեսի Ավետարանի 17-րդ գլխի 21-րդ համարում ասվում է. «Բոլորը թող մեկ լինեն, որպեսզի աշխարհը հավատա»: Հիմա մենք աշխատում ենք մեկ լինել:

## **- Ի՞նչ հարաբերությունների մեջ են կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիները:**

- 20-րդ դարում սկսվեց մի շարժում, որը հայտնի է Էկումենիկ անունով, որը փորձում է եկեղեցիներին բերել համագործակցության և աստվածաբանական երկխոսությունների:

Եկեղեցիները սկսեցին աստվածաբանական երկխոսություններ իրականացնել, որպեսզի հարթեին պատմությունից ժառանգած տարածայնությունները: Մեր եկեղեցին և մասնակցում է այս երկխոսություններին: 1965-ին Հայ եկեղեցին համաձայնագիր է կնքել իր դավանակից եկեղեցիների հետ, որից հետո՝ որպես մի ընտանիք, երկխոսությունների մեջ մտել մյուսների հետ:

Այժմ սկսվել են պաշտոնական երկխոսություններ Կաթոլիկ եկեղեցու և մեր դավանակից եկեղեցիների միջև, որի մասն է կազմում նաև Հայ Առաքելական եկեղեցին: Քննարկվում են այնպիսի աստվածաբանական հարցեր, որոնք խոչընդոտում են երկու եկեղեցիների հարաբերություններին:

Վերջին երկխոսությունը տեղի է ունեցել սույն թվականի հունվար ամսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Հավաքվել էին աստվածաբաններ աշխարհի տարբեր ծագերից՝ ներկայացնելով կաթոլիկ և հին արևելյան ուղղափառ եկեղեցիները:

Սա երկարատև գործընթաց է. առաջադրվում և քննարկվում են հարցեր: Ի՞նչ կարծիքով, այդ հարցերի պատասխանները կտրվեն ապագայում:

**Տպագրության ներկայացրեց  
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ**



**ՕՐԵՈ ՕՐԵՈՅԱՆ**

**ԵՐԿՆՔԻՑ ԿԱՆՎԱԾ ԼԵՈՆ ԻՐԱԿԱՆ**

Այդ ո՞ր գործած մեղքի համար հայիս տվիր խաչված թևեր,  
Ո՞ր ունեցած վերքի համար հայիս տվիր ցնցված օրեր,  
Ինչո՞ւ, ինչո՞ւ դու հեզնեցիր կյանքի դյուրող փայլը չնչին,  
Բարձր ու վեհ և իմաստուն բիրիական լեռան լանջին...  
Ո՞ր է պապերիս կապույտը ծավի, կամարը երկիր-նախշուն-նախամոր,  
Օրերիս մեջ՝ վեհ ու երկնամերձ Մասիսը՝ երկիր-սիրած նախահոր...  
Հաստ՞ էս, արդյոք, ինչ ցավ է մխում իմ Լեռան հոգու խորքերից,  
Եվ դառնում բողոք, ելնում իր ակունքներից...  
Հինգ միլիոն հայ մորմոք է, աստանդական, նույնքան մեռած,  
ՏԵՆ, ե՞րբ պիտի տեսնեմ հայիս անմեռ տեսիլքիդ բոցին խառնված,  
Եվ ինչքա՞ն երազենք նույն հայացքով երկնքից առկախ Լեռն իրական,  
Եվ որքա՞ն մնանք որք ու գաղթական՝ գույներում մեր արյան...

Աստված սեր է, իսկ եկեղեցին մեր փառաց  
Չի թողնում, որ ես մնամ անարատ ու ազգուրաց,  
Հոգուս թաղարում հողն է տնքում պապերիս,  
Ոխ ու քեն չունեն, վարդն եմ ապրում օրերիս...  
Ես Օքրոն եմ՝ ազգիս դար-հիմքերին ոսկեեջ,  
Աստված սեր է, ինձ որոնեք լուռ-լուռության մեջ...  
Աստված սեր է, Աստծո հետ նստած կողք-կողքի,  
Լուռ մեր աղոթքն ենք անում անհունում երկնքի...  
Հիշիր՝ մի՛ձգտիր դեպի վեր, ոչ էլ վարձ խորության,  
Անվտվվիր Աստծո մեջ, Աստված սեր է, խորհուրդ հավերժության...

**ԱՍՏՎԱԾ ՍԵՐ Է**

Գրական աշխարհն անեզր է, և որքան պարզ է, նույն-  
քան էլ խրթին ու խորհրդավոր է: Համաշխարհային գրա-  
կանության երկնականարում, վաղ միջնադարից մինչև  
20-րդ դարի 80-ական թվականները, հայ գրողների հրաշ-  
ալի աստղաբույլ ստեղծվեց: Աստղաբույլ, որը դարերի  
հեռավորությունից փայլատակում է շարունակ: Մեր օրե-  
րում, կարծեք թե պայմանական դադար է, չնայած որ մու-  
սաները չեն լուռ: Անկախ մասնագիտությունից, բնա-  
տուր շնորհից ու սոցիալական վիճակից՝ հայը նաև բա-  
նաստեղծ է: Այսպիսին էր Ջավախքի անվանի մտավորա-  
կաններից մեկը՝ Օքրո Օքրոյանը:

Օքրո Օքրոյանը ծնվել է Ջավախքի Ախալքալաքի շր-  
ջանի Տուրցխ գյուղում, 1939-ին: Պատանեկության տա-  
րիներից նա ընդառաջ է գնացել գրականության կանչին՝  
հայրենի հողից ուժ առած, ինչպես որ գերանդին է զարկել  
արտի լանջին, այնպես էլ գրիչն է դրել ճերմակ թղթին:  
Ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան ման-  
կավարժական ինստիտուտի բանասիրական և քիմիա-  
կան ֆակուլտետները: Այնուհետև աշխատել է՝ որպես  
մանկավարժ և միաժամանակ եղել է ծննդավայրի դպրո-  
ցի տնօրենը (նրա մահից հետո իր բարերար որդիների  
հովանավորությամբ այդ դպրոցը վերակառուցվել է և շրջ-  
վարչության որոշմամբ կրում է Օ. Օքրոյանի անունը):  
Օքրոյանը վարժապետ էր. դպրոցաշինությունը նրա տա-  
րերը: Նրա ուշադրության կենտրոնում միշտ եղել է ժո-  
ղովրդական կրթության բնագավառը, իսկ սաներին հայե-  
ցի կրթություն տալը՝ առաջնահերթ խնդիր. «Նախ ազգիս  
գիր ու դպիր, հետո նոր հաց ու պանիր»: Նա դասախոսել  
է Երևանի տնտեսաիրավաբանական համալսարանի  
Ախալքալաքի մասնաճյուղում: Միաժամանակ եղել է  
«Վրաստան» թերթի հատուկ թղթակիցը:

1996-ից մինչև կյանքի վերը՝ Օ. Օքրոյանը ղեկավա-  
րել է Ախալքալաքի շրջանային ժողկրթության բաժինը:

Օքրո Օքրոյանը թողել է գրական հարուստ ժառան-  
գություն՝ բանաստեղծություններ, պատմվածքներ, վի-  
պակներ, գրականագիտական հոդվածներ: «Հանդիպում  
ուղեծրում» բանաստեղծությունների ժողովածուն Օ. Օք-  
րոյանի գրական երախայրիքը եղավ, որին հաջորդեցին  
տարբեր ժանրերի ավելի քան մեկ տասնյակ ժողովածու-  
ներ՝ «Ուշացած գլջում» (1990), «Լեռան զանգեր» (1996)  
և այլն: 1999թ. «Բենիկ Սեյրանյան» աշխատության և «Վի-

րահայ արծակ» գրքի համար Մանուկ Աբեղյանի անվան  
գրականության ինստիտուտի գիտական խորհուրդը  
նրան շնորհել է բանասիրական գիտությունների թեկնա-  
ծուի գիտական աստիճան: 1996-ից մինչև 2003-ի մայիս  
ամիսը «Աստված սեր է» խորագրի ներքո հրատարակվեց  
նրա բանաստեղծությունների քառահատոր ժողովածուն:  
Շատ չանցած քառահատորին (արդեն հետմահու) հաջոր-  
դեց պատմվածքների սովորածավալ ժողովածուն՝ «Երկ-  
նաբնակը» խորագրով: Ժողովածուն հեղինակի վերջին  
աշխատանքն էր. այն ավանդապահ լեռնահայի ջա-  
վախքցու կյանքի 63 տարիներն է իր մեջ ամփոփում:  
Ար-  
ձակը ուշագրավ է խոհերի և հույզերի փիլիսոփայական  
յուրովի վերծանմամբ: Ջավախքի առօրյան արտացոլող  
հետաքրքիր պատմվածք-պատմություններ են տեղ գտել  
նրա արձակում:

Բանաստեղծ, արձակագիր, գրականագետ Օ. Օքրո-  
յանի մեջ ի սկզբանե էր բարերարի շնորհը. նրա հովանա-  
վորությամբ լույս են տեսել բազում հեղինակների գրքեր,  
պարբերականներ, այդ թվում՝ Թիֆլիսի «Կամուրջ» գրա-  
կան տարեգիրքը:

Եթե ամենքի և ամեն ինչի գնահատականը ժամանա-  
կին տալ կարողանայի՞նք. միայն ժամանակն է  
արժևորում և՛ մարդկանց, և՛ իրադարձությունները: Լավ  
մարդու անցյալը մեզանում դառնում է բարի հուշ, իսկ  
ուշացած խոսքը՝ ժամանակավրեպ գլջում: Հայ մտքի հա-  
մեստ դարբնոցի՝ Ջավախքի արժանահիշատակ մտավո-  
րականը եթե գրական աշխարհին տալու ոչինչ չունենար,  
ապա բավական էին նրա մտքի սլացքը և հոգու անեզր  
բարությունը: Հողի անսահման սիրահար էր Օքրո Օքրո-  
յանը, և հայրենի բնաշխարհի խորհրդավոր գեղեցկու-  
թյամբ արբած՝ երբեք չէր թաքցնում իր հիացմունքն ու  
հպարտությունը:

Ջավախքի հայտնի մտավորականն ու մեծ բարերարը  
2003թ. մայիսի 2-ին հանկարծամահ եղավ Երևանում:  
Նրա գրական ժառանգությունը լուսաբանելու, նաև ազ-  
գանվեր առաքելությամբ ներկայունս զբաղվում է  
Երևանում գործող Օ. Օքրոյանի անվան «Աստված սեր է»  
գրական հիմնադրամը, տնօրեն՝ Արտակ Ոսկանյան:

Այսօր Օքրո Օքրոյանի որդիները՝ Մկրտիչ և Հարու-  
թյուն Օքրոյանները շարունակում են բարերար հոր աշ-  
խատանքը...



# ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅՔ

ԲՆԱԶԱՆՑԱԿԱՆ ՀԻՄՔ, ՈՒՐԿԱԳԾԵՐ ԵՎ ԴԻՄԱՍՏԿԵՐՆԵՐ  
ԱՌԱՋԱԲԱՆ ԽՈՍՔ ԿԱՍ ՍՈՒՏՔ

*Մենք չենք ճանաչում այլ կերպ եւ կամուրջ մարդու եւ Աստծու միջեւ, քան ցեղը: Ցեղը... ուղին է: Հայոց պատմութիւն - դա երկունք է ԱՐՄԵՆԱԿԱՆ ցեղի ոգու (Հ. Ասատրեան, Հատընտիր, Երևան, 2004, էջ 53):*

Բոլոր ազգերն ունեն իրենց խորհրդանիշերն ու առաքյալները, հերոսներն ու դիցարանը..., առանց դրանց պարզապես հնարավոր չէ պատկերացնել տվյալ ազգին, ինչպես նաև, առաջին հերթին ժողովրդի մեջ բնակվող և նույն այդ ազգի կողմից ստեղծված մշակույթը: Այսօրինակի գիտակցմամբ, հիմնականում պարզապես անհնարին է դառնում որեւէ ազգի մտավորականի պատկերացնել մեկ այլ տվյալ հոգեդաշտից տարբերվող քաղաքակրթական համատեքստում:

Այսպես, օրինակ, եթե Բախը և Գյոթեն, Բեթհովենն ու Շիլլերը, Ֆիխթենն ու Հեգելը գերման ազգի զավակներն են, հնարավոր չէ (այսինքն՝ անհնար է), որ Վազներն ու Նիցշեն լինեն նոր զելանդական կամ ավստրալիական ժողովրդի ներկայացուցիչներ, և կամ էլ ասենք՝ աֆրիկյան - եթովպիական ցեղի մարդիկ:

Գոյավորվելով այսօրինակ հոգեդաշտում և առաջադրելով մանորինակ նրբություններ, ինչպես նաև հոգեդաշտ Հայ ազգի խորհրդանիշերից Կ. Ջարեյանը, մեջբերելով իռլանդացի գրող և մշակույթի գործիչ Ուիլյամ Բաթլեր Իթսին, շեշտադրում է. «Կան երկու յաւիտենութիւններ՝ Ցեղը եւ Հոգի»՝ յիշեցնելով, որ հիմաուրց ԻՌԼԱՆԴԻԱՆ (ԵՐԻՆԱ)<sup>1</sup> այդ երկուսն էլ ունեցել է»:<sup>2</sup>

Ցեղը, ըստ այդմ էլ, մարդու իսկությունն է, այն խորը, ուր ամփոփված են ազգի բոլոր աղբյուրները, կարելիություններն ու սկզբունքները, անհատական ես-ի կողմից անսահմանի գիտակցումը, ազգի լինելու եղանակը..., խորհրդավոր այն գոյակերպը, որ ընթանում է կանոնավորում է մարդու տիեզերական ՆԵՐԿԱՆ... ԱՐԵՎԻ իր ջերմութիւնը:<sup>3</sup>

Ուրեմն՝ գերմանացիների, իռլանդացիների... ման շԱՅՆ էլ ունի իր ՈԳԻՆ. խորհրդանիշերն ու Լեգուն, Հավատն ու դիցարանը, Հերոսներն ու պատկերացումները հերոսականի մասին..., որոնց միասնական գիտակցումն էլ կազմում է մեր խորագրի՝ ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅՔ-ի թեման ու բովանդակությունը:

...Իսկ այն հանգամանքը, որ մեր ժողովուրդը անհաղորդ է, ներկայումս



ինքնագիտակցված փորձեր չի անում ճանաչելու իր խորհրդանիշերը, մոռացել է (նրան սովորեցրել են մոռանալ) և ՆԱ, գնալով կորցնում է իր պատմական հիշողությունը և արտահայտված ՇԱՅՆՈՒԹԵԱՆ ձևում, նահանջում է լեզվից, հավատից..., մշակույթից ընդհանրապես, ուրիշ ողբերգություն է, որը ո՛չ թե խորացնել, այլ հաղթահարել է պետք ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒՆԵ:

Խոսելով դեպի հաղթահարումը միտման մասին՝ անհրաժեշտություն է զգացվում շեշտելու, որ գերմանական, ռուսական կամ էլ իռլանդական խորհրդանիշներից՝ ասենք Գյոթենն ու Դոստոևսկին, Սվիֆթն ու Ջոյսը՝ որպես ստեղծագործողներ, անկախ այն բանից, թե իրենց առջև խնդիր դրեցի՞նք թե ոչ, առաջին հերթին ճանաչեցին իրենց ազգը, որպիսի հոգեընթացն իրականացել է համամարդկային դաշտի անմիջական ներկայության մուտքով, քանզի այսօրինակ ճանապարհով, նրանք դարձան «մեր»՝ այս երկրագնդի բնակչության, սեփականությունը... բոլոր նրանց սեփականությունը՝ բնականաբար, մեր երկիր մուրակի, ովքեր իրականացնում են ինքնագիտակցական գործընթաց: Սակայն այս ամենով հանդերձ, եթե որևէ «խելամիտ» մարդ փորձի Գյոթեի կամ Հեգելի, ..., միջից հանել զուտ գերմանականը և Դոստոևսկիի միջից՝ ռուսականը, ..., նրանք կդադարեն գոյություն ունենալ: Դա այդպես է, քանզի ինչպես ապացուցում է իր «ՀԱՅԵՐ ԵՎ ՀԱՅՔ» աշխատության մեջ Է. Աթայանը. «Ազգայինն առավել խոր մակարդակում գոյավորած մարդկայինն է»:<sup>4</sup>

Շարունակելով մեր հանդուժմունքն այսօրինակ միտվածությամբ՝ հիշենք, որ մեր օրերում մի «երևելի» մշակութաբան այսպիսի միտք է հայտնել. «Եթե հրաշքով (ԱՍՏՎԱԾ թող որ այդօրինակ իրաջքներից հեռու պահի

ո՛չ միայն իռլանդացիներին, այլև ողջ աշխարհը) ԻՌԼԱՆԴԻԱՆ չքանա, ապա Ջեյմս Ջոյսի գրքերով մարդկությունը կարող է ո՛չ միայն Դուբլինը, այլև ողջ Իռլանդիան վերականգնել... վերգատնել...»:

Հեռու մնալով սարսափազդու համեմատություններից, խոսելով Կ.Պոլսում թեւածող հարաբերությունների, Կ.Պոլսի Սկյուդար թաղամասի և հայի ներաշխարհային թռիչքի մասին ընդհանրապես՝ Յ. Օշականը մտածումի այսօրինակ հենքից ապացույցի առաջարկ է անում, ըստ որի, Յակոբ Պարոնյանի, Ջաբել Եսաեանի և ԻՆՏՐԱՅԻ միջոցով կարելի է իրականացնել նույնաման գործողություն:<sup>5</sup>

Այս ամենն այդպես է, քանզի ժողովրդի բնագանցական սկզբունքի հիմնանյութի (ՀԱՅՔԻ սկզբունք) մշակմամբ կամ որ նույն բանն է՝ մշակույթով, որոշարկվում է ԱԶԳԻ անհատականությունը, որը հանգամանքների ճշգրիտ («բարենպաստ» ասում է պարոն Աթայանը) զուգակցման դեպքում է ընդունակ դառնում բարձրանալու ՈԳՈՒ համընդհանրականության ամենապարփակ ոլորտի մակարդակին:<sup>6</sup>

Այն է, ինչպես շեշտադրում է նույն ինքը՝ Է. Աթայանը, Հայի ազգային կյանքը մեզ կանգնեցրել է երկընտրանքի առջև:

Մենք հարկադրված ենք ընտրություն կատարել օրգանականի (սեփականի) և ո՛չ օրգանականի (ուրիշների, ... տիեզերականի...) միջև:<sup>7</sup>

Իսկ այդօրինակ երկնտրանքն ի սկզբանե հաղթահարվում, անբարենպաստ պայմանականություններից խուսանավվում է առաջին հերթին սեփական լեզվի ու հավատի (աբովանական ձև), ազգային մշակույթի գիտակցմամբ՝ «ՍՏԵՂԾԵՆՔ»-ի միջոցով. «Ցեղ մը, որ կ'ուզէ ապրիլ, պարտաւոր է ստեղծել... ապրելու համար տեւականութեան մէջ», վաղուց ճանաչվել է ՀԱՅԻ ցեղային կերպում մտածողների կողմից... ճանաչվել է և ժառանգվել: <sup>8</sup>

Խոսելով ցեղային (ՑԵՂԱՅԻՆ-ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ) հատկանիշներ յուրակերտած ՀԱՅՈՐԴԻՆԵՐԻ մասին՝ ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ճանաչման վճռական, որքան հարազատ վկայություններով, նույն այդ վկայությունները՝ որպես ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, մեր օրերում անհրաժեշտ է այդ ամենը այնպես իրագործել, որ հնարավորինս բաց չթողնվի, տրամաբանական շղթայի ձև ստանա, և



# ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԻՎԱՅՐ ՇՐՋՈՒՄՆ ՈՒ ԽԵՂԱԲԵԿՈՒՄԸ ՄԵՐ ՕՐԵՐԻ «ՊՈՆԶԻԱՅՈՒՄ»

Աշխարհի արարման օրից ցայսօր պատերազմներ են մղվել ու մղվում համուն ազատության և ընդդեմ բռնապետության:

Ամեն գրագետ հայի էության մեջ աշակերտական տարիներից դրոշմված է մեծավաստակ, հայրենապաշտ մտավորականի՝ Միքայել Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության՝ «Ես անբարբառ մի մանուկ երկու ձեռքս պարզեցի և իմ անգոր թևերով ազատություն գրկեցի» ոսկեծուլ տողերը և «Մինչև մահ, կախաղան, մինչև ամարգ մահի սյուն, պիտի գոռամ, պիտ կրկնեմ անդադար՝ ազատություն» ազատությունը պաշտպանելու սրբազօծ երդումը:

Շուկայական (բազարային) հարաբերությունները մեր կյանքը դուրս բերեցին շավիղից, խեղվեցին, ոտքի կոխան արվեցին սրբազնագույն շատ ավանդություններ՝ հոգեխոց ցավեր պատճառելով ժողովրդին:

Ձայրույթս մոլեգնության հասավ, կարդալով պաշտոնամեծ հայ գրողի՝ «Օ, դուք հանճարի ստվերներ, կերել եք չչի և ազատության» (Էդվարդ Միլիտոնյան, «Հիշատակի գանգեր», էջ 35) դժգույն տողերը:

Ազատությունը չչի կերակրատեսակի հետ նույնացնող գրողը նույնաբնույթ վերաբերմունք է ցուցաբերել նաև ճշմարտության նկատմամբ՝ գրելով. «Ճշմարտությունն է համբարձուն բանտանման հոգիներից, մեքքի վրա՝ ճաղերի հետ» (նույնը, «Արևի ժամացույց», էջ 175):

Հայ ազգը հավատապաշտ է: Ազատությունը հավատության ազատությունն է: Հավատությանը հավատապաշտության ի՞նչ աստիճանի պետք է հասած լինի հայ գրողը, որ հեղինակի այս տողերը. «Իմ տանը հայտնաբերվել է Քրիստոսի ոտնահետք, տրակտորի տիպի ներբաններով, գլխին հոտած ձուկ, նետված ձեռնոց և կասկածելի բաղադրությամբ սերմնահեղուկ՝ զուգարանակոնքի շրջակայքում» (Արփի Ոսկանյան, «Ծիկ», էջ 114): Նույն էջում, հավատությանը զուգորդելով բարոյագրության (անբարոյականության) հետ, հեղինակը ընթերցողին է հաղորդում հետևյալը. «Իմ տանը գրանցվել է 9 բալանոց երկրաշարժ, և փրկարարներին հաջողվել է փլատակների տակից հանել քառասուն պահուստակ առնանդամ և աղոթք տեսակի թմրանյութ»:

Հայ ժողովուրդը աստվածապաշտ ու աստվածասեր է: Կյանքի բոլոր՝ երջանիկ թե դժբախտ, հաջողակ թե ձախտոր օրերին հայը խոսքն ուղղում է Աստծուն՝ «Գոհ եմ

քեզնից Աստված», «Փառքդ շատ լինի Աստված», «Փառք քեզ Աստված», կամ «Դու փրկես Աստված», «Աստված, դու ազատ անես» և այլն:

Հայերենի բարբառներում Աստծու անհրաժեշտագույն ամենագորությունը, ամենակարող լինելը հավաստող անթիվ առած-ասացվածքներից մի երկուսը. «Անհաց տեղ նստի (բնակվել), անաստված տեղ մը նստի», «Անհաց կեղնի, անաստված չեղնի»:

Ազատությունը աստվածուրացման ազատությունն է, որի փաստերը շատ են ազատություն, խոսքի ազատություն հռչակած օրերի գրականության մեջ:

Գրիչը նոր ձեռքն առած Կարինե Ռաֆայելյանը պարզել է, որ «երկրում վճիռ կայացնող դատավորից տասնապատիկ անգամ դաժան է աստված» («Երբ գիշերանա», էջ 16): Լենա Անթառայանը, ավելի հեռու գնալով, բարբառել է. «Մի խեղճ Աստված, դարանակալ, հոգով դահիճ» («Մոռացված երգ» ժողովածու):

Աստվածուրացությանը անբարոյական հայիոյախոսության հետ միախառնելով՝ «Ծիկի» հեղինակը, խոսքը Աստծուն՝ մեր Հորն ուղղելով, գրել է՝ «Հայր մեր, փրկեցիցից, որ սիրենք քեզ, գուրգուրենք, կենակցենք հետդ, հղիանանք: Արի տես, թե ոնց են դևերը կղկղել մեզ վրա» (էջ 98):

Հայաստանի Հանրապետության գրահրատարակչության մրցանակ ստացած պետն էլ այսպես է բնութագրել Աստծուն. «Նա չի երևում մարդկանց, ինչպես պոռնոֆիլմերի կուրծքը սրկած դերասանուհի, ինչպես ծանրամարտիկի քրտինք» (Էդ. Միլիտոնյան, «Նոր թվարկություն», էջ 99): Հայաստանի Գրողների միության պաշտոնաթերթում էլ կարդում ենք. «Մզախոտ փչեց փչերից Աստծո» («Գրական թերթ», 1998թ., հունիս 13-15):

Խոսքի ազատությունը բնավ իրավունք չի տալիս ուրանալ մեր գրականության առաջամարտիկի՝ Խաչատուր Աբովյանի ճշմարտաբուխ այն նախազգուշացումը, թե «Մեր ազգին պահողն էլ լեզուն և ու հավատը, թե դրանք էլ կորցրինք, վայն էլե՛լ և մեր օրին» («Վերջ Հայաստանի»):

## Սիրուշ Բաղդասարյան-Թավալցյան Բանասիրական գիտությունների թեկնածու

ո՛չ մի մտածված օղակ դուրս չմնա խՈՍՈՂ ու խՈՐՀՈՂ ՀԱՅԻ ուշադրության կենտրոնից (տեսադաշտ): Ըստ այդմ էլ գիտելիքները՝ տեսակետներն ու սկզբունքները, անհրաժեշտ է այնպես վերապրել ու վերարտադրել, որ ընդգրկվեն այն բոլոր հեղինակներն ու գրագետները, որոնք ՅԵՂԱԴՐՄԱՆ հարցում հանգել են հավաստի ճշմարտությունների ձեռքբերման... քանզի նմանօրինակ ձեռնմեքերը չեն ընդգրկում համապատասխան ՎՄԻՍՍԻՎԻ (ՀԱՅԹԻ բնագանգական հենք):

**ՎԱՐԴԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**  
**Փիլիսոփայական**  
**գիտությունների թեկնածու**

**Լուսաբանում և ծանոթագրություն**

1. Իռլանդիայի հնագույն անվանումը. См. боле подробно Юунг. Г. Собр. соч. в 19-и томах, М., Renaissance, 1992, с.172.

2. Տե՛ս Ջարեան Կ., «Դեպի ԱՐԱՐՍ», Երևան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 304:

3. Տե՛ս նույն տեղում:

4. Տե՛ս Աթայան Է., «Հոգի եւ Ազատություն», Երևան, «Սարգիս Խաչենց», 2005, էջ 195:

5. «Պարոնեան կը ճանչնայ մեր բարբերը մորթային վկայութեամբ մը... Իր ծանօթութեանց շրջանակը կ'ընդգրկէ ամբողջ ՀԱՅ հասարակութիւնը, որ Պոլսոյ վրայով տեսակ մը ցեղային համադրութիւնը կը ներկայացնէր դիտողին աչքերուն». տե՛ս Օշական 3., «Համապատկեր Արեւմտա-

հայ գրականութեան», տասը հատորով, Երուսաղեմ, 1958, հ. 4: «Դէպի իրապաշտները», էջ 40, 95-96: «Կեանքը միանակարգակ սեւեռում մըն է մեր հին ու նոր գրականութեանց մէջ: Հագիւ քանի մը գործեր. «ՆԵՐԱՇԽԱՐՀ» եւ Տիկին Եսայեանի գործին մեծ մասը... տե՛ս նույն տեղում, հ. 10, էջ 287: «...Ատիկա (2. Եսայեանի «Սիլիտարի պարտեզները») 1890-ական թուականներու Պոլիսն է, անոր անտես, բայց անհերքելի ծորումներով գոյաւոր զգայնութիւնը» նույն տեղում, էջ 356:

6. Տե՛ս Աթայան Է., «Հոգի եւ Ազատություն», էջ 192:

7. Տե՛ս նույն տեղում, էջ 189:

8. Տե՛ս «ՄԵՐԵՆ», Հանդէս գրականութեան եւ արուեստի, Կ. Պոլիս, 1914, 1 յունուարի, էջ 3:



Հոգեբանության մեջ ընդունված են բազում բնութագրեր: Կարևորագույններից, սակայն ոչ շատ ուսումնասիրված, հանդիսանում է անկախության, ինքնուրույնության և անձնական նպատակների նվաճմանն ուղղված արարքներում ակտիվության աստիճանը, մարդու հետ տեղի ունեցող իրադարձությունների համար անձնական պատասխանատվության զգացումը:

Ամերիկացի հոգեբան Ռոտերը նման բնութագրերի հետազոտության համար ստեղծել է «վերահսկման տեղայնության» սանդղակ, որը հիմնվում է հետևյալ դրույթի վրա: «Մարդիկ միմյանցից տարբերվում են նրանով, թե որտեղ են տեղայնացնում իրենց համար նշանակալի դեպքերի վերահսկումը: Հնարավոր են վերահսկման երկու տեղայնություններ և, համապատասխանաբար, մարդկանց երկու տիպ:

1. **Էքստերնալներ.** այս տիպին պատկանող մարդիկ հակված են կարծել, որ իրենց հետ տեղի ունեցող իրադարձությունները հանդիսանում են արտաքին ուժերի, պատահականության, բախտի քմահաճույքի, այլ մարդկանց արարքների արդյունք: Էքստերնալները հաճախ պասսիվ են և հոռետես, համարում են, որ իրենց կյանքում ընդամենը «խաղազինվորներ են», և անզամ իրենց հաջողություններն ու ուրախությունները վերագրում են արտաքին հանգամանքներին, պատահականությանը կամ այլ մարդկանց կամքին:

2. **Ինտերնալներ.** ի տարբերություն էքստերնալներից, ինտերնալները մեկնաբանում են նշանակալի իրադարձությունները, որպես սեփական ջանքերի արդյունք: Նրանք համարում են, որ կյանքի կարևորագույն իրադարձությունների մեծամասնությունն իրենց սեփական արարքների հետևանքն է: Ինտերնալները հակված են ստանձնել ամբողջ պատասխանատվությունը ստեղծված իրավիճակների համար. ինչպես նաև այն բանի, թե ինչպես է կառուցվում իրենց կյանքն ընդհանրապես: Նրանք համարում են, որ սեփական ուժերով են հասել կյանքում բոլոր նվաճումներին և որ ընդունակ են ինքնուրույն հասնել իրենց նպատակների իրականացմանը նաև ապագայում: Նրանք իրենց պատասխանատու են զգում նաև բացասական իրադարձությունների համար, անհաջողությունների, տհաճ պահանջների դեպքում հակված են ինքնախարազանման: Այսպիսի մարդիկ իրենց գործողությունները համարում են կարևոր գործոն այլոց հետ հարաբերությունների կառուցման, աշխատանքային ոլորտի հաջողությունների, իրենց առաջընթացի և այլ հարցերում: Ինտերնալներն իրենց պատասխանատու են զգում նաև ներընտանեկան հարաբերություններում. նրանք ընտանեկան խնդիրների ծագման դեպքում հիմնականում չեն մեղադրում զուգընկերոջը, այլ առաջին հերթին տեսնում են սեփական մեղավորությունը և ձգտում են ներանձնային փոփոխությունների: Այս տիպի մարդիկ իրենց համարում են կարողունակ՝ վերահսկելու փոփոխարարություններն այլոց հետ: Նման դիրքորոշումը պահպանվում է նաև առողջությանն առնչվող հարցերում: Նրանք համարում են, որ առողջությունը պայմանավորված է ոչ թե բժիշկների միջամտությամբ, այլ՝ սեփական գործողություններով:

Այսպիսով, ինտերնալներին բնորոշ է ակտիվ դիրքորոշում կյանքի նկատմամբ, անկախություն և պատասխանատվություն: Ինտերնալները հաճախ կյանքում «հաղթանակողներ» են, իսկ էքստերնալները՝ «պարտվողներ»:

Հոգեբանական պրակտիկայում, ինչպես նաև հայ հասարակությունում, առհասարակ, հաճախ են հանդիպում էքստերնալ տիպի անձինք: Անշուշտ, այդ տիպի անձանց գերակշռությունը պայմանավորված է նաև մի շարք օբյեկտիվ, սոցիալ-տնտեսական գործոնների առկայությամբ,

ինչպիսին է, օրինակ, այն փաստը, որ աշխատունակ մարդկանց մեծամասնությունը չի կարողանում գտնել իր տեղը կյանքում, կամ ստիպված հարմարվում է անարդարություններին, անհամապատասխան, անզամ ստորացուցիչ հանգամանքներին: Սակայն հոգեբանական ծառայությունների երկար տարիների աշխատանքային փորձը թույլ է տալիս պնդել, որ հաճախ այդ ստիպողական հարմարումը արդյունք է նկարագրված էքստերնալ դիրքորոշմանը: Ու «անհաջողակ» այցելուն պարզապես խուսափում է ակտիվ գործողություններ կիրառել սեփական կյանքը բարելավելու ուղղությամբ: Բոլորին հայտնի է «հիվանդության շահը» երևույթը, երբ հիվանդը կարծես օգտագործում է իր վիճակը՝ արդարացնելու համար սեփական անհաջողությունները, խնդիրների առկայությունը, շփման դժվարությունները: Էքստերնալի անհաջողությունը նման է դրան: Ամենահեշտ բանը կյանքում, որքան էլ տարօրինակ թվա, անհաջողակ լինելն է: Դա է միակ երևույթը, որը ջանքեր ու ակտիվություն, որոշումների կայացման անհրաժեշտություն չի պահանջում: Բավական է մի անզամ զգալ անհաջողակ լինելու «բաղդությունը»՝ հեշտությամբ արդարացնելու համար սեփական պարտությունները, իսկ հետագայում՝ նաև ծուլությունը:

## ՄԱՐԴԿԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ «ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՏԵՂԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ»

Առավել վառ է արտահայտվում այս դիրքորոշման ներգործությունն ընտանիքում բռնության ենթարկված կանանց մոտ: Հիմնվելով պարբերաբար բռնության ենթարկվող կանանց «ուրեմն նա է իմ բախտը», «ճակատագիրն է այրապս որոշել» և նման այլ արտահայտությունների վրա՝ մենք հանգել ենք այն եզրակացության, որ նրանց մեջ գերակշռում են էքստերնալ վերահսկմամբ տեղայնականացմամբ կանայք: Այսինքն, նրանք տեղի ունեցող իրադարձությունները, հաջողությունները համարում են արտաքին ուժերի ներգործության, պատահականության, հանգամանքների կամ այլ մարդկանց ազդեցության արդյունք: Ահա թե ինչու՝ դրական փոփոխությունների իրականացման հարցում նրանք հաճախ պասսիվ են, հոռետես. «զգուս են», որ իրենցից ոչինչ կախված չէ, ամեն ինչ պայմանավորված է ամուսնու տրամադրությամբ, այլոց վերաբերմունքով: Այս համոզմունքն էլ հաճախ բարդացնում կամ անհնարին է դարձնում նրանց ակտիվ մասնակցությունը ընտանեկան մթնոլորտի բարեփոխման:

Ի՞նչ անել, եթե նկարագրված էքստերնալ տիպի մեջ հանկարծ ճանաչեցիք ձեզ: Մի՞թե դա նշանակում է նախագծած պարտություն կյանքի բոլոր ոլորտներում: Ո՛չ, ամենևին: Ինչպես և մարդկային բնութագրերի մեծամասնությունը, սա էլ ենթակա է փոփոխության: Առաջին քայլն այդ ուղղությամբ՝ սեփական դիրքորոշման բացախայտումն ու ընդունումն է: Հետագայում պարզապես անհրաժեշտ է հետզհետե ընդարձակել պատասխանատվության սեփական բաժինը կյանքում տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ: Նախ հիշենք դեպքեր, երբ իսկապես դուք եք ինչ-որ բանի հասել, առանց որևիցե մեկի միջամտության: Մտածեք, ինչը՞ կարող էր փոխվել, եթե այլ կերպ վարվեիք, այն դեպքերում, երբ ստեղծված իրադարձությունը ձեզ չի գոհացնում:

Կյանքում յուրաքանչյուր մեծ ու փոքր իրադարձություններում, անհատն ունի պատասխանատվության ամրավազմ մի փոքրիկ բաժին: Ստանձնելով այդ պատասխանատվությունը՝ յուրաքանչյուր մարդ ի գորու է խոսքով, մտքով, արարքով հետզհետե իրեն ենթարկել կյանքի հանգամանքները:

ՆԱՐԻՆԵ ԱՐԱՐԱՄՅԱՆ  
Հոգեբան





# Բ Ա Լ Ե Ն Ի

Բոլոր գեղեցիկ աղջիկները քմահաճ են լինում: Զրույցն ասում է, որ քմահաճ էր նաև հայոց սիրո ու գեղեցկության աստվածուհի Աստղիկը: Մի անգամ, երբ ինքն ու Վահագն աստվածը Մասիսի կատարի էին, Վահագնը ասաց.

- Մատդ ցցիր, և ես կբերեմ ինչ սիրտդ ուզի:
- Հա՞, - չարաճճի ժպիտը դեմքին խաղացնելով՝ ասաց աստվածուհին և մատը տնկեց դեպի Արարատյան դաշտ: Այդ պահին դաշտի ծառուտների սպիտակ ու վարդագույն ծաղիկները Վահագնի աչքին մշուշ-մառախուղ քվացին: Եվ նա ասաց.

- Ներքևում բալ է:
- Մի ծվեն բալ բեր:

Վահագնը իջավ մտածելով այն մասին, թե ինչպես պիտի մի քուլա ամպ բռնի ու բերի, տա սիրուհուն:

Շատ դանդաղ էր քայլում արևի աստված Վահագնը: Բայց ինքն էլ չհիմացավ, թե իր ճաճան չնեղը

ինչպես ցրեցին մեզ-մառախուղ-բալը: Նրա շողերից ծառերն այնքան արագ պտղակալեցին, որ մինչև դաշտ կիջներ՝ մուգ կարմիր մանր պտուղներն արդեն հասել էին:



Շտապելուց քաղցր միրգը թթվաչ էր մնացել:

Եվ Վահագնը Աստղիկի մոտ բարձրացավ՝ բռան մեջ լիքը բալ:

Այդ ժամանակվանից բալ կոչվեց բալ պտուղը, իսկ ծառը՝ բալենի: Ջարմանալի է, որ միրգ բալը հաղթեց մեզ-մառախուղ բալին: Հիմա բոլոր հայերը գիտեն, որ բալ նշանակում է բալենի ծառի պտուղ, իսկ տասը հազար հայից մեկը գիտե նաև, որ բալ նշանակում է մեզ, մշուշ, մառախուղ:

## Կ Ե Ռ Ա Ս Ե Ն Ի

Կեռասենին ու բալենին վիճեցին: Բալենին կշտամբեց.

- Դու լավ ազգական չես: Կողքիցս վեր ելար ու խլեցիր արևի՝ իմ բաժին լույսը: Ես մնացի թփի չափ, իսկ դու այնքան ձգվեցիր, որ համարյա հավասարվեցիր տանձենուն: Իմ հաշվին տարիքդ էլ հասցրեցիր մի դարի: Բայց այդքանից հետո էլ քո պտուղը չմեծացավ և մնաց իմի չափ:

Կեռասենին ամոթից շառագունեց, գույն առավ ու գույն տվեց: Դրանից էլ նրա մուգ կարմիր պտուղը մեկ կարմիր է լինում, մեկ՝ վարդագույն, մեկ՝ դեղին, մեկ՝ սև:

## Ա Յ Գ Ե Կ


Մեր պապերը Հայկական Կիլիկիայում հիմնադրել են մեկը մյուսից պտղավետ ու բուրավետ քառասուն հազար այգի ու պարտեզ: Դրանցից մեկը, որ գտնվում էր Տոնկալայի շրջանում՝ Միս մայրաքաղաքից ոչ հեռու, կոչվել է Այգեկ, այսինքն՝ այգեշատ: Այստեղ 1166 թվականին հիմնադրված վանքն էլ կոչվել է Այգեկ: Վանքի մեծակյացները հմուտ ծառամշակներ էին: Այգեկի սալորը, ծիրանն ու սերկևիլը տարբեր գույն, համ ու հոտ ունեին, որ աշխարհի ուրիշ անկյուններում չես գտնի:

Մեծ առակագիր Վարդանը ծնվել է Տլուք գավառի Մարաթա գյուղում, բայց չի կոչվել Վարդան Մարաթացի: Կրթությունը ստացել է Արքակաղնի նշանավոր վանքում, բայց չի կոչվել Վարդան Արքակաղնեցի: 1206 թվականին նա հաստատվել է Այգեկում: Հենց այստեղ էլ 1212 թվականին, Պաղտին իշխանի խնդրանքով, գրել է իր համբավվոր առակները: Եվ Այգեկ վանքում ունեցած ստեղծագործական մեծ երկունքի շնորհիվ ստացել է Վարդան Այգեկցի անունը:

Այգեկում այնքան շատ էր անուշահոտ մանուշակը, որ կարելի էր հնձել մանգաղով: 14-րդ դարում ջենովացի առևտրականներից մեկը գրել է. «Աշխարհը դրախտ կդառնար, եթե ամբողջովին նմանվեր հայկական Այգեկին»:

**ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ**  
Սոսյազ անտառ, 1988թ.

## Բ Ա Լ Ի Շ Ո Ւ Ր Թ Ե Ր Ո Վ Ի Ս Հ Ե Ք Ի Ա Թ . . .



Բալի շուրթերով իմ հեքիաթ, կարոտել եմ քեզ: Ու հիմա գիտեմ, որ կարոտի զգացումը գուցե ամենալավ նկարիչն է, որովհետև տեսնում եմ քեզ այնպես, ասես աչքիս առաջ նստած ես, տեսնում եմ քո դեմքի ամեն մի մանրամասնը, մինչև անգամ քո մազափունջը, որ, երբեմն-երբեմն ընկնելով դեմքիդ, ծածկում է ծախ աչքդ...

Դրսում անտանելի ցուրտ է: Գրում եմ քեզ՝ թուղթը դրած լուսամուտի զոգին: Լուսամուտի առաջ, մինչև հեռուները, ուր աչքս կտրի, ամեն բան ծածկված է սպիտակ ձյունով: Բայց երբ մտածում եմ քո մասին, ապա թվում է, թե լուսամուտի առաջ տեսնում եմ ծաղկած բալենի՝ նուրբ սպիտակ ծաղիկներով: Ծաղկած բալենին ամենագեղեցիկ ծառն է, դու ամենագեղեցիկ արարածն ես աշխարհում:

Նայում եմ դուրս ու աշխատում եմ պատկերացնել քո սիրելի դեմքը: Կարոտս օգնում է նկարել քեզ, ու տեսնում եմ քո ալ կարմիր շրթունքները: Այդ շրթունքների համար էր, որ քեզ «բալի շուրթերով հեքիաթ» անվանեցի: Ես տեսնում եմ, զգում եմ քեզ այնպես մոտիկ, այնպես պարզ, որ թվում է, թե զգում եմ քո շնչառությունը, քո տաք շունչը...

**ՇԱՀԵՆ ԹԱԹԻԿՅԱՆ**



# ՆՈՒՔԱՐ ՓԱՇԱ.

# Հ Ո Ւ Շ Ա Ս Ե Տ Ր

Եգիպտահայ նշանավոր պետական և քաղաքական գործիչ Նուբար փաշան (1825-1899թթ.) սերում է Նուբարյանների գերդաստանից: Նա նախնական կրթություն է ստացել Ջնյուռնայի հայկական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել է Փարիզում: Ապա զալով Եգիպտոս՝ սկսել է վարել պատասխանատու պաշտոններ. եղել է արտաքին գործերի նախարար, վարչապետ: Արտահայտելով կազմավորվող ազգային բուրժուազիայի շահերը՝ վարել է եվրոպացիների հետ համագործակցելու քաղաքականություն: Նուբար փաշան երկարատև պայքարից հետո ստեղծել է Եգիպտոսի քաղաքացիական, առևտրական, քրեական օրենսգիրքը, իսկ հյուպատոսական դատարանները՝ փոխարինել միջազգային դատարաններով, որոնք զգալիորեն սահմանափակել են եվրոպացի գաղութարարների իրավունքները Եգիպտոսում: Սակայն ճիշտ չգնահատելով հակաբրիտանական ապստամբությունը և բրիտանական տիրապետության ժամանակ տեղի ունեցած սոցիալ-քաղաքական տեղաշարժերը Եգիպտոսում՝ շարունակել է եվրոպացիների հետ համագործակցելու քաղաքականությունը, որը չի համապատասխանել անկախության ձգտող Եգիպտացի ժողովրդի շահերին:



քական ճակատագրի, մշակույթի և լուսավորության հարցերով: Գլխավորել է գաղութահայ ազգային-քեմական իշխանությունը, սատարել Թուրքիայից Եգիպտոս անցած հայ տարագիրների օգնության գործին, նպաստել՝ «Արմաւենի» հայերեն պարբերականի հրատարակմանը, դրամական միջոցներ տրամադրել Կ. Պոլսի Նուբար-Շահնազարյան վարժարանի հիմնադրմանը, կազմակերպել՝ հայ մատենագիրների ֆրանսերեն թարգմանությունն ու հրատարակումը: 1878-ին կազմել և Բեռլինի կոնգրեսին է հղել թուրքական տիրապետության տակ գտնվող հայերի վիճակի բարելավման իր ծրագիրը, որը, սակայն, չի ներկայացվել կոնգրեսին:

Եգիպտոսին մատուցած ծառայությունների համար Նուբար փաշան պարգևատրվել է շքանշաններով և արժանացել բազմաթիվ տիտղոսների, իսկ Կահիրեի կենտրոնական վարչերից մեկում տեղադրվել է նրա կիսանդրին: Եգիպտոսի նշանավոր դեմքերից մեկը՝ Բուտրոս Ղալին հրատա-

րակել է Նուբար փաշայի հուշատետրը: Հուշատետրի հրատարակումը ընթացել է փուլերով՝ ձեռագրից մինչև տպագիր:

Նուբարը իր հուշերը գրել է ֆրանսերեն՝ 1890թ. նոյեմբերից մինչև 1894թ. մայիս ընկած ժամանակահատվածում՝ Կահիրեում և Փարիզում ապրելու տարիներին, այնպես էլ ճամփորդությունների ժամանակ:

Քաղաքական գործիչ մտավորական ընկերները մշտապես աջակցել են նրան հուշատետրը թարգմանելու և հրատարակելու գործում: Հուշատետրի անգլերեն թարգմանության նախաձեռնողը Էդվարդ Դիսեին էր:

Նուբար փաշայի կինը՝ Ֆուլիկ խանումը, նրա հուշատետրը թարգմանեց արաբերեն և այն հրատարակեց Մուհամեդ Ալիի, Աբբաս 1-ի, Սայիդ փաշայի ջանքերով: Իսկ ինչ վերաբերում է Իսմայիլ փաշայի ժամանակահատվածին, ապա այդ ժամանակ դժվար էր այն հրատարակել: Սակայն Իսմայիլի ժամանակ Նուբարը մեծ և կարևոր գործունեություն է ծավալել երկրի քաղաքական կյանքում և նրա պատմության մեջ:

1983-ին վերջնականապես հրատարակվեց Նուբար փաշայի հուշատետրը՝ ամբողջությամբ: Իրականում, հուշատետրի մեծ մասը կապված չէ Եգիպտոսի և Նուբար փաշայի անձնական կյանքի հետ: Այն ընդգրկում է 19-րդ դարի կատարված կատարվող արևելյան բոլոր իրադարձությունները:

**Եգիպտոսի «Արև» հայատառ օրաթերթի համանուն արաբերեն ամսագրից թարգմանեց ԱՐՇԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ**

### ԶԱՎԱԽԱՀԱՅԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄՆՇԵՑԻՆ ՄԱՅԻՍԻ 28-Ը...

Ախալքալաքի կենտրոնական հրապարակը օրեր առաջ կրկին մարդաշատ էր. ջավախահայերը միասնաբար առաջին անգամ տոնում էին 28-ը՝ Հայաստանի առաջին Հանրապետության անկախության օրը: Տոնախմբությունը կազմակերպել էր Երևանի «Նարեկացի» արվեստի միությունը՝ Ջավախքի երիտասարդական մարզամշակութային միության և «Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքի հետ, մասնակցում էին «Կարին» ազգագրական երգի, պարի և «Հայի կանչ» ժողովրդական երգի համույթները: Տոնի առիթով Ջավախքում կազմակերպվել էր միջոցառումների մի ամբողջ շարք՝ մանկապարտեզի բացում և անվանակոչում, 50-ից ավելի սկաուտների երդման, կնքման արարողություն՝ Սք. Խաչ եկեղեցում, Ազատության հրապարակում հայկական կոխի, բազկամարտի և այլ մրցույթներ: Թեև միջոցառումը լավ առիթ էր հայրենակիցներին հանդիպելու և ուրախանալու համար, դա չազատեց ջավախահայերին ևս մեկ անգամ իրենց դժվարությունների մասին բարձրաձայնել:

### ՎԵՐՋԻՆ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՐՈՒՄ ԶԱՎԱԽՔԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՉԻ ՏԵՍԵԼ

Ջավախքի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Բարկեն արեղա Սալբյանը տեղեկացրեց, որ վերջին հարյուր տարում Ջավախքը Կաթողիկոս չի տեսել և ուրախությամբ ավելացրեց, որ առաջիկայում սպասում են Վեհափառի այցին: Հոգևոր արքնություն Ջավախքում կա՝ ստեղծվել է առաջնորդական փոխանորդությունը, հատկացվել է շենք, վերանորոգվել է 12 խոնարհված եկեղեցի, գործում են մանկական երգչախումբն ու կիրակնօրյա դպրոցները: Բիչ չեն նաև խնդիրները: Հայր Սալբյանի խոսքերով, իրենց ցանկությունն է, որ Ջավախքի եկեղեցիները հատուկ կարգավիճակ ստանան և վերադարձվեն Մայր արքունի: Նա նշեց նաև, որ մոտ ապագայում առաջնորդության՝ թեմի կարգավիճակ ստանալու իրենց ցանկության մասին: Ջավախքում կա քահանաների պակաս՝ 132 հայկական գյուղերի եկեղեցիներում ծառայում է երեք քահանա («Ազգ», 30. 05. 2006թ.):

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ



# «ՆԱԳՐԱՆԱԿԻ ՑՈՒՅԱՆՆԵՐՍ» ՄԱՍՈՒՆՅԻ ԳԱՎԻԹ ԷՊՈՍԻ ԹԵՄԱՆԵՐՈՎ

Մայիսի 22-ին «Նարեկացի» մշակույթի կենտրոնում կայացավ գեղանկարների ցուցադրություն «Չաղթանակի ցուցահանդես»՝ Մասունցի Դավիթ Էպոսի թեմաներով:

Սերկայունս ավելի շատ ապագային արվեստ կա, մեծ հոնորարներով ու մրցանակներով անդեն արվեստ, մենք փոքր ուժերով փորձեցինք ինչ-որ հակակշիռ ստեղծել և ներկայացնել էլ շատ ոգևորված ու հիացած էին: Տղաների մասին ասես, որ Ալեքը ֆորմալիստ է, ինչ հնարավոր տիտղոս ասես ունի: Միերը բազում ցուցահանդեսների է մասնակցել, մի շրջան Մոսկվայում է եղել: Վրեժը ուսանողական տարիներին է շատ մասնակցել ցուցահանդեսների, Ալեքսիսը ճարտարապետականում դաս է տալիս, ես բազմաթիվ ցուցահանդեսների եմ մասնակցել,- իր մտքերն է կիսում մեզ հետ Գոռ Աբրահամյանը:



րով: Գաղափարն ու նախածեռնությունը՝ Գոռ Աբրահամյանի և իր նկարիչ չորս ընկերների: Գոռ Աբրահամյանը ներկայացրել էր աշխատանքներ հետևյալ թեմաներով՝ «Առյուծածան Միեր», «Չորս ճյուղ», «Էպոս», «Ծովինար», «Դավիթը խաշնարած», Միեր Ստեփանյանը՝ «Միեր», «Չենով Օհան», «Դավիթ և Խանդուկ», Ալեք Ալեքյանը՝ «Ծովինար», «Ծովինարի երազը», «Հայրենի երազներ», Վրեժ Գրիգորյանը՝ «Դավիթը հաց է տանում հովիվներին», «Մարա Մելիքի մահը», Ալեքսիս Սկրտչյանը՝ «Դավիթը գնում է Մելիքի դեմ կռիվ», «Հայոց աշխարհ»:

«Ցուցադրությունը հնարավոր եղավ կազմակերպել Լևոն Իվանյանի աջակցության շնորհիվ: Ցուցահանդեսի նպատակն էր ևս մեկ անգամ անդրադառնալ այս թեմային, քանի որ մեր Էպոսին, դիցաբանությանը հատուկ ենտ նկարիչներ են անդրադարձել՝ Հակոբ Կոջոյան (շատ հաջողված գեղանկարներ), Էդուարդ Իսաբեկյան («Դավիթ»), Երվանդ Քոչար (քանդակներ, գրաֆիկական շար-



Ընդգծենք, որ կայացած ցուցահանդես է, կայացած, հաջողված, ոգեղեն գործերով և ինչպես մենք էինք ակնկալում, ունենում է շարունակություն ազգային գաղափարախոսական այլ թեմաներով...

Ցուցահանդեսի արդեն իսկ տոնական մթնոլորտը ազգային-ժողովրդական ոգեղեն երգերի կատարումներով զարդարեցին Գրիգոր Համբարյանը և իր ղեկավարած մանկապատանեկան «Էրզրում» երգի համույթի շնորհաշատ սաները:

## ՄԻ ՆԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ



Հայ գեղանկարչության մեջ պատմական ժանրի հիմնադիր Վարդգես Սուրենյանցը Հայոց կաթողիկոսին պատկերել է այն պահին, երբ նա ստացել է տիրառնչակ հրովարտական **հունիսի 12-ի օրենքը**՝ Հայ եկեղեցու գույքը բռնագրավելու մասին: Իսկ դա նշանակում էր՝ հայ թեմական դպրոցների փակում: Նամակը փակ վիճակում ընկած է Վեհափառի առջև, սակայն նրա բովանդակությունը հայտնի է, այդ մասին հայտնել էր մամակաբերը՝ նույն այդ օրենքի նախածեռնողներից մեկը՝ Երևանի նահանգապետ Նակաշիճեն: Վերջինս շինծու ցավակցությամբ լի իր խոսքն ավարտում է այսպես.

- Վեհափառ, ստիպված եմ կատարելու օրենքը, այլապես ի՞նչ պատասխան պետք է տամ Աստծո և իմ երեք զավակների առջև:

- Իսկ ես ի՞նչ պատասխան պետք է տամ իմ երեք միլիոն զավակների առջև, պարոն նահանգապետ,- զայրացած հարցնում է Կաթողիկոսը: Նկարում համակ զայրույթ ու կամք արտահայտող Վեհափառի դեմքը, անուր սեղմված բռունցքներն արտահայտում են խորին համոզմունք, որ իր ժողովրդի հանդեպ կատարված ոչ մի չարագործություն անպատիժ չի մնա: Եվ այդ պատիժը չուշացավ. 1903թ. հոկտեմբերի 10-ին, Թիֆլիսում հնչակյանները կազմակերպեցին **հունիսի 12-ի օրենքի** գլխավոր նախածեռնող, Կովկասի փոխարքա Գոլիցինի մահափորձը: Ծանր վիրավորված և կաթվածահար Գոլիցինը ստիպված էր հեռանալ Կովկասից: Նրան փոխարինած Վորոնցով-Դաշկովը մեղմացրեց հայության դեմ հալածանքները. վերաբացեց հայկական դպրոցները:

Մյուս չարագործը՝ Նակաշիճեն նույնպես ստացավ իր արժանի պատիժը: 1905-ին, լինելով արդեն Բաքվի նահանգապետ, նա կազմակերպում է հայ-թաթարական ազգամիջյան կոտորածները: Նիկոլ Դումանի հրահանգով՝ 22-ամյա երիտասարդ դաշնակցական Դրաստամատ Կանայանը՝ Դրոն, 1905թ. մայիսի 11-ին իրագործեց Նակաշիճեի մահապատիժը՝ Բաքվի կենտրոնական փողոցներից մեկում:

Հ. Ս.



# Պ Ի Բ Ի Ճ Ե Կ

Եփրատ գետի արևելյան ափին է գտնվում Պիր կամ Պիրիճեկ բերդը: Նախապատմական շրջանում կոչվել է Պիրթա, իսկ պատմագիրներն անվանել են Ջուզմա, հռոմեացիները՝ Պիրպոռում, արաբները՝ Պիրթ-էլ-Ֆուրաթ: Սելևկիոս Նիկատորը Պիրը նորոգելով և վերաշինելով կոչել է Ապամեա:

Ղուկաս Ինճիճյանը իր «Նոր Հայաստան» գրքում գրում է. «Պարսպապատ Պիր բերդաքաղաքը գտնվում է Ուրֆայի և Սարաշի միջև: Ապամաժոտ լեռան գառիթափին սանդղածն բարձրանում էր քաղաքը: Գետի ափին ուներ աշտարակներով մի հին բերդ, քարաբլուրին՝ մեկ ուրիշ բերդ և՛ կառուցված սրբատաշ քարերով: Բերդում էր գտնվում փաշայի պալատը, այնտեղ էին պահպանվում պատերազմական հնավանդ զենքերն ու գործիքները (սուր, նետ, աղեղ, վահան, սաղավարտ և այլն): Քաղաքի և բերդի պարիսպները այժմ մեծ մասամբ քայքայված են»:

1697թ. անգլիական գաղութի երեց Հանրի Մունտրելը, լինելով Պիրիճեկում, նկարագրում է հետևյալը. «Պիր միջնաբերդը մեծ և հին շինություն է: Երկաթե դարպասներով ներս մտնելուն պես տեսանք քարե մի քանի գնդեր՝ 20 մատնաչափ տրամագծով, երկաթե մեծ լիսեռներ՝ անհիվներով, պտուտակներ և մի քանի դաշտային պղնձե թնդանոթներ: Բերդում տեսանք մի մեծ սենյակ՝ լցված հին զենքերով, ապակե շշեր՝ նետերի ծայրերին դնելու և արծակելու համար, հռոմեական համետներ, ձիու գլխանոցներ և այլն»:

Պիրը, Եփրատի ափին գտնվելով, շատ անառիկ դիրք ուներ, պարսպապատ լինելուց բացի, խոր խրամներն այն բաժանում էին ցամաքից: Պատերազմի ժամանակ Եփրատի ջրով լցնում էին խրամներն ու քաղաքը վերածվում էր ցամաքից բաժանված կղզու: Պիրը՝ որպես պարսպապատ քաղաք, կարևոր դեր է կատարել 10-12-րդ դարերում: Պատմագրության մեջ Պիրը հիշատակվում է 1110-1111թթ., երբ Եղեսիայի կոմս Պաղտինը օգնություն է կանչում հայ իշխաններին, հատկապես՝ Պահլավունի Ապղարիային: Ապղարիայը Պիրում մեծ իշխանություն էր հիմնել, որն այնքան զորավոր էր, որ իր բանակներով կարող էր դիմադրել արաբական հզոր բանակին, և օգնության հասավ Եղեսիայի Պաղտին կոմսին:

Պարսից Բուրուխ ամիրան 1114-ին մեծ բանակով գալիս և պաշարում է Պիրը. «Եւ գայր իջանէր ի վերայ քաղաքին, որ կոչուէր Պիր՝ յեզր Եփրատ գետոյ»: Ապղարիայը օգնություն է կանչում իրեն բարեկամ, դրացի Խարբերդի Պալակ իշխանին, որը կայծակի արագությամբ օգնության է հասնում և մարտի է բռնվում պարսիկ սուլթանի հետ. կատաղի կռիվ է մղվում Եփրատի ափերին: Միացյալ բանակը փառավոր հաղթանակ է տանում:

Ապղարիայան եղբայրները, պարսիկների ոտնձգություններից ազատելով Պիրը, ձեռնամուխ են լինում պարիսպներով այն շրջապատելու, խոր խրամներ կառուցելու նրա շուրջ՝ ցամաքից այն անմերձեցալի դարձնելով: Միջնաբերդում կառուցում են հարմար բնակարաններ, քաղաքի շրջակայքում՝ ապահովության համար՝ պահա-

կակետեր, որոնք իրենց տրամադրության տակ ունեին ավելի քան հազար զինվոր:

Եղեսիայի Պաղտին կոմսը, տեսնելով Ապղարիայաների ուժը, չի հանդուրժում դա և ծրագրում է նրանց վերացնել և, գրավելով նրանց քաղաքները, մեծ բանակի գլուխն անցած, գարնանը գալիս և պաշարում է Պիրը: Թուրքերից էլ վատ վարվեց նա քրիստոնյաների հետ: Մի ամբողջ տարի պաշարեց քաղաքը՝ հասցնելով մեծ վնաս: Տեսնելով, որ նետ արծակելով քաղաքի պաշտպաններին ծնկի չի կարողանում բերել՝ կտրում է քաղաքի ջուրը: Պաշարումը երկարում է, սովից ու ծարավից նեղության մեջ հայտնված ժողովուրդը ապստամբում է Ապղարիայ եղբայրների դեմ անգամ դավադրություն կազմակերպում նրանց սպանելու համար: Իմանալով այդ Ապղարիայները ստիպված կատարում են ժողովրդի կամքը. բացում են քաղաքի դռները և, միջնաբերդից իջնելով, անձնատուր են լինում: Հակառակ իր խոստումին՝ Պաղտինը եղբայրներից բանտ է նետում, վերջիններս, բարեկամանալով բանտապահի հետ, գիշերով փախչում և ապաստանում են Հռոմկլայում՝ Թորոս իշխանի մոտ, որը նրանց սիրով ընդունում է: Թորոսը Եփրատի արևմտյան ափին հող է տալիս նրանց, եղբայրները հետագայում Թորոսի հետ մասնակցում են պատերազմների՝ կրկին ի ցույց դնելով իրենց քաջությունը:

Պիրը վերջնականապես անցնում է Պաղտինի ձեռքը, որն էլ իր հերթին հանձնում է Գալերան իշխանին. «Եւ կոմսն տայր գՊիրն Եւ զամենայն զաւառն ի Գալերան իշխանն Ֆռանկաց ահաւոր»: Այս անխոհեմ քայլով Պաղտինն ու



Ջուլիինը նույն սխալի մեջ են ընկնում, ինչպես բյուզանդական կայսրերը, որոնք, հայ իշխաններին մեջտեղից հանելով, անպաշտպան բողեթի իրենց արևելյան սահմանները՝ սելջուկ թուրքերի արշավանքների առաջ, որոնք հեշտությամբ արևմուտք առաջացան և մեկիկ-մեկիկ քանդեցին հայ իշխանների բերդերը: Ապղարիայներից հետո, հաղթեցին մյուս հայ իշխաններին՝ Գող Վասիլին, Կոստանդինին և Բագրատին, որոնք իշխում էին Թլպաշարի և Կարկառի շրջաններում: Հայ իշխանների հեռանալուց հետո, բյուզանդացի և լատին իշխանները իրենք իրենց ձեռքով բացեցին կայսրության ճամփաները թշնամիների առաջ: Պաղտին կոմսի մահով Պիրն անցնում է ճուլիցի, ապա՝ սելջուկ թուրքերի ձեռքը, մինչև թաթարների հայտնվելը պատմության թատերաբեմում:

1264-ին Հեթում Ա-ի թագավորության վերջին տարիներին Պիրն, ըստ Սմբատ պատմիչի, այլազգիների ձեռքում էր: Հուլավուհ խանը Տուրպա անունով մեկին ուղարկում է Պիրի վրա, սա քաղաքը գրավել չի կարողանում: Նրան օգնության է հասնում Հեթում թագավորը, սակայն Տուրպան, երբ իմանում է, որ Եգիպտոսի սուլթանը իր վրա է գալիս, թողնում է Պիրն ու հեռանում: Սրանից հետո Պիրը պատմության մեջ չի հիշատակվում:


**ՋԵՄՍԱ ԲՎՂՂԱՅԱՆ**



## ՎԵՐԱԳԱՐՁ ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ



Օրերս Երևանի Ամերիկյան համալսարանի մեծ դահլիճում ցուցադրվեց Տիգրան Բաբայանի «Արարատից մինչև Մուսա լեռ» փաստագրական ֆիլմը: Ֆիլմի նպատակն է ներկայացնել հայոց պատմական հայրենիքի ներկան, լուսաբանել ժողովրդական կյանքը: Այն բաղկացած է «Մայր Հայաստան», «Միջագետք», «Կիլիկիա» մասերից: Տ. Բաբայանը պատմում է. «Ես անձամբ չուզեցի կրկնել ոչ ոքի արածը: Ֆիլմը պիտի տարբերվեր մինչ օրս նկարահանված ֆիլմերից իր մոտեցումով: Մոտեցումը հետևյալն էր. փաստացի մեր հայրենիքից մեզ մնացել են մեր պապերի ու տատերի երգերը և այն հնարավորությունը, որ կարողանանք գնալ ու մեր աչքով տեսնել, ինչ որ բան նկարել: Որոշեցինք նկարել կարծ ֆիլմեր՝ մեկ երգի տևողությամբ»: Ֆիլմում ազգային երգերը կատարում է երգիչ Գրիգոր Համբարյանը (այժմ՝ «Շարական» համույթի մենբերգիչ): Պատմական վայրերը ներկայացվում են երգի ուղեկցությամբ: Երգերը կատարվում են վայրի պատմական և մշակութային անցյալին համապատասխան:



Ֆիլմի հովանավոր Վազգեն Գալճյանը անգլերեն և հայերեն լեզուներով ներկայացնում է այն վայրերը, որտեղով ճանապարհորդում են:

«Երկար ճանապարհորդեցինք, գնացինք Բոսֆորի ակփերը, դիմավորեցինք «Կիլիկիա» նավը: Ակն քաղաքում հուզվեցինք՝ տեսնելով հայերի թողած տները, որոնք

պահպանվել են և մեծ արժեք ունեն մեզ հայերիս համար: Այնտեղ Գ.Համբարյանը երգեց «Ղարիբ ախպեր»-ը»,- պատմում է Տ. Բաբայանը: Հեղինակի խոսքերով Ակն քաղաքի տների դռան փականները մեծ իմաստ ունեն. կան տղամարդու և կնոջ համար նախատեսված թակեր: Հայ կինը իրավունք չի ունեցել դուռ բացել տղամարդու առջև: Դռան վրայի խաչազարդ փականները արվեստի նմուշներ էին, որոնք կարող էին վկայել տան տիրոջ կրոնական պատկանելիության մասին:

Ճանապարհորդության ընթացքում Տիգրան Բաբայանը, Վազգեն Գալճյանը, Գրիգոր Համբարյանը հանդիպել են հայերի: Տ. Բաբայանը պատմում է, որ Քյահթա, Ադիաման քաղաքներում հայեր կան, որոնք չիմանալով հայերեն լեզուն ամեն կիրակի հավաքվում են ասորիների քրիստոնեական եկեղեցում:

Մի ճաշարանի տերն էլ հայ էր, ով թալիսմանի նման սրբությամբ պահում է «Հայր մեր» աղոթքի փորագիրը:

«Արարատից Մուսա լեռ» ֆիլմը ցուցադրվել է նաև Կանադայում, Ավստրալիայում և ԱՄՆ-ում:

Տ. Բաբայանը նպատակ ունի հետագայում նկարահանել ֆիլմ Կապադոկիայի մասին:

ԴԻԱՆԱ ՄԱԿԻՆՅԱՆ

## ԻՆՉՈՒՒՄ ԷՒՆ ՎԱՆԵՑԻՆԵՐԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ ԺԼԱՏ



Հայ ազատագրական պայքարի ամենահմայիչ դեմքերից էին վասպուրականցի Ալեքսանդր Պետրոսյանը (Պետոն) և իր նշանածը՝ Զարուհի Տերոյանը՝ հայտնի ֆիդայի Տիգրան Տերոյանի քույրը:

Կիրակի օրը Պետոն և Զարուհին Վարազա վանքի սաներին տանում էին Վարազա սար և հրածոթյան վարժեցնում: Կարծ ժամանակ հետո վանքի տղաներն այնքան դիպուկ էին կրակում, որ նրանց արձակած գնդակը գետին չէր ընկնում:

- Վանեցին ժլատ է նաև գնդակի հարցում,- ծիծաղում էր ծնունդով կարսեցի Պետոն:
- Վանեցին խնայող է, նա և՛ հաց ունի, և՛ զենք: Վա՛յ նրանց, ովքեր չեն կարողանում իրենց հացն ու մյուս սրբությունները զենքով պաշտպանել,- Պետոյին լրացնում էր Զարուհին: Այն, որ վանեցիները կարող էին իրենց սրբությունները պաշտպանել, վկայում են 1896թ. և 1915թ. ինքնապաշտպանական հերոսամարտերը:

## ՈՌԲԵՐ ԿԵՏԻԿՅԱՆԻ ՆՈՐ ՖԻԼՄԸ ԿՑՈՒՑԱԴՐՎԻ ՀՈՒՆԻՍԻՆ

Ֆրանսահայերի «Վան» լրատվական խումբը տեղեկացնում է, որ հունիսի 28-ից Ֆրանսիայի կինոթատրոններում ցուցադրվելու է Ռոբեր Կետիկյանի վերջին ֆիլմը, որը «Ճամփորդություն Հայաստանում» անունն է կրում: Հայաստանի ներկա օրվան և Սփյուռքի ինքնության տառապալի որոնմանը նվիրված ֆիլմում նկարահանվել են Արիան Ասկարիդը, Ժերար Սելյանը, Շողիկ Գրիգորյանը, Ռոման Ավինյանը, Սիմոն Աբգարյանը, Սերժ Ավետիսյանը, Քրիստինե Հովակիմյանը, Մադլեն Կետիկյանը:

Ֆիլմը ճշմարտացի, հուզիչ և շիտակ պատմություն է, որն անտարբեր չի թողնի հանդիսատեսին: Նկարահանումներն իրականացվել են Վայոց ձորի գյուղերի մոտակայքում, գյուղացիների մասնակցությամբ («Ազգ», 19. 05. 2006թ.):

# ՄԷՅՐԱՆԻ ԱՐՅՈՒՆՔԸ ՎԱՆԱՅ ԼՃԻ ԶՈՒՐԵՐԷՆ ԱԲԵԼԻ ԳԱՌՆ ԷՐ ՈՒ ԱՂԻ

**Աղթամար.** Աղթամար կղզին կը գտնուէր մօտաւորապէս Վասպուրականի կեդրոնական մասը, որուն շնորհիւ Աղթամարի կաթողիկոսները դիւրութեամբ կրնային հովուել ամբողջ Վասպուրականը: Դիրքն ալ ապահով եղած է, որովհետեւ կղզին կը գտնուէր ցամաքէն երեք քլմ. հեռու եւ միջին դարերուն ամրացած էր ամրոցով եւ աշտարակաւոր պահսպով մը:

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին շինուած է սրբատաշ կարմիր քարէ, որ բերուած է Բաղէշի Կոտոմ գիւղէն: Եկեղեցին խաչածեւ է, անսիւն: Գմբէթի խաչը 1910-ական թուականներուն, ինչպէս Լալայեան կ'ըսէ, արդէն խորտակուած էր:

Ս. Խաչը եղած է նշանաւոր ուխտատեղի, որուն կը դիմէին մարդիկ, իրենց մտրուակին հասնելու համար:

Ի ր ր ե ռ  
ն ո խ տ ա ո ռ  
գ ա լ ո Վ  
Աղթամար Սրուան ծ տ ե ա ն ց  
կ 'ը ս է . «Չեզ  
յ ո լ խ ա տ ա ի  
գ ա յ ի , ո 'վ  
Գ ա գ կ ա շ է ն  
մ ե ծ ա գ ո ռ ծ  
տ ա մ ա ր , ք ե գ  
ե ր կ ր ս ա գ ու  
թ ի ն ' ո 'վ  
ա ս տ ու ա ծ ա կ ի ի  
Ս ո ռ ք Ն շ ա ն ,  
ք ե գ ի գ մ ա յ



Վանա լիճ, Սբ. Խաչ եկեղի

լ ու մ ն ' ո 'վ  
ժ ա յ ո խ ո Ր ի ղ ա տ ո Ր , ժ ա յ ո , որ յ Վ ի ղ ա յ կ ը կ ե ն ա յ մ Ր ի  
կ ա ջ հ ր ա մ ա ն ա տ ու ն , ու Ր յ ո ս ի ն ն ու  
ա ս տ ո ղ ու ը ծ ո Վ ը ի ջ ն ա լ ու ն  
եւ ծ ո Վ է ն ե լ լ ա լ ու ն կ ը  
հ ա ն գ զ ի ն գ ո Վ ա ս ու ն , ու Ր  
Ա Ր ու ս ե ա կ ն ի Ր  
ք ո ղ կ ը ձ գ է , եւ  
ա ր ե գ ա կ ն ի Ր  
պ ա տ մ ու ծ ա ն կ 'ա ր կ ա ն  
ն է ի Ր ի կ ու ն  
եւ առ ա ու տ ու ն : Վ ա ' յ ր  
ա ն ն մ ա ն » :

Երրորդ անգամն էր որ նաւեցի լճափէն «դրսի տնէն» մինչեւ Աղթամար կղզի: Ծանօթ, հարազատ տեղ մըն էր, որ կը վերադառնայի, իմ' տուն դարձի յուզումն էր, ու կը նայի միւսներուն՝ որոնք տամուկ աչքերով կը վազին լեռն ի վեր, բոպէ մը առաջ գրկելու համար վանքը, քարը, նշենիները:

Մինչեւ հարսանիք՝ ժամանակ կար. իջանք հիւսիսային ափ, եւ առաջին իսկ առիթով, Աշոտին հետ կատարեցինք ուխտ մը՝ Սեւանէն, Արագածի «Քարի լճէն» մեր շիշերով բերած ջուրը խառնեցինք Վանայ ջուրերուն. շիշերու կէսն ալ լեցուցինք Վանայ ջուրով, որպէսզի երբ Հայաստան դառնանք, Սեւան երթանք եւ այնպէս ընենք, որ Սեւանն ու Վանը զիրար գրկեն:

Ժամը 3-ին հարսանեկան թափօրը ճամբայ ելաւ վանքի հիւսիս-արեւմտեան բարձունքէն, եւ, երգով ու պարով յառաջացանք դէպի եկեղեցի: Անհուն ուրախութիւն մը պատեր էր զիս: Փառիկը Կոմիտաս վարդապետի հարսանեկան երգերու շարքը հնչեցուց. Ալեքն ու Վարօն՝ մանտոլին եւ դուդուկ, պահ մը յետոյ՝ երբ հարսերն ու փեսաները հասեր էին եկեղեցույ դուռը՝ Սէյրանը «Նոր ծաղիկ պայծայ ցուցաւ» երգը՝ զոր, թորոնթոյի մեր ծխականները գիտեն, թէ որքան կը սիրեն:

Արարողութիւնը կատարուեցաւ ըստ պատշաճի. Հռիփսիմէի եւ Վոլոդիայի կնքահայրը Դոքթ. Հրանդ Մարգարեանն էր, Աշոտի եւ Լուսինէի քաւորը Դոքթ. Էդիկ Դանիլեանը: Ամեն մարդ դէր մը ունէր – քաւորկին, հարսնա-

քաւոր, երկու վարորդներն ալ՝ հաւատարիմ կերպով բռնած էին շաքարի եւ գինիի սկուտեղները: Հրաշալի օր մըն էր, եւ, իմ կատարած հարիւրաւոր պասկներուն էն շքեղը, էն փառաւորը: Արարողութեան աւարտին՝ դառնալով երկու զոյգերուն՝ յատկապէս շէշտեցի. «Դուք՝ սովետական կարգերու ներքեւ, շատ հաւանաբար օրուան պայմաններուն հետեւելով՝ «զագախ» մէջ էիք արձանագրուած, եւ Աստուած ձեզ օրհնած է գաւակներով: Բայց՝ ահա այսօր, Աստուծոյ ողորմութեամբ, դուք փափաքեցաք ձեր ամուսնական ուխտը վերանորոգել եւ վստահ եմ՝ յետ այսօրիկ աւելի երջանիկ ու աւելի բախտաւոր պիտի ըլլաք: Բայց անկախ ձեր պակէն՝ այսօր ուրիշ խորհուրդ մըն ալ կայ. հարիւր տարուան որբութենէ յետոյ՝ այս եկեղեցին ինք ալ հարսնացաւ, մեր հետ երջանիկ են եւ ուրախ պատերէն նայող սուրբերը, Առաքեալները, Տիրամայրը: Քարերը: Քարերն անգամ կը խայտան այսօր ձեզմով: Օրհնեալ ըլլաք»:

Պսակի աւարտին՝ աւանդական խրախճանք, երգ ու պար: Յանկարծ աչքիս կը զարնէ Ռեճեպը: Նոր են ծանօթացեր: Մեր նաւակարն է, հայ է, հայ են իր հայրը, մայրը, մեծ հայրը: Ինք կը փափաքի Հայաստան գալ եւ հայ աղջիկ մը առնել: Քանի՞ քանի Ռեճեպներ կան: Աստուած բոլորին ալ մու-



Վանա լճի ջուրը խառնվում է Սևանին

ր ա զ ը տ ա յ ,  
բ ո լ լ ո Ր ն ա լ  
լ լ Ս է ն ի Ր  
ե ն ց ա Ր  
ե ա ն  
կ ա ն ջ ը :

Դ է պ ի  
լ ճ ա փ  
վ ե  
ր ա  
դ ա  
ր ձ ը  
ա յ  
ն ք  
ա ն  
ա լ  
ու  
ր ա  
խ  
չ է .  
մ ի  
շ տ  
ա լ  
այ  
ս պ  
է  
եղ  
ած  
է :  
Ե շ մ ա Ր -

տութեան բոպէն ի վերջոյ կու գայ, եւ ահա... Աղթամարայ Սուրբ Խաչ վանքը լքելու տրտմութիւնը կը պատէ մեզ: Ես քիչ մը աւելի «փորձառու» եմ, կը փորձեմ երգեր երգել տալ: «Տէլ եաման»ը կը յաջողի: Հրանդէն կը խնդրեն, որ «Հայրիկ, Հայրիկ»ը երգէ. կը մերժէ. չի կրնար. դեռ նոյն առաւօտեան՝ իր ֆիտայի հօր գիւղն էր եղած, Շուշանց: Սէյրանին կը դառնամ: Միշտ հաճոյակատար, միշտ ազնիւ եւ մաքուր ջուրի պէս անարատ Սէյրանը ինք ալ կը մերժէ: «Սրբազան, չե՛մ կարող»: Չա՛յնը քաշուած էր, ո՛չ, հազար անգամ ո՛չ: Սէյրանին ուրեմն դեռ չէի ճանչցած: Եւ տեսայ, որ այդ մեծ պատանին կու լար ու վստահ եմ, Սէյրանի արցունքը Վանայ լճի ջուրերէն աւելի դառն էր ու աղի:


### Մեսրոպ արք. Աշնյանի հուշերը տպագրութեան պատրաստեց ՀՈՒՎԻԿ ՄՎԿՏՉՅԱՆԸ



Աղթամար



Սիփան



Աշխատանքները՝  
Գագիկ Խաչատրյանի,  
հարցազրույցը՝ էջ 22-23-ում: